ԷՋՄԻԱԾԻՆ

1983

Բ-Գ

Ամ/146



ԽԱ

ՏԱՐԻ



ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Վիեննա - Մոսկվա

1983



ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ Տ. ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՆԵՐՍԷՍԵԱՆԻՆ
ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴԻՆ ԱՐԱՐԱՏԵԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ
ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ԵՐԵՒԱՆ

Բարին Աստուած միշտ Իր սուրբ հովանու տակ անշարժ ու ծաղկեալ է պահպանում հայրապետական պատմական Աթոռը Արարատեան, իւր եկեղեցիներով, հոգևոր սպասաւորներով ու հաւատացեալ ժողովրդով:

Այսօր երջանիկ ենք սոյն Մեր հայրապետական կոնդակով ընթացք տալու Մայր Աթոռիս Գերագոյն Հոգևոր Խորհրդի 11 Մարտ 1983 թուականի նիստում արձանագրուած առաջադրանքին և Ձեզ նշանակելու առաջնորդական փոխանորդ Արարատեան տիրախնամ թեմի, սկսեալ 1983 թուի Ապրիլի 1-ից, ի գնահատումն Ձեր աւելի քան երկու տարիների անձնուէր ծառայութեանց նոյն թեմում, վստահ լինելով, որ Ձեր նոր պաշտօնում պիտի շարունակէք Ձեր եկեղեցաշէն գործունէութիւնը, Ձեր անձը բնորոշող հոգևոր եռանդով և պատասխանատուութեան գիտակցութեամբ:

Վստահ ենք նաև, որ Արարատեան թեմի քահանայից դասը, եկեղեցեաց վարչական մարմիններն ու պաշտօնեաները միշտ իրենց կոչումին հաւատարիմ, իրենց պարտքը պիտի կատարեն սիրով ու կարգապահութեամբ, Ձեր առաջնորդութեան ներքև:

Թող Տէրը անսասան պահպանէ մեր առաքելական Մայր Եկեղեցին և հայրապետական թեմը Արարատեան աշխարհի:

Թող Տէրը Ձեզ պարգևի շնորհները Իր Սուրբ Հոգու և գործելու անսպառ կորով, որպէսզի միշտ յաջողութեամբ պսակուեն Ձեր հոգեշէն ծրագրերը:

Սուրբ Էջմիածնից, Մեր սրտից յղում ենք Ձեզ, հոգեշնորհ հայր սուրբ, Մեր հայրական սէրը, Մեր գնահատանքը և Մեր օրհնութիւնը:

«Փութասջիր կանձն քո ընտիր կացուցանել առաջի Աստուծոյ, մշակ առանց ամօթոյ ուղիղ համառօտել զբանն ճշմարտութեան» (Բ Տիմ. Բ 15): Ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 21 Մարտի
1983 Փրկչական ամի.
եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԲ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1182





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ Տ. ԳՐԻԳՈՐԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԻԲՐԵՎ ԱՐԳԵՆՏԻՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԳՐԻԳՈՐԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԲՈՒՆԻԱԹԵԱՆԻՆ ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ

Մեծ է մեր մխիթարութիւնը, որ բարին Աստուած հաստատուն և ծաղկեալ է պահպանում մեր առաքելական Մայր Եկեղեցին և հաւատացեալ վաւակները ավգիս հայոց, թէ ի Հայաստան և թէ ի սփիւռս աշխարհի:

Մեկ համար հոգեկան մխիթարութիւն է նաև, որ Արգենտինեան մեծ երկրի տարածքի վրայ և յատկապէս մայրաքաղաք Պուէնոս Այրէսում մեր ժողովրդի վաւակները աստուածահաճոյ իրենց գործունէութեամբ, շէն ու պայծառ են պահում իրենց աղօթքի Տուներն ու կրթական ու մշակութային հաստատութիւնները, մնալով հաւատարիմ ու օրինապահ քաղաքացիները իրենց հիւրընկալող հոգատար երկրի՝ քրիստոսասէր Արգենտինայի:

Հրճուանքով հաստատելով այս իրողութիւնը և գնահատելով վերջին երկու տարիների ընթացքում Ձեր ոգեշունչ ու եռանդաշատ աշխատանքը ի գլուխ Արգենտինայի Հայ Առաքելական Եկեղեցու համայնքային և թեմական կազմակերպութեանց, այլև ընդառաջելով թեմիդ կեդրոնական պատուարժան վարչութեան դիմումնագրին, որով հաղորդուել էր Մեզ, թէ ընտրուած էք առաջնորդ տիրախնամ թեմիդ յԱրգենտինա, այսու Մեր կոնդակով, օրհնութեամբ հաստատում ենք Ձեր ընտրութիւնը Մեր հայրապետական վճիռով, մաղթելով Ձեզ մշտանորոգ հոգևոր կորով ու ներշնչանք, որպէսզի Ձեր շատ պատասխանատու պաշտօնը ի կատար ածէք ամուր հաւատքով, իմաստութեամբ և նուիրու-

մով, համերաշխօրէն գործակցելով ձեր եկեղեցական թեմական վարչական իշխանութեանց, եկեղեցու հոգևոր սպասաւորների և հայ համայնքիդ կրթական, մշակութային ու բարեսիրական կազմակերպութիւնների հետ, որոնց բոլորին, նաև հայ մամուլին, Մենք հայրական հրաւէր ենք կարդում, շրջապատել Ձեզ սիրով ու յարգանքով և օգնական հանդիսանալ Ձեզ, ի կենսագործումն Ձեր եկեղեցաշէն ու ազգանուէր ծրագրերի:

Մեր իղձն է ու Մեր սպասումը, որ Ձեր առաջնորդութեան ներքոյ, մի նոր էջ բացուի Արգենտինայի հայոց եկեղեցական և կրթական կեանքում, համաժողովրդական միասնութեան և բոլոր մեր հաւատացեալների խաղաղ ու շինարար գործակցութեան պայմաններում:

Հայոց քրիստոնէական հաւատքի պատմական կեդրոն Սուրբ Էջմիածնի կամարների տակ ծնկաչոք Մենք միշտ պիտի մնանք աղօթող տիրախնամ թեմիդ եկեղեցեաց և հաւատացեալ ժողովրդիդ բարօրութեան և Ձեր հոգեշէն ծրագրերի իրականացման համար:

Արդ, սիրելի հայր սուրբ, «Հսկեցէք, հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք: Ամենայն ինչ ձեր սիրով եղիցի» (Ա Կորնթ. ԺԶ 14): Ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 25 Մարտի
1983 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԲ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1183

Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ (10 փետրվարի 1983 թ.)

Ուրախ եմ շատ, որ նորից մասնակցում եմ այս հանդիսությանը և բերում Իմ օրհնությունը ձեզ բոլորիդ:

Մենք՝ հայերս, Վարդանանց հիշատակը տոնախմբելիս ընդհանրապես շեշտը դնում ենք անցյալի վրա և քիչ անգամներ կամ ոչ բավարար չափով այդ անցյալից գալիս ենք դեպի մեր ներկան, ինչ որ Ես անհրաժեշտ եմ նկատում:

Հիրավի, նման առիթներով, մեր առաջ դրվում է՝ անցյալի ու ներկայի միջև հարաբերության հարցը: Ամեն անգամ, երբ խոսելու ենք անցյալի ու ներկայի միջև հարաբերություն ստեղծելու մասին, պետք է ուշադիր լինենք, որ մեր դատումների, մեր ապրումների մեջ ո՛չ ներկան անտեսի անցյալի ժառանգությունը, և ո՛չ էլ անցյալը կղկիացած մնա ու անհաղորդ ներկայի հետ:

Անցյալի ժառանգությունը պատմականորեն կազմավորված, ամրապնդված այն ոգեկան պատվանդանն է, որի վրա հենվում է տվյալ մի ժողովուրդ, և որի արմատներից նա տևապես ավիշ ու սնունդ է ստանում: Անցյալի ժառանգությունը այն ոգեկան ուժականությունն է, որ ներկայի վրայով ապագայի դռներն է բացում:

Անցյալը մոռացության տված մի ժողովուրդ նմանվում է մի մարդու, որ կորցրել է իր հիշողությունը:

Սակայն ճշմարիտ է նաև այն, որ երբ մի ժողովուրդ կանգնած է մնում անցյալի ժառանգության վրա առանց ներկան լիությամբ ու ստեղծագործորեն ապրելու, առանց նոր խոսք ասելու, առանց նոր արժեքներ ստեղծելու նոր ժամանակների տարակով, այդ ժողովրդի առաջ փակվում են դեպի ապագա տանող դռները: Ինչքան էլ հարուստ եղած լինի տվյալ ժողովրդի անցյալի ժառանգությունը, այն դառնում է թանգարանի առարկա:

Վերջերս մի գիրք կարդացի ռումիներեն թարգմանությամբ, ուր հեղինակը նման հարցերի մասին խորհրդածելով՝ ասում է. «Անցյալը հզոր մի ուժ է այն ժամանակ միայն, երբ դու նրան տիրապետում ես, բայց դառնում է ծանր բեռ, երբ նա է քեզ տիրապետում»: Հատկանշական է, որ այս դատողության հեղինակը հոյն ժողովրդի զավակ է, մի ժողովուրդ, որի անցյալի ժառանգությունը իրապես հարուստ և փառավոր է ավելի, քան որևէ այլ ժողովրդինը: Հեղինակի անունն է Կոնստանդին Ցեցիս, մեր օրերի ծանոթ մտածող, գրող և հասարակական գործիչ մի անձնավորություն:

Այսպիսի հարցի առաջ կանգնած ենք նաև մենք այսօր, երբ հիշատակն ենք ոգեկոչում Ավարայրի հերոսների: Հարց տանք ուրեմն՝ մենք այսօր ի՞նչը կարող ենք նկատել իբրև մնայուն ժառանգություն Վարդանանց հերոսամարտից: Կարծում եմ այս հարցի պատասխանը տալիս է ինքը՝ Մամիկոնյան Վարդանը: Նա իջավ պատերազմի դաշտ և զոհվեց: Ի՞նչ բանի համար զոհվեց: Վարդան Մամիկոնյանը զոհվեց պաշտպանելու համար իր մեծ հոր թարգմանած Գիրքը և իր հայրենի հողը: Աստվածաշունչը այն ժամանակ, ինչպես և այսօր, խորհրդանշում է նախ կրոնական հավատը մեր ժողովրդի, երկրորդ՝ մեր մայրենի լեզուն և ազգային ինքնագիտակցությունը: Հիրավի, քրիստոնեության դարձով, հայ տառերի գյուտով ու Աստվածաշնչի թարգմանությամբ, վերջնապես արմատավորվեց նոր հավատքը հայոց մեջ, վերջնապես ձևավորվեց հայերեն լեզուն, սկիզբ առավ ազգային գրականությունը և շաղախվեց, մարմին ու ձև ստացավ Հայաստանի բնակչության գիտակցությունը իբրև միավորված մեկ ազգություն:

Այսպես է, որ Հայաստանը դարձավ հայրենիքը ամենայն հայոց: Այսպես է, որ սաղմնավորվեց ու զարգացավ հայրենասիրության ակնիվ զգացումը մեր ժողովրդի: Այսպես է, որ Հայաստանը դարեր շարունակ մնաց մինչև այսօր աշխարհագրական ու ոգեղեն այն վեմը, որի վրա արձանագրվեց պատմությունը հայոց, և որի վրա ծլեցին ու ծաղկեցին մեր ազգային հնագիտենական արժեքները: Մեր հայրենիքը՝ Հայաստանը, մեկ համար միայն աշխարհագրական հասկացություն չէ, այլ մանավանդ մեր ազգի կյանքի և ոգեկանության ծննդավայրը և պատմական բնակավայրը, հացով ու լույսով մեզ սնուցանող Մայրը: Դրա համար մեր երկիրը մենք կոչում ենք Մայր Հայաստան:

Վարդան Մամիկոնյանը զոհվեց, այո՛, այդ Մայր հողի և հայերենի թարգմանված մեծ Գրքի համար:

Ահա Իմ կարծիքով այն հիմնականը և մնայունը, որ անցյալից է գալիս մեզ և որ մենք գնահատում ու արժևորում ենք մեր օրերի պայմաններում: Այսպես է, որ կարող ենք գտնել ուղիղ հարաբերությունը անցյալի ու ներկայի միջև:

Անդրադառնալով վերոհիշյալ հեղինակի դատողությանը, տիրապետել անցյալին, կնշանակի ուրեմն նախ լավ ճանաչել անցյալը, հստակ և ուղիղ գնահատել դեպքերը առանց տուրք տալու իդեալականացման հակումներին, որոնք երբեմն մշուշի մեջ են թողնում պատմական ճշմարտությունները: Այսպես ճանաչելով ու գնահատելով անցյալը, պետք է այն այժմեացնել ու վերարժևորել

մեր օրերի պայմաններում: Այսպիսով, կարծում եմ, անցյալը կդառնա հզոր ուժ ներկայի համար: Եվ ներկայի վրայով անցյալը կկապվի նաև ապագայի հետ, ներկան հանդիսանալով կամուրջ անցյալի ու գալիքի միջև:

Ի՞նչ է ներկայացնում մեր ներկան:

Հայ ժողովրդի ներկան նախ և առաջ մեր Մայր երկիրն է, մեր օրերի հարատև աճող ու ծաղկող Հայաստանը՝ իր երեք միլիոն ժողովրդով, իր պատմական իրագործումներով, իր նորաստեղծ արժեքներով, իր նոր լույսերով ու նոր երակներով, անվտանգության և խաղաղության պայմաններում: Հետևաբար, վերագնահատել այսօր Ավարայրի ճակատամարտը, նշնակում է պատմական այդ հերոսամարտի հիշատակը արժևորել, իմաստավորել ի խնդիր արդի Հայաստանի էլ ավելի ամրապնդման, էլ ավելի ծաղկման, էլ ավելի հզորացման: Հայրենական պատերազմի մարտերում հայ զինվորները հերոսացան՝ Կարմիր Վարդանի ու Դավիթ Սասունցու տեսիլքով ոգեշնչված:

Մեր ժողովրդի ներկան նշանակում է նաև մեր օրերի հայ սփյուռքը, տարածված աշխարհով մեկ, մոտ երկու միլիոն հայությամբ, անբաժան ու անբաժանելի մասը հայաստանցի ժողովրդի: Հայ սփյուռքը պահպանել Մայր Եկեղեցու հովանու տակ՝ իր հարազատ ազգային դիմագծով, իր ինքնության գիտակցությամբ, իր մայրենի լեզվով, իր հայրենաբաղձ զգացումներով, այս ևս ահա նշանակում է արժևորումը Վարդանանց հիշատակի:

Մեր ներկան է նաև Հայաստանյայց Առաքելական մեր Եկեղեցին՝ իր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով, արտասահմանում գործող նվիրապետական իր երեք Աթոռներով և թեմական-համայնքային կազմակերպություններով: Եվ մեր առաջ դրված խնդիրն է ամրապնդումը մեր Եկեղեցու ներքին միության և գործակցության Սուրբ Էջմիածնի օրհնության ներքո, հառավել շինություն մեր ժողովրդի հոգևոր կյանքի ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Շեն և պայծառ պահել մեր Մայր Եկեղեցին իր հոգևոր, կրթական ու ազգային առաքելության ուղիղ ճանապարհի վրա, ահա ևս մի բախտորոշ դրսևորում Վարդանանց նահատակության խորհրդի վերարժևորման, մեր օրերում:

Ավարայրի պատմությունը ոգեկոչել առանց առնչվելու ներկա Հայաստանի խաղաղ ու անվտանգ իրականության հետ, առանց առնչվելու հայրենի ազգային դպրության ու մշակութային ծաղկյալ կյանքի ու նորաստեղծ կոթողային արժեքների հետ, առանց առնչվելու հայրենի հողի վրա զարգացող եկեղեցաշեն կյանքի և Սուրբ Էջմիածնի առաքելության հետ, պիտի նշանակեր Վարդանանց հիշատակը զրկել այժմեությունից և արժևորումից: Հույն մտածողի խոսքերով՝ պիտի նշանակեր «անցյալը վերածել ծանր բեռի», որին չենք կարող տիրապետել այսօր:

Ահա այն, ինչ Ես կամենում եմ ձեզ ներկայացնել իբրև խորհրդածության առարկա:

Օրհնությո՛ւն Վարդանանց սուրբ հերոսների հիշատակին:

Օրհնությո՛ւն մեր վերածնված ժողովրդին ու նրա Մայր Հայրենիքին:



Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԱԹՈՌԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ՝ ԱՆԹԻԼԻԱՍԻ ԱԹՈՌԻ ԳԱՀԱԿԱԼ ԽՈՐԵՆ Ա-Ի ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Խոր վշտով Ձերդ Սրբության կիսաղորդենք սրտի կաթվածի հետևանքով անակնկալ վախճանումը Մեծի Տանն Կիլիկիո սիրելի կաթողիկոս Խորեն Ա-ի, Անթիլիասի իր բնակարանին մեջ:

Թաղման կարգը պիտի կատարվի Անթիլիասի Մայր տաճարին մեջ, երեքշաբթի, 15 փետրվարին, առավոտյան ժամը 11-ին:

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱԹՈՌԱԿԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Անթիլիաս,
10 փետրվարի 1983 թ.

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Բ-ԻՆ

Անթիլիաս—Լիբանան

Վշտալի սրտով մասնակցում ենք Ձեր սուգին և աղոթում, որ բարին Աստված քաղցրությամբ ընդունի հոգնաբեկ հոգին Նորին Սրբություն Խորեն կաթողիկոսի և արժանացնի նրան երկնային արքայության: «Խորհուրդ մարմնոյ մահ է և խորհուրդ հոգւոյն կեանք և խաղաղութիւն»:

Լույս և խունկ ի Տեր հանգուցյալ Խորեն Հայրապետի հիշատակին:

Երկնավոր Հայրը մեր բարեգութ թող մխիթարի Ձեզ և Աթոռիդ միաբանությունը Սուրբ Հոգով և անսասան պահպանի պատմական Տունը Հայոց Կիլիկիո:

Կիրակի, հանդիսավոր պատարագ և հոգեհանգիստ Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում Մեր նախագահությամբ:

Այս տխուր առիթով ընդունեցեք Մեր եղբայրական սիրո հավաստին:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
11 փետրվարի 1983 թ.

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Բ-ԻՆ

Անթիլիաս—Լիբանան

Հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության ընդունեցեք մեր խորին ցավակցությունները Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Խորեն Ա-ի անժամանակ վախճանման առթիվ:

Թող բարին Աստված ողորմությամբ ընդունի նրա հոգին լուսեղեն խորաններուն մեջ, և Սուրբ Հոգին մխիթարե Ձերդ Սրբությունը և Սուրբ Աթոռիդ ողջ միաբանությունը:

ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱԼՅԱՆ
ԴԻՎԱՆԱՊԵՏ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
12 փետրվարի 1983 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Կաթողիկոսարան հայոց, Անթիլիաս—Լիբանան

Ամենայն Հայոց Հայրապետի բարձր նախագահությամբ, այսօր, կիրակի, Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում, խուռներամ բազմությամբ հանդիսավոր սուրբ պատարագ մատուցվեց և հոգեհանգստյան պաշտոն կատարվեց հոգվո հանգստյան և լուսավորության համար նորոգ ի Տեր հանգուցյալ Տ. Տ. Խորեն Ա Տանն Կիլիկիո կաթողիկոսի:

Վեհափառ Վազգեն Ա կաթողիկոսը հուզիչ խոսքով ոգեկոչեց հիշատակը հանգուցյալ Հայրապետի և աղոթեց, որ Տերը անշարժ և ծաղկյալ պահի Կիլիկյան Հայոց Աթոռը: Բոլորս հայցում ենք Ձերդ Սրբության և Աթոռիդ միաբանության Սուրբ Հոգու մխիթարություն. ամեն:

ՀՈՒՍԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՆԹՈՒՐՅԱՆ
ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ

Ս. Էջմիածին,
13 փետրվարի 1983 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին—Երևան

Խորապես ապդված ենք Ձեր վշտակցության ջերմ զգացումներուն համար երանաշնորհ Խորեն Առաջին կաթողիկոսի վախճանման և թաղման տխուր

առիթով: Ձեր աղոթքը ու խոսքը Սուրբ Էջմիածնի Մայր տաճարին մեջ հոգեկան մխիթարության աղբյուր եղավ մեկի, մեր միաբանության, Ազգային Կեդրոնական Վարչության և մեր համայն հավատացյալ հայ ժողովրդյան համար:

Երուսաղեմի միաբանութենեն պատրիարքական փոխանորդ Կյուրեղ եպիսկոպոսի մասնակցությունը օծման և թաղման արարողությանց և իր խոսքը հանուն Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռի և Երուսաղեմի Պատրիարքության, ջերմորեն գնահատվեցան մեր բոլորի կողմե: Կաղոթենք, որ Աստված հարցն մերոց Ձերդ Սրբության պարգևե երկար կյանք կատարյալ ողջությամբ և երջանիկ գահակալությամբ ի բարգավաճումն Սուրբ Էջմիածնի և համայն Հայ Եկեղեցվո:

Թող բարին Աստված երկնային խաղաղության մեջ հանգչեցնե սիրելի Խորեն Վեհափառի հոգին և անսասան ու ծաղկյալ պահե Հայ Եկեղեցին ի սփյուռս աշխարհի:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

Անթիլիաս,
17 փետրվարի 1933 թ.





ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

«Նորահիրաշ պսակաւոր և պօրագլուխ առաքինեաց, վառեցար վինու հոգւոյն արիաբար ընդդէմ մահու. Վարդան քաջ նահատակ, որ վանեցեր պթշնամին, վարդագոյն արեամբ քով պսակեցեր վեկեղեցին»:

Այս խոսքերով է սկսվում այն գեղեցիկ շարականը, որ Ս. Ներսես Շնորհալի հայրապետը ձոնել է Վարդանանց հիշատակին, ազգային-եկեղեցական այն տոնին, որ ամեն տարի մեծ շուքով նշում է Հայաստանյայց Եկեղեցին:

Դարեր են անցել Վարդանանց մղած ճակատամարտից, բայց նա անմար ջահի նման հեռավոր անցյալի խորքից լուսավորում է մեր ժողովրդի անցած պատմական ուղին և ջերմ ու հուզիչ զգացմունքներով լցնում ամեն մի հայ քրիստոնյայի սիրտն ու հոգին:

Փետրվարի 10, հինգշաբթի:

Այսօր Մայր տաճարում, առավոտյան հանդիսավոր ժամերգությունից հետո. Ավագ խորանի վրա մատուցվում է ս. պատարագ՝ նվիրված «Սրբոց Վարդանանց պօրավարացն մերոց՝ հպար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմի»:

Այսօր միաժամանակ նշվում է նաև Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անվանակոչության տարեդարձը:

Մայր տաճարը լցված է հավատացյալների հոծ բազմությամբ:

Օրվա պատարագիչն է հոգևոր ճեմարանի փոխտեսուչ Տ. Հայկազն աբեղա Նաջարյանը: Դպրաց բաժնի երգեցողությունը կատարում է հոգևոր ճեմարանի ուսանողների երգչախումբը:

Ժամը 11.30-ին եկեղեցական թափորով Մայր տաճար է առաջնորդվում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Ս. պատարագի արարողությունից հետո պատարագիչ հայր սուրբը Իշման ս. սեղանից արտասանում է Վարդանանց և Ղևոնդյանց հիշատակին նվիրված հետևյալ ոգեշունչ քարոզը.

«Յանուն հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

«Քանզի հաստատեալ եմ՝ եթէ ոչ մահ և ոչ կեանք, և ոչ հրեշտակք և ոչ իշխանու-

թիւնք ... և ոչ այլ ինչ արարած կարէ մեկնել զմեզ ի սիրոյ անտի Աստուծոյ...» (Հռոմ. Ը 38—39):

«Զի լաւ լիցի մեզ մեռանել ի պատերազմի, քան տեսանել զչարչարանս ազգի մերոյ և սրբութեանցն մերոց» (Ա Մակ. Գ 59):

«Եթէ հասեալ իցէ ժամանակ մեր՝ մեռցուք քաջութեամբ ի վերայ եղբարց մերոց և ոչ խառնեսցուք զանուն վատութեան ընդ արութիւնս քաջութեան» (Ա Մակ. Թ 10):

Սիրելի հավատացյալներ,

Այս երեք հատվածները վերցված են Աստվածաշնչից: Առաջինը Պողոս Առաքյալի թղթից է, իսկ մյուս երկուսը՝ Մակաբայեցվոց գրքից: Այս երեք իմաստալից խոսքերից է, որ մեծ Եղիշե պատմիչը ներշնչվել և գրել է իր «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկը: Հասկանալու համար Եղիշեին, հասկանալու համար Վարդանանց ոգին, պետք է ըմբռնել և հասկանալ Աստվածաշունչը: Եթե մի կողմ թողնենք կրոնական, հոգեկան այն մղիչ ուժը, որ հայտնվեց Վարդանանց, ապա Ավարայրի ճակատամարտը մի փոքր դեպք է հայ ժողովրդի պատմության մեջ, որտեղ երկու ուժեր, հայերը՝ փոքր բանակով, և պարսիկները՝ մեծ բանակով, իրար դեմ էին ելել: Թեև հայերը քաջությամբ էին կռվում, բայց պարզ է, որ մեծ ուժի առջև տեղի տալով պիտի պարտվեին:

Վարդանանց պատերազմը պետք է դիտել իր ժամանակաշրջանի տեսանկյունից: Պատմությունը եղելությունների մի շղթա է, որտեղ ոչ մի դեպք չի կարելի հասկանալ և իմաստավորել պատմության ընթացքից առանձնացվելով: Վարդանանց պատերազմը Ավարայրի դաշտում կազմում է հայ պատմության ոսկե շղթայի օղակներից մեկը: Ճիշտ է, որ քրիստոնեությունն սկսեց տարածվել Հայաստանում դեռևս առաջին դարում: Ճիշտ է, որ Դ դարում հայ ժողովուրդը, առաջինը լինելով քրիստոնեական պատմության մեջ, քրիստոնեությունը դարձրեց իր պետական կրոնը: Սակայն Դ դարը մի տեսակ պայքարի և հաստատման ժամանակաշրջան եղավ քրիստոնեության համար, որպեսզի այն տեղ գտնի հայ հոգու և հայ մտքի մեջ:

Մոտավորապես 240-ական թվականներին պարսից գահի վրա էին Սասանյանները, որոնք ոխերիմ թշնամիները դարձան հայկական պարթևական թագավորության: Շուրջ հիսուն տարի նրանք պայքարեցին թուլացնելու համար հայկական պարթևական թագավորությունը, որպեսզի այն ենթարկեին իրենց կենտրոնական իշխանությանը:

Մինչև քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելը, Հայաստանը Պարսկաստանի դեմ հիսուն տարվա մաքառման մի շրջան էր անցկացրել: Հայ ժողովուրդը շարունակեց իր այդ պայքարը նաև քրիստոնեության դրոշի տակ: Շատերը կարծում են, թե հայերը քրիստոնեությունն ընդունելով մի մեծ սխալ գործեցին, որովհետև քրիստոնեությունը քարոզում է խաղաղություն և թե այդ պատճառով հայերը վայր դրեցին իրենց զենքը: Հայ ղեկավարները արդեն Դ դարի վերջին զգում էին գալիք այն մեծ արհավիրքը, որ դամոկլյան սրի պես կախվել էր հայ ժողովրդի գլխին:

Եվ ահա երեք անձինք՝ Սահակ Պարթևը՝ Գրիգոր Լուսավորչի տան վերջին արժանավոր ներկայացուցիչը, Վռամշապուհ թագավորը՝ Արշակունյաց թագավորության ամենասպայծառ դեմքը, և Մեսրոպ Մաշտոցը՝ հայ ժողովրդի ծոցից ծնված մեծ լուսավորիչը, մտածում էին, «երկինք և երկիր իրար խառնում», որպեսզի գտնեն մի այնպիսի ուժ, որի վրա հենվելով՝ հայ ազգը կարողանար փրկվել իր այդ տկար ռազմական վիճակով: Եվ ահա «երկինք և երկիր իրար խառնելով», Մեսրոպ Մաշտոցը տվեց հայ ժողովրդին իր 36 տառերը: Այդ տառերը պիտի դառնային ինքնապաշտպանության այն հզոր ուժը, որով հայ ժողովուրդը երկար դարեր պիտի կարողանար իր ինքնությունը պահել և գնալ դեպի հավիտենականություն: Պարսիկները, երբ Հավկերտ թագավորի օրոք կրոնափոխության հրովարտակ ուղարկեցին հայերին, արդեն ավելի քան հիսուն տարով ուշացրել էին հայ ժողովրդին իր հավատից, իր էությունից՝ խախտելու և պարսիկ մազդեզական կրոնին դարձնելու համար: Այնպես որ, երբ Վարդան Մամիկոնյանը և հայ նախարարները ժողով գումարեցին Արտաշատի մեջ և որոշեցին պատասխան գրել Հավկերտ թագավորին, երբ նրանք իրենց ստորագրությունները և կնիքն էին դնում հրովարտակի պատասխանի տակ, արդեն իսկ այդ պահին Ավարայրը հաստակ էր նրանց համար. ավելին, նրանք մահից էլ այն կողմ էին անցել և պատրաստ էին դիմավորելու Ավարայրը անվախորեն: Վստահ եմ, որ Ավարայրի գիշերը Վարդան սորավարը հիշեց իր Մեծ Հորը՝ Սահակ պարթևին, հիշեց այն ալեհեր ծերունուն, որի ծնկների վրա նա մեծացել էր, որից լսել էր Աստվածաշնչի պատմությունները: Եվ Վարդան Մամիկոնյանն ինքը դարձել էր մարգարե և ամբողջ գիշեր, կիսաքուն, ոգևորում էր Հայոց բանակը մարգարեական շնչով՝ մեջ բերելով մակաբայեցիների քաջությունը և արիությունը: Եվ այս դեպքում է, որ իսկապես կարելի է ասել՝ «զի լաւ է մեռանել ի պատերազմի, քան տեսանել զչարչարանս ազգի մերոյ և սրբութեանց մերոց»: Այնտեղ, Ավարայրի դաշտում, երկու բանակներ կային:

Պարսից բանակը չէր եկել Հայաստանը գրավելու, քանի որ այն արդեն իրն էր: Նա եկել էր հայ հոգին գրավելու: Հայ հոգին, սակայն, հայ ժողովրդի սրբությունն էր, և այդ սրբությունը ոչ մեկը չէր կարող գրավել, միայն Աստծուն էր այն նվիրված: Եվ ահա հայ մարտիկները իջան դաշտ՝ մոռացած նույնիսկ պատերազմի իրողությունը: Վարդանն իր հավար երեսունվեց վկաներով խոյանում էր թշնամու վրա՝ մոռացած պատերազմական արվեստի բոլոր նրբությունները, նա անձնազոհորեն մտնում էր բանակի մեջ, որովհետև նա գնում էր դեպի ապագան:

Վարդանն իր 1036 վկաներով ընկավ Ավարայրի դաշտում, սակայն, ինչպես ասացինք, նա նախօրոք գիտեր այն փորձությունը, որից պիտի անցներ ինքը: Եվ այն երեքը՝ Ս. Սահակը, Ս. Մեսրոպը և Վռամշապուհ արքան, վստահ եմ, որ երկնքից դիտում էին այդ ահեղ մարտը, այն առաջին լուրջ վտանգը, որը նժարի վրա էր դնում հայ մշակույթը, հայ ժողովրդի բախտը: Այդ ահեղ պահին նրանք տեսան, թե ինչպես իրենց աշխատանքը իզուր չէր անցել և թե ինչպես կրակի միջով անցնելով՝ Վարդանանք և նրանց ընկերները առավել ևս ամրացրին հայ ոգին և հայ ժողովրդին պատրաստեցին հավիտենականության համար:

Դարեր անցան: Հայ ժողովուրդը ունեցավ իր առավել տխուր օրերը, սակայն Վարդանանք մնացին հայ պատմության մեջ իբրև ներշնչող ու ոգևորող ուղենիշ օրինակ: Ամեն անգամ, երբ հայերը զգացին, թե օրհասական ժամի մեջ են, նրանք ուժ և եռանդ ստացան նրանցից՝ մեր այդ առաջին նահատակներից: Վարդանանց պատերազմը շարունակվեց դարեր շարունակ, տարբեր դրսևորումներով:

Եվ ահա հասավ Ի դարի սկիզբը, երբ օտար ուժեր, չար ուժեր կրկին անգամ հավաքվել էին մեր ժողովրդի գլխին և ուզում էին վերջ տալ նրա գարությանը: Ինչպես մարդ ծնվում, մեծանում և մահանում է, այնպես էլ ժողովուրդները կարող են նույն ճակատագրին արժանանալ: Մարդիկ կային, որոնք կարծում էին, թե մեր ժողովրդի վախճանը հասել է: Սակայն ոչ: Հայ ժողովուրդը չէր պատրաստվել մեռնելու համար: Հայ ժողովուրդը ներքին այնպիսի թաքուն ուժ ուներ, որ անծանոթ էր բոլոր չար ուժերին և թշնամիներին: Եվ ահա այդ հոգեկան ուժին ապավինած՝ Սարդարապատի ճակատամարտում հայ ժողովուրդը գնաց կռվի՝ ապրելու վճռականությամբ, գնաց, որպեսզի ապրի: Եվ ապրեց ու դիմացավ:

Այսօր, սիրելի հավատացյալներ, խաղաղ օրեր ենք ապրում և մենք մեզ շատ բախտավոր պետք է զգանք՝ նկատի ունենալով մեր պատմության ընթացքը: Վարդանանց պատերազմը այսօր էլ շարունակվում է: Այս խաղաղ կյանքում ամեն անգամ, երբ մեր երկրում մի նոր ծառ է տնկվում, ամեն անգամ, երբ մի նոր քար է ավելացվում, որպեսզի մի շենք բարձրանա, դա մի հզոր վենք է դառնում այն բոլոր չար ուժերի դեմ, որոնք կարծում էին, թե հայ ժողովրդի վախճանը հասել է: Մեր կյանքում այսօր ամեն մի լավ երևույթ ինքնին մի դափնեպսակ է՝ բերված մեր նախնիների սուրբ հիշատակին, որոնք հանձն առան մահանալ, որպեսզի մենք այսօր ապրենք և գոյատևենք: Այնքան ժամանակ, քանի դեռ Վարդանանց հոգին մեր մեջ վառ է, հայ ժողովուրդը միշտ հավիտենականության ճանապարհին կմնա, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն»:

Նույն օրը, ժամը 13-ին, Վեհարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում Վարդանանց տոնին նվիրված հանդիսություն՝ կազմակերպված հոգևոր ճեմարանի տեսչության կողմից:

Հանդիսությանը ներկա են Մայր Աթոռի միաբանությունը, Արարատյան հայրապետական թեմի քահանայից դասը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, մայրավանքի պաշտոնեությունն ու աշխատավորները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, հայրենի մտավորականության ներկայացուցիչներ, ուխտավորներ և այլ հյուրեր:

Հանդիսությանը ներկա են նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռուբեն Պարսամյանը և տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Հանդիսությունն սկսվում է Վեհափառ Հայրապետի «Հայր մեր»-ով, որից հետո հնչում է Հայկական ՍՍՀ պետական հիմնը: Բացման խոսքով հանդես է գալիս Տ. Հայկազուն աբեղա Նաջարյանը.

«Ողորմածությամբ և կամոքն Աստուծո կրկին անգամ հավաքվել ենք Միածնաէջ այս սուրբ վայրում՝ տոնախմբելու Ավարայրի դաշտում ընկած հերոսների հիշատակը: Հավաքվել ենք վերանորոգելու մեր ուխտը, մեր երդումը որպես հայեր, որպես ժառանգները մեր նախնյաց: Այս տոնախմբումը պարզ ձևականություն չէ կամ սովորական գրական կամ երաժշտական մի երեկո, այլ վերարժևորումն այն բանի, ինչ պատահեց սրանից ավելի քան 1500 տարիներ առաջ, որը այսօր էլ, մեր օրերում և մեր պայմաններում, մեծ արժեք և նշանակություն է ներկայացնում:

Ավարայրը եղավ այն փորձաքարը, որով արժեքավորվեցին նրանից առաջ և հետո եղած դեպքերը: Վարդանանց լույսի տակ նոր իմաստ ու նշանակություն են ստանում ապատատենչ Հայկ դյուցազնը, Արա Գեղեցիկը, Սասունցի Դավիթը, իսկ պատմության շըղթան երկարում է Ավարայրից մինչև Սարդարապատ, Բ համաշխարհային պատերազմ և մեր օրերը:

Աստվածաշնչից Վարդանանք ուսանել էին, որ կյանքը մարդուն տրված մեծագույն պարգևն է Աստծուց: Սակայն արժեքներ կային, որոնց համար կարելի էր զոհաբերել այդ մեծագույն պարգևը: Ապատ ապրել, ապատ լինել և այդ ապատության մեջ ամուր պահել իրենց պապերի հավատը. այս վեհ գաղափարով տոգորված՝ նրանք գիտեին, թե մահ ոչ իմացյալ մահ է, իսկ իմացյալ մահը՝ անմահություն»:

Այնուհետև Վարդանանց հերոսամարտի խորհրդին նվիրված հետևյալ խնամված բանախոսությամբ հանդես է գալիս հոգևոր ճեմարանի գրաբարի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու դոցենտ Պետրոս Բեդիրյանը:

«Ամեն տարվա նման, այսօր էլ հավաքվել ենք այստեղ՝ հարգելու Վարդանի ու Վարդանանց նահատակների հիշատակը, փառավորելու նրա՛նց անունները, ովքեր հանուն Հայրենիքի չխնայեցին մարդու համար ամենից թանկ բանը՝ կյանքն անգամ:

Հեռավոր 451-ի մայիսի 26-ի շաբաթ օրը իմացյալ մահով ընկավ նա՝ «մեր հայրենյաց հոգի Վարդանը», որի անվանը սերունդները գորովանքով կցեցին «Քաջն», «Մեծն», «Կարմիրն» մակդիրները: Տերունական օրը՝ կիրակին, բախտ չունեցան տեսնելու մեր փոքր ածուից՝ մի բուռ ժողովրդից ամբողջ հպար երեսուն և վեց այրեր, որոնք ընկան, որպեսզի Մեսրոպի սուրբ աջով վառված այն երեսուն և վեց անմար կանթեղները շարունակեն լուսավորել մեր ճանապարհը: Հպար երեսուն և վեց քաջորդիք, պիտի ասեր մատենագիրը, «եդին զանձինս իւրեանց ի վերայ հայրենեաց եւ ճշմարիտ հաւատոյն»:

—Փա՞ռք պարտվածներին:

Եվ ամեն Վարդանանցի հայ եկեղեցու կամարների տակ հնչում է Ներսես Շնորհալու «Նորահրաշը»՝ ի պատիվ «Սրբոց Վարդանանց զօրավարաց հպար երեսուն եւ վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին».

Նորահրաշ պըսակաւոր եւ զօրագլուխ
առաքինեաց,
Վառեցեր զինու հոգւոյն արիաբար ընդդէմ,
մահու,
Վարդան, քաջ նահատակ, որ վանեցեր
զթշնամին,
Վարդագոյն արեամբ քո՝ պսակեցեր
զեկեղեցին:

Իսկ նրանք, որ կոչված էին ժողովրդի հոգևոր առաջնորդը լինելու, օրհասական այն օրը «ոչ ինչ զանգիտեցին... գալ ընդ նոսին ի գործ պատերազմին. զի ոչ եթէ մարմնական համարէին զկռիւն, այլ հոգեւոր առաքինութեան. ցանկային մահակից լինել քաջ նահատակացն» (Եղիշե. «Զվախեցան գալու նրանց հետ պատերազմական գործի, քանի որ այն կռիվը ոչ թե մարմնական էին համարում, այլ հոգևոր առաքինության: Ցանկանում էին մահակից լինել քաջ նահատակներին»):

— Պատի՛վ պարտվածներին:

Քանզի «Վարդանանքը» գերդաստան չէ, տոհմ չէ: Այն ազգային ոգի է ու ջունչ: Գործունեության պատվանդան է նաև: Իբրև այդպիսին՝ Վարդանանք ճանաչում են գտել Ավարայրից անմիջապես հետո ու իբրև հայրենասեր հավաքականություն հիշվում են դեռևս Դավիթ Անհաղթի (Զ դար) ու Մովսես Կաղանկատվացու կողմից (Է դար):

Վարդանանք կռվեցին արաբական գերիշխանության դեմ՝ ջուրթներին այս խոսքերը. «Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի և մեր ազգի համար, և թող մեր աչքերը չտեսնեն մեր սրբարանների և մեր Աստուծո փառավորման վայրերի ոտից կոխան լինելն ու պղծվելը, այլ թշնամիների սուրը թող նախ և առաջ մե՛ր դեմ ուղղվի, ապա թող անեն, ինչ կկամենան: Մեր անձերը զոհենք ճշմարիտ հավատի փոխարեն և ոչ թե երկրավոր կյանքի սիրուն...» (Ղևոնդ Պատմիչ):

Եվ ինչպե՞ս չհիշես հերոս մուսալեռցու գոռ հայտարարությունը. «Ես այստեղ եմ ծնվել, այստեղ էլ կմեռնե՛մ: Թշնամու հրա՛սնով ստրուկ չե՛մ դառնա ես: Փախստական ու գաղթական չե՛մ դառնա, քանի վենք ունեմ ձեռքիս...»:

Վարդանանք կռվեցին սելջուկ-թաթարների գերիշխանության դեմ. «...(Անի) քաղաքի համար բազում օրեր կատաղի պատերազմ մղեցին... բոլոր քաղաքացիները՝ առյուծասիրտ դարձած, դիմագրավեցին այլազգիներին, որոնց զորքը, կատաղի պատերազմից ճարահատյալ, ամոթով հեռացավ» (Մատթեոս Ուռհայեցի):

Վարդանը, արդեն Աղասի անվան տակ, դյուցազնորեն կռվեց նոր պարսիկների դեմ. «Ո՛վ թուր ունի, առաջ ի՛մ գլխիս խփի, ի՛մ սիրտս խրի, ապա թե ո՛չ՝ քանի բերանումս լեզու կա, փորումս սիրտ, ես լեղապատառ ձեն կտամ. «Էդ ո՞ւմ վրա եք թուր հանել,

հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում» (Խաչատուր Աբովյան):

Վարդանանք հերոսաբար մարտնչեցին Հայրենականի ճակատներում, ընդդեմ ֆաշիզմի, հանուն նորոգ հայրենիքի ապատության, «յորում բաղումք առաքինացան քան զսակաւս». «—Նրանք կյանքը սիրեցին և կյանքի համար մեռան: Բարձր հայրենասիրական կյանքը: Նրանք հաղթեցին մահին և ահա նրանք կենդանի են» (Դերենիկ Դեմիրճյան):

— Փա՜ռք ու պատի՜վ հաղթողներին:

Եվ պատմաբանից ակնկալվում է ոչ միայն ու ոչ այնքան փաստն արձանագրել, այլև ու որքան վեր հանել այդ փաստի ներքին տրամաբանությունը, ժողովրդի մտքի ու հոգու մեջ արմատ գցած այն ավանդույթը, որ մղում է նրան ա՛յս և ոչ թե մեկ ուրիշ գործողության:

Ժամանակի երկու հսկոր բանակներին իր ուժը ցույց տված ու տիկ հանվելու գնով երկրի և թագավորի արժանապատվությունը պաշտպանած Վասակ Մամիկոնյանի անուղղակի շառավիղ, Սահակ Պարթևի թոռ Վարդան Մամիկոնյանը բնական է, որ դաստիարակված լիներ Հայկի ոգով՝ ընդդեմ Բելի, Արա Գեղեցիկի ոգով՝ ընդդեմ Շամիրամի, Տիգրանի ոգով՝ ընդդեմ Աժդահակի, կամ Արշակի ոգով՝ ընդդեմ Շապուհի... Ուրեմն Վարդանը չէ՞ր կարող չլինել, ու բարեբախտաբար եղա՛վ: Ուրեմն Վարդանն ու նրա ժողովուրդը չէ՞ին կարող ուրիշ ճանապարհ ընտրել:

«Պատմությունը կյանքի ուսուցիչն է»,— ասում էին հին հռոմեացիները:Եվ անսալով միանգամայն Մեծ Ուսուցչի դասին՝ Վարդանա՛նց ճանապարհն է ընտրվել նույնիսկ այն օրերին, երբ մեր բարբարոս ոսոխի կարմիր ջարդը կարծեք թե այլևս ոչ մի շիթ կենսական հյութ չէր թողել հայոց տոհմիկ արյան մեջ. և 1915-ից ընդամենը 3 տարի հետո, Վարդանանց պատերազմից ուղիղ 1467 տարի և 2 օր անց, նախնյաց արյունով սրբացած հայոց հողի վրա տեղի ունեցավ նոր Ավարայրը՝ Սարդարապատի ճակատամարտը, այս անգամ նաև ֆիզիկական հաղթանակի ելքով...

Եվ այսպես, ամեն անգամ որ «մեր թշնամին յուր սուրն է դրել, յուր օրհասական սուրը մեր կրծքին», ամեն անգամ որ «չի եղել ելք ու ճար»,—«հիմի է՞լ լռենք, եղբարք» հարցին հայ ժողովուրդը միշտ էլ բացասական պատասխան է տվել և ոտքի ելել: Քանի որ ինքնությունից, լեզվից ու հավատից նահանջելու հաշվին («մեղա՜, մեղա՜ Արարատին») ինչ-որ «խոհեմություն» հանդես բերելը մեր մեջ որակվել ու որակվում է իբրև վասակություն, մի՛միայն վասակություն: Քանզի «Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն իւր՝ աւերի եւ ամենայն քաղաք կամ տուն բաժանեալ յանձն իւր՝ ոչ կացցէ» (Մատթ, ԺԲ 25. «Իր մեջ բաժանված ամեն թագավորություն կավերվի, և իր մեջ բաժանված ամեն քաղաք կամ տուն կանգուն չի մնա»):

Ուստի մեր ողջ պատմությունն այլ բան չի եղել, քան դիմադրական մի ճիգ:

Այդ դիմադրական կռիվները գրեթե միշտ եղել են անհավասար, հանգեցրել են ֆիզիկական պարտության և լոկ բարոյական հաղթանակի, ու մեր «զօրութեամբ տկար» «փոքր ածուն» դարեդար ավելի է փոքրացել, գրեթե և մեռել, բայց ապա սկիզբն է առել «կենդանանալոյ». Եվնիկ Կողբացին պիտի ասեր՝ «զի քեզ զյարութեան օրինակն նկարիցէ», օրինակը «հրաշալի հարության», որի հույսը երբեք չի լքել մեզ:

Ու մենք դարձել ենք, գերմանացի Արմին Վեգների խոսքով ասած, «պարտությամբ չհաղթված ժողովուրդ»:

Մեր մարտական ոգին բնավ չի դարձել ռազմատենչ ոգի. «Մենք մեզ ոչ ոքից չենք գերադասում»: Պարզապես «մի նշխարով, մի կում ջրով» կերտել ենք մեր դպրությունը, արյան վերջին շիթով պաշտպանել ու պահպանել այն, ասել է թե՝ մեր ինքնությունը, մեր հավերժությունը:

— Փա՜ռք ու պատի՜վ հաղթողներին:

Մեսրոպ Մաշտոց և Վարդան Մամիկոնյան... Այս անունները՝ պատմականորեն իրենց ձեռք բերած ամենալայն տարողությամբ, թերևս այն երկու կետ ձկներն են, որոնց վրա հանգչում են մեր գոյությունն ու գոյատևումը: Քանի որ եթե Մեսրոպն ու Մեսրոպյանք մեզ սովորեցրին ամբողջ էությամբ փարվել ու առանց մնացորդի նվիրվել գիտության, լույսին, առաջադեմ գաղափարներին ու գաղափարախոսություններին, ապա Վարդանն ու Վարդանանք սովորեցրին մեզ կյանքն էլ չխնայել հանուն գիտության ու լույսի, հանուն նոր գաղափարների ու գաղափարախոսությունների, հանուն այն ամենի, ինչ ամփոփվում է մեկ հատիկ «Հայրենիք» բառի մեջ, որը երկար ու երկար դարեր գուցե ավելի շուտ հոգևո՛ր Հայաստանը եղավ, սակայն որը նաև մարմնացյա՛լ, մարմնավո՛ր Հայաստանն է այժմ՝ **արդեն** 60 տարի:

Դեռևս 60 տարի:

Ընդամե՛նը 60 տարի»:

Բանախոսությունից հետո սկսվում է հանդիսության գեղարվեստական բաժինը: Հոգեվոր ճեմարանի երգչախումբը, ղեկավարությամբ ճեմարանի երաժշտության դասախոս Տ. Ղևոնդ քհն. Հարությունյանի, իր ելույթն

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

սկսում է «Նորահրաշ պսակաւոր» շարականի կատարումով: Այնուհետև, ճեմարանի մի խումբ սաների կողմից, ոգևորությամբ ու ապրումով, ընթերցվում են հատվածներ Եղիշե Պատրիարք Տերտերյանի «Կարմիր Զորավար» և Պարույր Սևակի «Անլռելի Զանգակատուն» պոեմներից: Գեղարվեստական բաժինն ավարտվում է հայրենի երգահան Ստ. Զրբաշյանի «Հայաստան» երգի կատարումով:

Հանդիսության վերջում հոգևոր ճեմարանի փոխտեսուչ Հայկազուն աբեղա Նաջարյանը հրավիրում է Վեհափառ Հայրապետին՝ օրվա տոնի առթիվ տալու Իր պատգամն ու օրհնությունը (Հայոց Հայրապետի խոսքը տես էջ 7):

ՎԱՐԴԳԵՍ ՍՐԿ. ՄԿՐՏՉՅԱՆ





ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԻ ԲԱՆԱՎՈՐ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Մարտի 24-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ ճեմարանի շրջանավարտներ Սըմբատ սրկ. Արիստակեսյանի, Վարդգես սրկ. Մկրտչյանի, Վարդան սրկ. Բաղդասարյանի, Ստեփան սրկ. Կարապետյանի և Ստեփան սրկ. Դավթյանի ավարտաճառերի բանավոր պաշտպանություն:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և բազմաթիվ հյուրեր:

Ավարտաճառերի պաշտպանության հանդեսին ներկա էին նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Շահե արքեպ. Աճեմյանը, Արգենտինայի հայոց թեմական վարչության անդամներ տիարք Ժոզե Ռագուբյանը, Անդրանիկ Արսլանյանը, ինչպես նաև Սան Պաուլոյի ազգայիններից տիար Հարություն Սանոսյանը:

Հանդիսությունն սկսվեց հոգևոր ճեմարանի փոխտեսուչ, քննիչ հանձնաժողովի նախագահ Տ. Հայկազուն աբեղա Նաջարյանի բացման խոսքով: Այնուհետև հայր սուրբը ներկայացրեց դիպլոմային գրավոր աշխատանքների մասին քննիչ հանձնաժողովի (որի կազմի մեջ էին պատմական գիտությունների դոկտոր Սիմոն Գրքյաշարյանը, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Պետրոս Բեդիրյանը և բանասիրական գիտությունների թեկնածու Արտաշես Մաթևոսյանը) կարծիքը:

Ապա իրենց դիպլոմային աշխատանքների պաշտպանությամբ հանդես եկան՝

1.—**Սմբատ սրկ. Արիստակեսյան.**

Նրա աշխատանքի թեման էր՝

«Թոնդրակյան շարժումը և Նարեկացին»:

Աշխատությունը բաղկացած էր 70 մեքենագիր էջից և ուներ հետևյալ գլուխները.

ա) Հայաստանի քաղաքական և տնտեսական վիճակը Թ—ԺԱ դարերում.

բ) Թոնդրակեցիներ.

գ) Թոնդրակյան շարժումը և Նարեկացին.

դ) Հավելված (Նարեկացու Թուղթը աշխարհաբար):

Ներկայացված գրավոր ավարտաճառը գնահատվեց «լավ», իսկ բանավոր պաշտպանությունը՝ «գերազանց»: Ընդհանուր միջինը՝ «գերազանց»:

2.—**Վարդգես սրկ. Մկրտչյան.**

Նրա աշխատանքի թեման էր՝

«Հայ ազգային-եկեղեցական ժողովների կանոնները ամուսնության հարցի վերաբերյալ»:

Աշխատությունը բաղկացած էր 64 մեքենագիր էջից և ուներ հետևյալ գլուխները.

ա) Հայ եկեղեցական իրավունքի աղբյուրները.

բ) Խնամիական չհասություն.
գ) Ամուսնալուծության իրավունք.
դ) Ամուսնական չափահասություն.
ե) Հավելված (Կանոնագիրք հայոց):

Ներկայացված գրավոր ավարտաճառը գնահատվեց «լավ», բանավոր պաշտպանությունը նույնպես «լավ»: Ընդհանուր գնահատականը՝ «լավ»:

3.—**Վարդան սրկ. Բաղդասարյան.**

Նրա աշխատանքի թեման էր՝

«Քրիստոնեության հետքեր Սյունիքում նախագրիգորյան շրջանում»:

Աշխատությունը բաղկացած էր 75 մեքենագիր էջից և ուներ հետևյալ գլուխները.

ա) Սյունյաց եպիսկոպոսական Աթոռի կազմավորումը.
բ) Սյունյաց աշխարհի քրիստոնեական կյանքի հետ կապված այլ ավանդություններ.
գ) Արտպի Աթոռը. Սյունյաց և Արտպի Աթոռների հարաբերությունները նախագրիգորյան շրջանում.
դ) Քրիստոնյաների հալածանքներ Սյունիքում նախագրիգորյան շրջանում:

Ներկայացված գրավոր ավարտաճառը գնահատվեց «լավ», իսկ բանավոր պաշտպանությունը՝ «գերազանց»: Ընդհանուր միջինը՝ «գերազանց»:

4.—**Ստեփան սրկ. Կարապետյան.**

Նրա աշխատանքի թեման էր՝

«Հայրապետական Աթոռի փոխադրությունը Սսից Էջմիածին 1441 թ.»:

Վեհափառ Հայրապետը և Մայր Աթոռի միաբանության անդամները հոգևոր ճեմարանի շրջանավարտ սարկավագների հետ Վեհարանի մուտքի առաջ

Աշխատությունը բաղկացած էր 73 մեքենագիր էջից և բաժանված էր հետևյալ մասերի.

ա) Առաջաբան.
բ) Հայ Եկեղեցու Հայրապետական կամ Կաթողիկոսական Աթոռ.
գ) Կիլիկյան և Սսի Աթոռը 1293—1441 թվականներին.
դ) Կաթոլիկ միարարներ.
ե) Արևելյան Հայաստանը 1375—1441 թվականներին.
զ) Աթոռի փոխադրության գործի ընթացքը.
է) 1441 թվականի Վաղարշապատի ազգային-եկեղեցական ժողովը և Աթոռի վերահաստատումը Ս. Էջմիածնում.
ը) Վերջաբանի փոխարեն.

թ) Հավելված:

Ներկայացված գրավոր ավարտաճառը գնահատվեց «լավ», իսկ բանավոր պաշտպանությունը՝ «գերազանց»: Ընդհանուր միջինը՝ «գերազանց»:

5.—**Ստեփան սրկ. Դավթյան.**

Նրա աշխատանքի թեման էր՝

«Մահմեդականությունը ՍՍՀՄ-ում»:

Աշխատությունը բաղկացած էր 90 մեքենագիր էջից:

Ներկայացված գրավոր ավարտաճառը գնահատվեց «լավ» բանավոր պաշտպանությունը՝ նույնպես «լավ»: Ընդհանուր գնահատականը՝ «լավ»:

Հանդիսության ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը Իր հայրական օրհնությունը տվեց դիպլոմների արժանացած շրջանավարտներին և նրանց մաղթեց նորանոր հաջողություններ: Այնուհետև վերջիններս, ներկաների ծափահարությունների ներքո, Վեհափառ Հայրապետից աջահամբույրով ստացան իրենց ավարտական վկայականները և նվերներ:

Վերջում շրջանավարտների անունից շնորհակալական խոսք ասաց Վարդան սրկ. Բաղդասարյանը.

«Այսօր, հիրավի, կարևոր և առանձնահատուկ օր է մեզ համար: Հոգևոր ճեմարանի հինգ շրջանավարտներիս հնարավորություն տրվեց հանդես գալու մեր դիպլոմային ավարտաճառերի բանավոր պաշտպանությամբ, ուր, մի տեսակ, հանրագումարի եկան հոգևոր ճեմարանում ստացած մեր գիտելիքները: Այս պահը, անշուշտ, հուզիչ է և պարտավորեցնող. այսօրվանից մենք հրաժեշտ ենք տալիս մի այնպիսի հաստատության, ինչպիսին հոգևոր ճեմարանն է, որի հետ կապված են մեր անցյալի հույզերն ու երազները:

Թե ինչ է նշանակում ճեմարանը մեզ համար՝ դժվար է բառերով բացատրել:

Սովորաբար աշխարհի ամենահին գործող ուսումնական հաստատությունը համարվում է Մարոկկոյի Ֆես քաղաքի համալսարանը, որը հիմնադրվել է 859 թ.: Թող ազգային ավելորդ սնապարծություն չհամարվի, եթե ասեմ, որ մեր հոգևոր ճեմարանը, որպես հոգևոր բարձրագույն դպրոց, իր հնությամբ շատ ավելի խորն է մխրճվում պատմության գիրկը: Նրա սնուցիչ արմատները խրված են դարերի խորքը, մինչև Ս. Մեսրոպ, Ս. Սահակ, և դեռ ավելին՝ մինչև Ս. Գրիգոր Լուսավորիչ, որի ձեռամբ հին Վաղարշապատում, կաթողիկոսարանին կից, ճիշտ այս սրբագործված հողի վրա, ինչպես տեղեկանում ենք Ագաթանգեղոսի Պատմության գրքից, բացվել է հոգևոր ուսումնական հաստատություն: Այդ դպրոցը մեկ դար հետո, հայոց մեծ վարդապետի՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի շնորհիվ, պիտի դառնար հայագիր, հայաշունչ, և հայ ուսումնատենչ ու ուսումնակարոտ երիտասարդները, երկրի տարբեր կողմերից, ըստ Կորյունի վկայության, պիտի գային «Ի բացեալ աղբիւրն գիտութեանն Աստուծոյ»:

Եվ մենք, սարկավագներս, ինչպես նաև ճեմարանի ողջ ուսանողությունը, հպարտ ենք, որ շարունակողներն ենք անցյալի այդ սուրբ ավանդների, հպարտ, բայց առավել ևս՝ պարտավոր: Չէ՞ որ այսուհետ մեկանից յուրաքանչյուրը ոչ միայն խոսքով, այլև վարքով, բարքով, այլև գործունեությամբ, պարտավոր է լինել հավատարիմ կավակը և նեցուկը Հայ Առաքելական Ս. Եկեղեցու և մեր բազմաչարչար ժողովրդի:

Այսօր Դուք, Վեհափառ Տեր, ներկա եղաք հինգ երիտասարդ սարկավագներիս դիպլոմային աշխատանքների պաշտպանությանը: Ավարտելով հոգևոր ճեմարանը՝ մեր առջև այժմ դրվում է ձեռնադրության և հոգևոր կոչում ստանալու հարցը: Իսկ ի՞նչն է մեզ բերել այստեղ՝ Ս. Էջմիածին, ի՞նչն է մեզ հոգևոր ծառայության կոչել. արդյոք հայ դարահալած ժողովրդի վշտի և ուրախության արցունք-շաղախով դեպի երկինք կարկառված մեր քարացած աղոթքնե՞րը՝ մեր սուրբ վանքերն ու եկեղեցիները, թե՞ այդ վանքերում «մի նշխարով, մի կում ջրով», ինչպես կասեր բանաստեղծը, մեր պատմությունը կերտած հայրենասեր պատմիչների ու խոնարհ գրիչների դառնագին մորմոքն ու կըսկըծալի տառապանքը, հայ քաջարի կինվորի հաղթական սուրը օրհնող ծերունի քահանայի դողդոջուն աղո՞թքը, թե՞ դարերի հավերժական կյանք ստացած մագաղաթները, որոնց դեղնած թերթերի մեջ արտացոլվել է մեր ողջ պատմությունը, մշակույթն ու գրականությունը. արդյոք մեր մելամաղձոտ շարականնե՞րը, կամ էլ՝ միլիոնավոր հայ խաչյալների վրա կանգնված մեր սուրբ խաչքարե՞րը, որոնցից յուրաքանչյուրը մի-մի ասեղնագործություն է քարի վրա՝ կատարված տղամարդու հանճարեղ մատներով, թե՞ մեր պատմության վշտի ու ուրախության քարքարոտ ուղիներում ցրված հայ բյուրավոր անանուն կավակների, մշակութային գործիչների ու երախտավորների անմար հիշատակը:

Մեկանից յուրաքանչյուրը, անսալով իր ներքին ձայնին, իր քայլերն ուղղեց դեպի այս սուրբ կամարները, իր հոգին առլցուն ապագայի գեղեցիկ երազներով: Այդ ներքին ձայնը ուսումնառության և մեր հոգևոր կոչման ձայնն է, որ եթե նախկինում բնակդա-

բար, ապա այժմ՝ գիտակցված կերպով մեկ մղում է դեպի առաջ, դեպի հոգևոր առաքելություն:

Հիրավի, ինչպես մի առիթով նշել էիք Դուք, Վեհափառ Տեր, մարդկային բարոյական մեծագույն արժանիք է ծառայել մի գաղափարի, մի նպատակի, մի այնպիսի սուրբ հաստատության, ինչպիսին մեր Եկեղեցին է, մի սրբական հաստատություն, որ ժառանգել ենք պատմականորեն, դարերի խորքից: Մենք խոստանում ենք հետ այսու է՛լ ավելի նվիրվածությամբ և հավատարմորեն ծառայել այս սուրբ հաստատությանը: Մեկ համար մեծագույն երջանկություն է, որ մեր լուման և աշխատանքի բաժինը բերենք ի փառս Հայաստանյայց Եկեղեցու և հայ ժողովրդի:

Այս հանդիսավոր պահին, իմ սարկավագ եղբայրների անունից, ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Ձեզ, Վեհափառ Տեր, Ձեր հայրական խնամքի և հոգատարության համար: Հակառակ Ձեր բազմաբեղ լինելուն, Դուք երբեք չեք ալացել Ձեր ժամանակը կոհել մեկ համար, տալ Ձեր հայրական հորդորները, որոնք դարձել են ուղեցույց մեկ՝ Բոլորիս համար:

Ջերմագին շնորհակալություն հոգևոր ճեմարանի տեսչության և դասախոսական կազմին: Բոլորիս համար մեծ ցավ է, որ այսօր մեկ հետ ներկա չէ մեր ամենասիրելի դասախոսներից մեկը՝ պրն. Արթուն Հատիտյանը: Այս առթիվ ցանկանում եմ մեր բոլորի կողմից երախտագիտության խոսք ասել նրա պայծառ հիշատակին:

Շնորհակալությունն նաև քննիչ հանձնաժողովի հարգարժան անդամներին, որոնք մեր սիրելի դասախոսներն են և այսօր վերջին անգամ լսեցին և գնահատեցին իրենց սաներին:

Վեհափառ Տեր, իմ սարկավագ եղբայրների կողմից թույլ տվեք մատչել ի համբույր Ձեր Սուրբ Աջին և ստանալ Ձեր հայրական օրհնությունները»:

Հանդիսությունն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին արտասանված «Հայր մեր»-ով:



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Փետրվարի 2-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Փետրվարի 6-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը խոր վշտով քարոզ է խոսում նորոգ հանգուցյալ, Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի վաստակաշատ խմբագիր Արթուն Հատիտյանի մահվան առթիվ: Այնուհետև կատարվում է հոգեհանգստյան կարգ՝ նվիրված Արթուն Հատիտյանի հիշատակին:

* * *

Փետրվարի 9-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Փետրվարի 13-ին, կիրակի.—Բուն Բարեկենդան.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Խաչատուր քհն. Ֆրանգյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը նորոգ հանգուցյալ, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Տ. Տ. Խորեն Ա-ի կյանքի և գործունեության մասին: Ս. պատարագի վերջում կատարվում է հոգեհանգստյան կարգ՝ նվիրված Տ. Տ. Խորեն Ա-ի հիշատակին:

* * *

Նույն օրը, երեկոյան, Մայր տաճարում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում Տյառնընդառաջի նախատոնակի ժամերգություն:

Ավելի ուշ, ժամը 19.30-ին, հոգևոր ճեմարանի մարվադաշտում բոցավառվում է Տյառնընդառաջի ավանդական խարույկը:

*
* *

Փետրվարի 14-ին, երկուշաբթի.—Տեառնընդառաջ: Տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի տաճարն.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Նարեկ քհն. Մատարյանը:

*
* *

Փետրվարի 16-ին, չորեքշաբթի.—Այսօրվանից սկսվում է առավոտյան «կկարգ Ապաշխարութեան և կԱրևագալի ժամերգութեան», իսկ երեկոյան՝ «յերեկոյսն կխաղաղական»:

*
* *

Նույն օրը, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Փետրվարի 19-ին, շաբաթ.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ Ս. Էջմիածին է այցելում Ռումինիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Արամայիս աբեղա Շլուկյանը:

*
* *

Փետրվարի 20-ին, կիրակի.—Բ կիրակի Քառասնորդական Պահոց (Արտաքսման).

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Եղիշե քհն. Բաղրամյանը:

«Հայր մեր»-ից առաջ, օրվա խորհրդի առթիվ, հավուր պատշաճի քարոզ է խոսում Տ. Ներսես եպս. Պոլատյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Փետրվարի 23-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Փետրվարի 27-ին, կիրակի.—Գ կիրակի Քառասնորդական Պահոց (Անառակին).

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Հայկակուն աբեղա Նաջարյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ է խոսում Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը Անառակ որդու առակի մասին (Ղուկ. ԺԵ 11—32):

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մարտի 1-ին, երեքշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի սաները, ճեմարանի փոխտեսուչ Տ. Հայկակուն աբեղա Նաջարյանի գլխավորությամբ, չորսօրյա հանգստի են մեկնում Ծաղկաձոր:

*
* *

Մարտի 2-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Մարտի 4-ին, ուրբաթ.—Այսօր Վեհափառ Հայրապետը այցելում է Երևանի Ս. Սարգիս եկեղեցի, որտեղ ներկա է լինում երեկոյան «Խաղաղական» ժամերգությանը:

*
* *

Մարտի 6-ին, կիրակի.—Դ կիրակի Քառասնորդական Պահոց (Տնտեսին).

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Նարեկ քհն. Մատարյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ է խոսում Տ. Ստեփանոս վրդ. Չաքալյանը (քարոզը տես էջ 30):

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մարտի 9-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Մարտի 11-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստը:

*
* *

Մարտի 13-ին, կիրակի.—Ե կիրակի Քառասնորդական պահոց (Դատաւորին).

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ստեփանոս վրդ. Չաքալյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ է խոսում Տ. Հայկազուն աբեղա Նաջարյանը՝ «Ասաց եւ առ ոմանս պանծացեալս յանձինս թէ արդարք իցեն եւ խոտիցեն զբազումս» (Ղուկ. ԺԸ 9) բնաբանով:

*
* *

Նույն օրը ուխտավորաբար Մայր Աթոռ Ս. Էջմիածին է այցելում Հարավային Ամերիկայի առաջնորդական փոխանորդ Տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը:

*
* *

Մարտի 16-ին, չորեքշաբթի.—Այսօր, առավոտյան, Լիբանանի «Ս. Էջմիածնի կրոնասեր տիկնանց համախմբում»-ի վարչության հրավերով, Մայր Աթոռի միաբան Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը մեկնեց Բեյրութ:

*
* *

Նույն օրը, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Նույն օրը, ժամը 23-ին, Երուսաղեմից ուխտավորաբար Մայր Աթոռ Ս. Էջմիածին է ժամանում Տ. Շահե արքեպ. Աճեմյանը:

*
* *

Մարտի 19-ին, շաբաթ.—Տօն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի չարչարանացն և մտին ի Վիրապն.

Այսօր Մայր տաճարում, Իշման Ս. Սեղանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Արտակ քհն. Սիմոնյանը:

*
* *

Մարտի 20-ին, կիրակի.—Զ կիրակի Քառասնորդական Պահոց (Գալստեան).

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ռումինիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Արամայիս աբեղա Շլուկյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ է խոսում Տ. Արտակ քհն. Սիմոնյանը «Զի դուք յապատութիւն կոչեցեալ էք, եղբարք. միայն զի ապատութիւն ձեր ոչ լինիցի ի պատճառս մարմնոյ, այլ սիրով ծառայեցէք միմեանց» (Գաղ. Ե 13) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մարտի 23-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Տ. Շահե արքեպ. Աճեմյանը ներկաներին ծանոթացնում է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ապագա ծրագրերին:

*
* *

Մարտի 24-ին, հինգշաբթի.—Այսօր, Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով, իր պաշտոնատեղին է մեկնում Տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը:

*
* *

Նույն օրը, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստը:

*
* *

Մարտի 27-ին, կիրակի.—Ծաղկազարդ.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Շահե արքեպ. Աճեմյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եւ ի մտանելն նորա յԵրուսաղէմ, դղրդեցաւ քաղաքն ամենայն, եւ ասէ. Ո՞վ իցէ սա» (Մատթ. ԻԱ 10) բնաբանով:

Հանդիսավոր ս. պատարագին ներկա էին Վեհափառ Հայրապետը, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Արգենտինայի հայոց թեմի կենտրոնական վարչության ներկայացուցիչներն ու այլ հյուրեր:

Ս. պատարագին ներկա էր նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռուբեն Պարսամյանը:

Հավարտ ս. պատարագի Վեհարանում տրվում է ճաշկերույթ:

*
* *

Մարտի 30-ին, չորեքշաբթի.—Այսօր, առավոտյան, հրաժեշտ տալով Հայոց Հայրապետին, Երուսաղեմ է մեկնում Տ. Շահե արքեպ. Աճեմյանը:

*
* *

Նույն օրը, երեկոյան, Բեյրութից Մայր Աթոռ է վերադառնում Տ. Մումիկ վրդ. Սարգսյանը:

*
* *

Մարտի 31-ին, հինգշաբթի.—Աւագ հինգշաբթի. Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, միջօրեի ս. պատարագ է մատուցում Տ. Ստեփանոս վրդ. Զաքալյանը:

Երեկոյան ժամը 17.30-ին կատարվում է «Զկարգ Ոտնլուայի»՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի:

Ավելի ուշ, ժամը 19.30-ին, Մայր տաճարում սկսվում է գիշերային հսկումի կարգը: Բազմաթիվ ուխտավորներ ու հյուրեր ներկա էին հանդիսավոր արարողությանը: Մեծ հանդիսությամբ և խորհրդավորությամբ են կատարվում Քրիստոսի մատնությանը նվիրված Նոր Կտակարանի ընթերցումները, շարականներն ու աղոթքները:

«Փառք ի բարձունս»-ից հետո «Զխաղաղութիւն թողում ձեզ, խաղաղութիւն վիմ տամ ձեզ» (Հովհ. ԺԴ 27) բնաբանով բովանդակալից և հոգեպարար քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը՝ վեր հանելով մեր Տեր Հիսուս Քրիստոսի չարչարանքը և խաչելությունը հանուն մարդկության փրկության:



Տ. ՇԱՀԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՃԵՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՈՆԻ ՕՐԸ (27 մարտ 1983 թ.)

«Եւ ի մտանելն Յիսուսի յԵրուսաղէմ, դղրդեցաւ քաղաքն ամենայն և ասէ. ո՞վ իցէ սա» (Մատթէոս ԻԱ 10):

Ծաղկազարդ կիրակի այս օրը տոն է Հիսուսի հրաշափառ մուտքին հԵրուսաղեմ: Մոտ էր Բաղարջակերաց տոնը: Հիսուս, հետևելով ավանդական սովորության, կուգար Երուսաղեմ, տոնելու համար Պասեքը, այսինքն՝ հիշելու, թե ինչպես Աստված փրկեց իր ժողովուրդը Եգիպտոսի գերութենեն՝ ստրկության, տառապանքի և օտարության հյուծումեն, թե ինչպես Աստված տվավ իր ժողովուրդին առաջնորդ մը՝ Մովսեսը, որ բացավ Կարմիր ծովու ջուրերը և անապատի ճամփով հասցուց վայն Ավետյաց երկիրը:

Կուգար Հիսուս Երուսաղեմ Երիքովեն, կտրելե ետք Հուդայի անապատը, անցած իր աշակերտներուն գլուխը: Կուգար աղոթելու Երուսաղեմի տաճարին մեջ, իր ժողովուրդի փրկության համար, ինչպես կըներ ամեն հրեա: Այն օրերուն, խլրտումներ կշարժեին ամբոխը: Շատեր կսպասեին ակնկառույց, որ գար Փրկիչը, հեղափոխական շարժումով մը տապալելու հռովմեական իշխանությունը և վերահաստատելու Դավթի գահը: Անոնք կերևակայեին ապատարարը իբրև հերոս մը, որ վինվորական իշխանությունը պիտի ընկճեր վինվորական ուժով և մուտք պիտի գործեր Երուսաղեմ հաղթական վինվորականի մը պսակով:

Եվ ահա Հիսուս մուտք կգործեր՝ նստած ամենեն համեստ գրաստին՝ իշու մը կռնակը, հեզ և խոնարհ, առանց վենքի և բանակի: Սակայն, հակառակ իր խոնարհ կերպարանքին, ժողովուրդեն մաս մը իր մեջ կողջուներ Փրկիչը, խոստացված Մեսիան, Դավիթի սերունդեն: Ծերեր կշարժեին ձիթենիի ոստեր, մանուկներ՝ արմավենիի ճյուղեր, ոմանք իրենց հագուստները կփռեին անոր ճամփուն: Կընդունեին Հիսուսը թագավորական փառքով և կաղաղակեին. «Օրհնություն Դավիթի Որդիին, օրհնյա՛լ ըլլա Տիրոջ անունով եկողը, օրհնությո՛ւն ի բարձունս»:

Սակայն հեռուն, խումբ մը մարդիկ կդիտեին աղմուկը, չէին հասկնար եղածը և, կասկածանքով, հարց կուտային. «Ո՞վ իցէ սա»:

«Երբ մտավ Հիսուս Երուսաղեմ, ամբողջ քաղաքը դղրդեցաւ և հարցուց. ո՞վ կրնա ըլլալ սա»:

Հիսուսի մուտքը կդիմավորվի երկու հակադիր դիրքավորումներով. անոնք, որ կըճանչնան զԱյն և Անոր մեջ կողջունեն Դավիթի Որդին, խոստացված Փրկիչը, նոր Մովսեսը՝ կոչված ազատելու մարդկությունը ամբողջ, փառաց թագավորը՝ եկած իշխելու մարդոց սիրտերուն, և կընդունին զԱյն ովսաննաներով և փառաբանությամբ: Եվ մյուսները, որոնք կտեսնեն, բայց չեն ճանչնար զԱյն և կասկածանքի, տարակուսանքի և անհավատության շեշտով մը կհարցնեն՝ ո՞վ է սա:

Իր ծնունդի օրեն մինչև Իր քարոզության տարիները Բեթղեհեմեն մինչև Երուսաղեմ, Գեթսեմանիեն մինչև Գողգոթա, խաչի բար-

ձունքեն մինչև Հարության գերեզմանը, Հիսուսի շուրջ բաժանումի գիծ մը իրարու կհակադրե մարդկության երկու այս խումբերը. անոնք, որ կճանչնան և կընդունին Հիսուսը իրենց կյանքեն ներս, և անոնք որ, երբ կըհայտնվի, չեն մոտենար և հեռուեն հարցումներ կընեն՝ ո՞վ է Հիսուսը:

Այս առավոտ, դուք, սիրելի հայորդիներ, որ եկած եք սրբական այս տաճարին մեջ աղոթելու, հիշելու Քրիստոսի գալուստը Երուսաղեմ, քանիսե՞ր արդյոք կգտնվին ձեր խումբին մեջ, որ բացած են իրենց հոգին և կապրին ուրախությունը անոնց, որոնք ցընծության երգերով դիմավորեցին իրենց Տերը և հայտարարեցին վայն Իշխանը իրենց սիրտերուն: Բաժանումի այն գիծը չի՞ հակադրեր մեծամասնություն մը փոքրամասնության մը: Մեծամասնություն մը, որ կհավատա միայն ուժին, նյութին, բանակին, պատերազմին, մարմնականին և աշխարհիկին և արհամարհանքով կնայի փոքրամասնության մը, որ կհավատա հոգիին, առաքինության կենքին, սիրո խոսքին, խաղաղության սկզբունքին և Աստուծո հայրության: Մենք՝ քրիստոնյաներս, հետևորդները Քրիստոսի, կհավատանք, թե Ան, որ եկավ Երուսաղեմ և ընդունվեցավ ովսաննաներով, եկավ մեզի՛ համար, մեզմե յուրաքանչյուրի՛ն համար, ոչ թե Պասեքի, այսինքն՝ Զատիկի տոնին գառնուկ մը զոհելու Աստուծո, այլ իր իսկ անձը ընծայելու իբրև պատարագ, տալու, խաչի սեղանին վրա, իր մարմինը և արյունը «ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց»: Ինչպես Մովսես հավաքեց Աստուծո ժողովուրդը, որ կտառապեր Եգիպտոսի պանդխտության մեջ և հանեց վայն ստրկության երկրեն՝ առաջնորդելու համար վայն դեպի փրկություն, այսինքն՝ դեպի իր հայրենիքի հարավատ և ինքնիշխան երկիրը, այնպես ալ Հիսուս հավաքեց մեզ իր խաչի թևերուն տակ՝ ապատելու համար յուրաքանչյուրը մեզմե մեղքի կապանքներեն, մոլորումներու ստրկութենեն և տանելու համար իրեն հետևողներեն յուրաքանչյուրը՝ հոգեկան կյանքի բարձունքներուն: Շատ ավելի դժվար առաքելություն, քան Մովսեսի առաքելությունը, քանի որ ավելի դյուրին է ապատել մարդը իր օտար թշնամիեն, քան ապատել մարդը իր մեղանչական ինքզինքեն: Աստված մը պետք է մարդանար՝ վերականգնելու համար մարդը աստվածային իր բնության մեջ:

Ծաղկազարդը առաջին օրն է Ավագ շաբաթու: Հիսուս եկած չէր փառաբանվելու համար, եկած չէր թագավորական թագը հագնելու և վերականգնելու համար հրեական անկախությունը Երուսաղեմի մեջ. եկած էր մահանալու խաչին վրա: **Ան գիտեր, թե իր աչքերը, որոնց մեջեն Աստված նայած էր մարդոց, պիտի փակվին խաչին վրա, ամայության մեջ Գողգոթայի, առանց տեսնելու իր մոտ և ոչ մին իր հետևորդներեն:** Ան գիտեր, թե ուրացումն է մարդկային, և միայն սերն է աստվածային: Եվ եկած էր Ան իր սիրույն մեջ ընդգրկելու ոչ թե իր հետևորդները, իր ժողովուրդը, այլ ամբողջ մարդկությունը, ալինք սիրողներն ու ատողները:

Սիրելի հայորդիներ, Հիսուս եկավ նաև մեզի համար: Ան մոտք գործեց մեր պատմության մեջ, ինչպես մոտք գործած էր Երուսաղեմ: Այցելեց Այրարատյան այս դաշտը, երբ օր մը, Ս. Գրիգոր Լուսավորիչը, տեսիլքի իր լույսին մեջ, տեսավ Միածինը, որ կիջներ, տեսավ այն վայրը, ուր դարերե ի վեր կանգնած է Իշման Ս. Սեղանը: Երկինքներեն իջավ Ան Հայաստան աշխարհ և մեր աշխարհը լեցուց իր անունին հրաշքով: Անոր էջքը այստեղ, վերածեց Վաղարշապատը հայոց Երուսաղեմին՝ սուրբ Քաղաքին: Մեծ այս տաճարը կանգնեց Ան իբրև ուխտի այն տապանը, ուր անքակտելի դաշինքով կապվեցավ մեր ժողովուրդը իր Աստուծույն: Այն օրեն ի վեր Ան եղավ մեր Աստվածը, և մենք՝ Անոր ժողովուրդը:

Ինչպես Աստված խոսեցավ Մովսեսի հետ անկիրելի մորենիին ընդմեջեն և ըսավ անոր՝ «Դուն պիտի առաջնորդես իմ ժողովուրդս», նույնպես Միածինը խոսեցավ Գրիգոր Լուսավորչի հետ, տվավ անոր առաքելությունը՝ տանելու մեր ժողովուրդը ի խավարե ի լույս, ի մահվանե ի կյանք, հանգիտութենե ի գիտություն ճշմարտության: «Եւ ժողովուրդ որ նստէր ի խաւարի ետես լոյս մեծ»:

Մկրտության ավազանեն մեր ժողովուրդը ծնավ իբրև մեկ ժողովուրդ, մեկ ազգ, մեկ կրոնք, մեկ հայրենիք: Ս. Գրիգոր Լուսավորիչն էր, որ կատարեց մեծ հրաշքը. ան բըժշկեց Տրդատ թագավորը և մկրտեց վայն իբրև խորհրդանիշը ժողովուրդի մը, որ նոր ծնունդով մը կբանար իր աչքերը աստվածգիտության լույսին: Անոր լույսն էր, որ մեր ժողովուրդի սրտին խորը ծաղկեցուց մեկ ժողովուրդ ըլլալու գիտակցությունը, եղբայրներ իրարու՝ ծնած նույն ավազանեն, հայր ունենալով զԱստված և մայր՝ մեր սուրբ Եկեղեցին:

Այստեղ, լուսավորչահաստատ Մայր տաճարին մեջ, Ս. Սահակ և Ս. Մեսրոպ տեսան, մարգարեական իրենց աչքերով, այն աստղը, որ Բեթղեհեմ գացող մոգերուն նման, առաջնորդեց վանոնք հայ գիրի գյուտին և հայ մշակույթի ծնունդին: Անոնց քրիստոնեական հավատքն էր, որ ստիպեց և մղեց վանոնք հայացնելու Աստուծո խոսքը, Աստվածաշունչ մատյանը: Եվ ինչպես Սինայի բարձունքին

վրա Մովսես տեսավ Աստուծո աջը, որ կրակե գիրերով կգծեր տասնաբանյան քարին վրա, նմանապես Մեսրոպ, իր հավատքի անկապ աչքերով, տեսավ Տիրոջ Աջը խուցի մութ պատին վրա, որ գծեց հայ այբուբենը, լույսի գիծերով:

Ս. Էջմիածինն է անկեղ մորենին, Սինայի բարձունքը, Երուսաղեմը և Սիոն լեռը հայ ժողովուրդին. և այստեղ, մեր ժողովուրդին ականջեն չկտրվեցավ բնավ Աստուծո պատգամը, սիրո պատգամը. «Զի նախ նա սիրեաց զմեզ»:

Արհավիրքի և հալածանքի օրերուն, սըրբական այս տաճարին մեջ հավաքվեցան Վարդանանք և Հովսեփ կաթողիկոսի դիմաց ըրին իրենց ուխտը: Այստեղ, Ղևոնդ Երեցի շունչով խմբագրվեցավ հայոց գիրը պարսից թագավորին, որ կըսեր. «Յայսմ հաւատոց ոչ ոք կարէ խախտել զմեզ...»: Այստեղ Վարդանանք հայտարարեցին ի լուր աշխարհի, թե հայ ժողովուրդը ուխտ մը ունի Աստուծո հետ, և ոչ մեկ ուժ կրնա ընկճել իրենց կամքը պահելու այդ ուխտը՝ կնքված Քրիստոսի արյունով: Այստեղ, խաչին նշանը հիշեցուց շարունակ մեր ժողովուրդին, թե ոչ մեկ սուր և ոչ մեկ նահատակություն կրնա ընկճել մեզ այնքան ատեն, որ «զինու հոգւով» կմղենք գոյատևման մեր պայքարը:

Սիրելի ժողովուրդ, 27 դարեր առաջ, երբ հրեա ժողովուրդը կորսնցուց իր երկիրը և գերի տարվեցավ Բաբելոն, անոնք պանդխտության երկրին մեջ, նստած գետին եզերքը, լացի աղիողորմ երգեր կերգեին, երբ իրենց տերերը սկսան պահանջել, որ ուրախության երգեր երգեն իրենց համար: Իսկ իրենք, հարց կուտային և կըսեին. «զիա՞րդ օրհնեսցուք զօրհնութիւնս Տեառն յերկիր օտար»: Չէին կրնար մոռնալ իրենց հայրենիքը և կըսեին. **«Թէ մոռացայց զքեզ Երուսաղէմ, մոռասցի զիս աջ իմ: Կցեսցի լեզու իմ ի քիմս իմ, թէ ոչ յիշեցից զքեզ, Երուսաղէմ, սկիզբն ուրախութեան իմոյ»:**

Այսօր, մենք ևս, ցրված աշխարհի չորս կողմերուն, օտար երկինքներու տակ, եթե ունինք երգ մը երգելիք, մե՛կ երգ միայն պիտի ժայթքի մեր սիրտերեն. «Եթե մոռնամ քեզ, Էջմիածին, թող մոռնա զիս իմ աջս, թող լեզուս քիմքիս կպի, եթե մոռնամ քեզ, Էջմիածին, աղբյուրը իմ ուրախությանս»:

Մեր ժողովուրդը նայած է միշտ Ս. Էջմիածնին իբրև իր Երուսաղեմը, Սիոնի այն բարձունքը, ուրկե եկած է իրեն Աստուծո խոսքը, հավիտենական խոսքը. «Ի Սիոնէ ելցեն օրէնք և բանք Տեառն յԵրուսաղէմէ»: Խոստումի լեռն է ան, խորհրդանիշ՝ ապագային մեր միության, հայ հոգիին ծնունդ տվող նոր Սիոնը, ուրկե պիտի լսենք միշտ Ավետարանին, նոր օրենքին՝ սիրո և եղբայրության ձայնը:

Մեր աղոթքն է, որ տեսիլքի լեռը ըլլա ան միշտ, և մեր ժողովուրդը շարունակե լսել մեր օրերու մեր մեծ Առաքյալին, մեծ Տեսանողին, մեծ Առաջնորդին հայրապետական խոսքը, իբրև այսօրվան մեր կյանքին սրբական օրենքը՝ հրավեր սիրո, կապ եղբայրության, կոչ խաղաղության, ներշնչում ապագային գիտակցության, լույս՝ դեպի հայրենիք երկարող մեր ճանապարհին, խրախույս՝ գոյատևման մեր պայքարին, մխիթարություն՝ մեր տառապանքին ու ցավերուն և վերջապես՝ անխորտակելի կամուրջ՝ մեր սիրտերը կապող մեր հայրենիքին և երկրին:

Աղոթենք, որ չըլլա թե լսվի մեր ժողովուրդի բերանեն տարակուսանքի և անհավատության բառ, չարտահայտվի ոչ մեկ կասկած և չբանաձևվի ոչ մեկ հարցում, ինչպես եղավ, այն ատեն, Հիսուսի նկատմամբ, թե՝ ո՞վ է սա:

Սա մեր Հայրապետն է, մեր Կաթողիկոսը, որ Ս. Էջմիածնի այս բարձունքեն, Հիսուսի խոսքերով, կփափաքի, ինչպես հավը՝ իր ձագերը, այնպես ալ ինք՝ իր թևերուն տակ հավաքել մեր ժողովուրդի բոլոր սերերը, դեպի սրբական հողը Հայաստանի: Ան մեր Քահանայապետն է, որ կներշնչե մեր աղոթքը առ Աստված, որպեսզի չըլլա թե տկարանանք մեր հույսին, մեր հավատքին, հարության և վերածնունդի ձգտող մեր իդեալին մեջ: Ան սրբական Առաքյալն է մեր Հայաստանին, որ Պողոս Առաքյալի նման, կտանի ամբողջ աշխարհի հայության մեր հայրենիքի ողջույնը, բարի լուրը մեր փրկության, մեծ ավետիսը այն ապահովության, որուն մեջ կապրի մեր ժողովուրդը, շինարար, կառուցանող, ստեղծագործ ժողովուրդը՝ վստահած իր ուժերուն և պետական իմաստուն ղեկավարության:

Կաղոթենք, որ անսպառ ըլլա Ձեր ձայնը, անենկուն՝ Ձեր շունչը, որ չմթագնի Ձեր տեսիլքը, որ վառ մնա Ձեր հոգիին լույսը, և մենք, ամեն անգամ, որ նայինք Ձեզի, փառք տանք Աստուծո, որ եկաք մեր ժողովուրդին իբրև նոր Լուսավորիչ մը՝ տանելու մեզի նոր բարձունքներու, որուն վերերեն պիտի ըսենք շարունակ. «Օրհնեալ որ գաս յանուն Տեառն, օրհնեալ որ գալոցդ ես»: Ամեն:



Տ. ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՉԱՔԱԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«Զի որդիք աշխարհիս այսորիկ իմաստագոյնք են քան զորդիս լուսոյ յազգս իւրեանց» (Ղուկ. ԺԶ 8):

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ,

Այս խոսքերը մեր Տեր Հիսուս Քրիստոսն է արտասանել իր պատմած մի առակի վերջում: Առակը հետևյալն է.

Կար մի մեծահարուստ տանուտեր, որ իր կալվածքների վերահսկողությունը հանձնում է մի վստահելի մարդու՝ իր տնտեսին: Այնպես է պատահում, որ տնտեսը սկսում է կամաց-կամաց յուրացնել փողերը, վեղծումներ անել: Լուրը հասնում է տանուտերին: Սա հրավիրում է տնտեսին իր մոտ և նրանից հաշիվ է պահանջում: Իսկ տնտեսը, իմանալով, որ ինքն անխուսափելիորեն վտարվելու է, ուզում է իր ապագան ապահովել և պարտապանների պարտքի մի մասը թողնում է նրանց: Մեծավորն այս իմանալով, նրան վտարելով հանդերձ, գովում է նրա իմաստությունը և դառնորեն եզրակացնում, որ «այս աշխարհի որդիները ավելի իմաստուն են, քան լուսո որդիները»:

Մեր Տիրոջ այս խոսքը, մոտ երկու հազար տարիներ առաջ ասված, բացում մեկնաբանությանց նյութ է դարձել: Մարդկանց հատկապես կարմացրել է այն, որ Քրիստոս ինչպե՞ս է գովում անիրավի ճարպկությունը և նույնիսկ այս աշխարհի գործերում նրա «իմաստությունը» գերադասում Լուսո որդիներից: Բայց որպեսզի լավ հասկանանք մեր Տիրոջ արած դատողությունը, պետք է իմանանք, թե նա ի՞նչ է հասկանում «իմաստուն» և «Լուսո որդիներ» ասելով:

Մեզանից մոտ 40 տարիներ առաջ, հենց այն վայրերում, որտեղ շրջել էր մեր Տերը, Մեռյալ ծովի հյուսիս-արևմտյան ափին, պատահմամբ գտնվեցին վանական մի համայնքի գրադարանն ու ձեռագրերը: Այդ համայնքի մարդիկ, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի հետ ժամանակակից են եղել, իրենք իրենց կոչել են «Լուսո որդիներ» և ապրել են Մեսիայի սպասումով: Վերոհիշյալ ձեռագրերի մեջ կա մի գործ, որը կոչվում է «Լուսո որդիների պատերազմը ընդդեմ խավարի որդիների»:

Այժմ տեսնենք, թե ի՞նչ է գրված Լուսո որդիների մասին երկու հազարամյակների միջից մեզ հասած այդ «Համայնքի Կանոնագրքում»:

«Աստված ստեղծել է մարդուն, որպեսզի աշխարհը ղեկավարի, և նրա համար նշանակել է երկու ոգիներ, որ նրանցով առաջնորդվի, մինչև Տիրոջ այցելության ժամանակը. ճշմարտության և ստի ոգիները:

Նրանք, որ ծնված են ճշմարտությունից՝ բխում են լույսի աղբյուրից. բայց ստի ծնունդները բխում են խավարից:

Առաքինության բոլոր որդիները ղեկավարվում են Լույսի Իշխանի կողմից և քայլում են լույսի ճանապարհով:

Բայց խավարի որդիները խավարի ուժերի կողմից են ղեկավարվում և քայլում են խավար ճանապարհներով:

Խավարի իշխանը մոլորեցնում է առաքինության բոլոր որդիներին, և մինչև նրա վախճանը, նրանց բոլոր մեղքերը, չարագործությունները, մեղսագործությունները և ապօրեն արարքները նրա իշխանությունից են՝ Աստուծո խորհրդավոր օրենքներով:

Նրանց ամեն մեկ պատիժն ու տագնապը նրա հալածանքի հետևանքն են. որովհետև չարի բոլոր ուժերը ուզում են Լուսո որդիների տապալումը:

Բայց Աստված և իր ճշմարտության հրեշ-

տակը Լուսո որդիներին օգնության պիտի հասնի:

Որովհետև նա՛ ստեղծեց լույսի և խավարի ոգիներին և ամեն մի արարք նրանց վրա հիմնեց և ամեն գործունեություն այդ ճանապարհով հաստատեց:

Եվ Նա մշտապես սիրում է մեկին և հրաժվում է հավիտենապես նրա գործերով. բայց մյուսի խորհրդից խրտչում է և նրա ճանապարհները հավիտենապես ատում:

Աշխարհում լույսի ճանապարհները սրանք են, մարդու սրտի լուսավորման համար, և որպեսզի ճշմարիտ առաքինության բոլոր արահետները իմացվեն, և Աստուծո օրենքների վախը բույն դնի մարդու սրտում՝ նշենք դրանք.

Հեզության ոգի, համբերություն, առատ սեր, անհատնում բարություն, հասկացողություն և խելացիություն:

Հույժ իմաստության ոգի, որ վստահում է Աստուծո բոլոր գործերին և նրա գթասրտությանն է ապավինում:

Ամեն նպատակ ըմբռնելու խորագիտություն, եռանդուն պաշտպանություն արդար օրենքների, սուրբ միտում և սրտի հավատարմություն. ճշմարտության որդիների հանդեպ անսահման սեր, վմայելի անմեղություն, որին տհաճ են բոլոր անմաքուր կրքերը. հեզ վարվելակերպ, որը ծագում է ամեն ինչ հասկանալուց, և ճշմարտության հավատարիմ գաղտնապահություն:

Սրանք են Լույսի ոգու խորհուրդները՝ այս աշխարհի ճշմարտության որդիներին:

Եվ այս ոգով բոլոր քայլողներին այցելելու է ամոքումը, երկար մի կյանքի խոր խաղաղությունը և պտղաբերությունը, ինչպես և մշտական ամեն օրհնանք և հավիտենական հրճվանք անվերջանալի կյանքում, փառքի պսակ և վեհափառության պատմուճան անսպառ լույսի մեջ»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, այս բոլորը ամփոփել է հետևյալ երկու մտքերի մեջ. «Սիրել Աստծուն ամբողջ սրտով, ամբողջ հոգով և ամբողջ մտքով, և քո անձի նման սիրել քո հարևանին»: Իսկ վարձատրությունը ուրիշ բան չէ, եթե ոչ Երկնքի Արքայությունը:

Բայց լավ հասկանալու համար այս աշխարհի որդիների՝ այսպես կոչված «իմաստությունը», պետք է հարկադրաբար ծանոթանանք նաև նրա՛նց հատկանիշներին: Ահա՛վասիկ դրանք.

«Իսկ խավարի ուժերի ճանապարհները հետևյալներն են. ագահություն, արդարության հանդեպ անտարբերություն, չարություն և ստություն, հոխորտանք և հպարտություն, խաբեբայություն և կեղծիք. դաժանություն, անսպառ չարամտություն, անհատնում անսրտություն և ամբարտավանություն. կրքի ալեկոծության տակ կատարված գարշելի արարքներ, լպիրշ անմաքրություն և հայհոյող լեզու, աչքի կուրություն և ականջի ծանրություն, խստապարանոցություն և սրտի կարծրություն. այնպես որ մարդ քայլում է խավարի և խարդախության բոլոր ճանապարհներով»:

Սիրելիներ, մեկ բառով ասած՝ սա խղճից զուրկ վիճակ է: Հենց այս երկրի որդիների իմաստությունը կայանում է նրանում, որ նրանք կարող են առանց խղճի արգելքի գործել, որովհետև խիղճը սահման է դնում: Նրանք կարող են միջոցների մեջ խտրություն չդնելով գործել, որ հաջողության հասնեն: Եվ այսպիսով ավելի ճարպիկ են համարվում այս աշխարհի գործերում:

Ապա կանոնագրքում խոսվում է ամեն մեկին հասանելիք դատաստանի մասին և ասվում.

«Մարդկանց բոլոր որդիների բնությունը ղեկավարվում է այս երկու ոգիների կողմից, և իրենց կյանքի ընթացքում մարդկային բոլոր բաղմությունները այս բաժանումներին մասնակից են և քայլում են երկու ճանապարհներով էլ: Եվ նրանց գործերի ողջ վարձատրությունը հավիտենականության համար հիմնվելու է նրա վրա, թե ինչքանով մարդ ընթացել է այս կամ այն ճանապարհով:

Որովհետև Աստված հաստատել է որդիներին հավասար կշռով մինչև ժամանակի վախճանը, և նրանց բաժանման միջև մշտական ատելություն է սերմանել:

Ճշմարտությունը խորշում է կեղծիքի գործերից. և կեղծիքը ատում է ճշմարտության բոլոր ճանապարհները:

Եվ նրանց պայքարը կատաղի է, որովհետև միատեղ չեն ընթանում»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, Քրիստոս նույն այս միտքը ամփոփելով՝ ասել է. «Չեք կարող երկու տիրոջ ծառայել»:

Երկու հավարամյակներ առաջ մեր Տիրոջ կողմից խոսված անիրավ տնտեսի սույն առակը լսողների մեջ հավանաբար եղել են նաև այս համայնքի մարդիկ, որոնք շատ լավ են հասկացել, թե ինչի էր ակնարկում Հիսուս:

Բայց թերևս չեն հասկացել, որ Նա եկել էր երկու ճանապարհները վերածելու մեկի՝ լույսի ճանապարհի: Նա եկել էր խավարի մեջ խարխափողներին ուղիղ ճանապարհ առաջնորդելու, լույսի զավակներ դարձնելու:

Սերնդից սերունդ՝ յոթանասուն, յոթանասունյոթ սերունդներ իրար են փոխանցել այս լույսը, որ եկել-հասել է մեզ: Այդքան ժամա-

նակը քիչ է եղել աշխարհը լրիվ լուսավորելու համար: Խավարը դեռ կա:

Իսկ քրիստոնեությունը փիլիսոփայություն չէ, այլ՝ խղճի վրա հիմնված կրոն, խիղճը արթնացնող կրոն: Դեռ շատ գործ կա անելիք:

Այս աշխարհության այս օրերին, ուրեմն, մնում է, որ մենք էլ սթափվենք, արթնացնենք մեր խիղճը ու քայլենք լույսի ճանապարհով, որպեսզի արժանանանք Լուսո որդիներին սպասվելիք հարության:

«Մինչդեռ պլոյսն ընդ ձեզ ունիք, հաւատացէք ի լոյսն, զի որդիք լուսոյ եղիջիք» (Հովհ. ԺԲ 36):





ՄԵԾԻ ՊԱՀՈՑ ՇՐՋԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Մարդ էակը իր ողջ կյանքի ընթացքում ձգտում է հասնել բարոյական բարուն: Մարդու մեջ ի հայտ եկող բարոյական ձգտումը աստվածային պատգամների կենսագործմանը հասնելն է: Աստված բարոյական բարին է: Նրա սահմանած կյանքը մարդու համար անցնում է անկատարից դեպի կատարյալը, երկրայինից դեպի երկնայինը:

Այս մտածումներն են առաջանում մեր մեջ այս օրերին, երբ սկսվում է Մեծի պահոց շրջանը, որ իր ներշնչող հուլառատ մթնոլորտով ջերմացնում է մարդկանց մեղավոր հոգիները և թելադրում նրանց սթափվել մի պահ՝ մաքուր սրտով ու անմեղ հայացքով նայելու համար իրենց «Սուրբ, Սուրբ, Սուրբ Տէր զօրութեանց»-ին (Եսայի Զ—3):

Ճշմարիտ պահեցողության մասին Քրիստոս ասում է. «Եւ յորժամ պահիցէք, մի՛ լինիք իբրեւ զկեղծաւորսն տրտմեալք, որ ապականեն զերեսս իւրեանց, որպէս զի երեւեցին մարդկանց թէ պահիցեն. ամէն ասեմ ձեզ, այն իսկ են վարձք նոցա» (Մաթ. Զ 16):

Պահքը ինքնըստինքյան ո՛չ առաքինություն է և ո՛չ էլ վարձք: Նա իր արժանիքը ստանում է այն ժամանակ, երբ կատարվում է անկեղծ և հեզ սրտով: Օրինակ՝ Քրիստոս նկատում էր, որ պահքը փարիսեցիների մոտ ոչ թե բարեպաշտության անկեղծ դրսևորում էր, այլ՝ սնապաշտություն, որովհետև նրանց սրտերը լի էին մեծամտությամբ, իսկ իրենց դեմքի վրա աշխատում էին հեզություն արտահայտել: Նրանք ամեն ինչ անում էին ի ցույց մարդկանց: Հենց դրա համար էր, որ Փրկիչը պատվիրում էր տրտմած երեսների փոխարեն հեզ սիրտ ունենալ: Եվ վերջապես պահքը ի հաճույս մարդկանց չպիտի լինի, այլ՝ ի փառս Աստծու: Քրիստոնեությունը սովորեցնում է, որ պահեցողությունը բեռ չպիտի լինի մեզ համար, այլ՝ ուրախություն, սրբապա՜ն ուրախություն: Այդ է սովորեցնում մեզ նաև Եկեղեցին իր սահմանած կանոնով՝ պահոց օրերով:

Պահոց օրերին աշխատում ենք մեր ֆիզիկական մարմինը հեռու պահել հաճույքներից ու վայելքներից, իսկ հոգևոր կյանքը աճեցնել կրոնական խոկումներով ու պաշտամունքով: Այդպիսի երկար մի շրջանի է հրավիրում մեզ Մեծի պահոց ժամանակաշրջանը:

Բարեկենդանի վվարթ տոնակատարությանը հաջորդում են Մեծի պահոց լռության և խոկումի օրերը: Մարդկային կյանքը սովորաբար ընթանում է փոփոխություններով և վայրիվերումներով, հոգեկան մակընթացության և տեղատվության իրարահաջորդ փուլերով. անսանձ կրքի փոթորկումներին հաջորդում են զգաստության խաղաղ պահերը: Մեծի պահոց շրջանում Եկեղեցու կոչով հավատացյալները հրավիրվում են խոկումի ու աղոթքի, լռության ու խորհրդավոր առանձնության:

Իսկ ո՞րն է այդ խորհրդի նշանակությունը:

Փրկչի առաջնորդությամբ, նրա ցույց տված օրինակով, յուրաքանչյուր հավատացյալ մարդ աղոթքի ու խոկումի այդ շրջանը անցկացնում է ներքնապես մեկուսացած արտաքին աշխարհից:

Մարդը որպեսզի էլ ավելի կարողանա ճանաչել իրեն, որպեսզի կարողանա հասկանալ իր ներքին աշխարհից ծնունդ առած զգացումները, առանձնանում է՝ հետևելով Եկեղեցու կոչին: Առանձնանալով՝ Աստուծո առաջ նա բացում է իր հոգին և հրեշտակների ներկայությամբ ապրում աղոթքի ու խոկումի մեծ շրջան, որ Հայ Եկեղեցում ընդունված է անվանել ՄԵԾԻ ՊԱՀՈՑ քառասնօրյա շրջան:

Այդ շրջանը հնարավորություն է տալիս մարդուն ամփոփվելու ինքն իր մեջ, բաց անելու իր ներաշխարհը, պատասխանելու իրեն հուզող հապարավոր հարցերին և գտնելու այն ուղիղ ճանապարհը, որ կարող է իր կյանքը մոտեցնել աստվածային վեհ պատգամների իրագործմանը: Այդ շրջանում նա խորապես կապվում է Եկեղեցու հետ, ըմբռնում է աղոթքի ջերմացնող զորությունը, սթափվում է մի պահ անցյալի իր մոլորություններից և արթնության աչքերով տեսնում բարու, արդարության և իմաստության Աստծուն: Այդ երջանիկ ու լուսավոր րոպեին նրա հոգում իշխում է բարոյական կատարելության գաղափարը, որին հասնելու համար նա անցնելու է քառասնօրյա մի շրջան՝ հյուսված աղոթքներով ու շարականներով, ավետարանական ընթերցումներով, այնչափ գեղեցիկ ու ազդեցիկ, տպավորիչ ու հափշտակիչ, սրտաբուխ ու հոգեբուխ երգերով:

Շարականներ, մեղեդիներ, երգեր, ավետարանական ընթերցումներ, աղոթքներ,—ահա այն ամենը, որոնցով սնվելու և ծաղկելու է հավատացյալ մարդու հոգին քառասնօրյա պահոց շրջանին՝ աղոթքի ու խոկումի հուզառատ պահերին:

Մեծի պահոց շրջանը իր խորհրդով, դրսևորման իր գեղեցիկ ձևերով քրիստոնյա մարդու համար շողեր է սփռում տարվա մնացած բոլոր օրերի վրա: Այդ շրջանը խորհրդանշում է մեր Փրկչի՝ Քրիստոսի քառասնօրյա ծոմապահությունը: Չէ՞ որ Տերը փորձչին հետևյալ պատասխանը տվեց. «...գրեալ է՝ թէ ո՛չ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ, որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ» (Մատթ. Դ 4): Չէ՞ որ Տերը մկրտությունից անմիջապես հետո, թողնելով Գալիլեայի ջրերի և դաշտերի հոգեվայել տեսարանները, լքելով ժողովրդի բազմությունը, առանձնացավ անապատում:

Առանձնությունը մարդու համար ինքն իրեն գտնելու և ճանաչելու միջոց է: Առանձնության մեջ է, որ մարդ զգում է իր նմանի գեղեցկությունն ու վեհությունը, սկսում է սիրել նրան, նվիրվել նրան և նույնիսկ որոշ դեպքերում դիմել զոհողության: Հիսուսի համար, Իր առաքելությունը դեռ չսկսած, քառասնօրյա առանձնությունը նրա պատրաստության շրջանն էր: Նաև իր առաքելության շրջանին նա հաճախ էր առանձնանում՝ աղոթելու, երկնային հորից ուժ ստանալու համար: Իր փորձության ժամանակ Հիսուս հաղթում է սատանային իր անձի մեջ, իսկ առաքելության ընթացքում նա ուզում էր հաղթել սատանային նաև մարդկանց մեջ: Չէ՞ որ տիեզերական կյանքը է՛լ ավելի կգեղեցկանար այդ հաղթությամբ: Հիսուս սկսում է իր առաքելությունը և հաղթում: Նրա հաղթության շնորհիվ փրկվում է մարդկությունը: Այնվակաև ուժի զորության շնորհիվ միայն մարդն ընդունակ է ճանաչելու և գնահատելու հաղթության այդ մեծ նշանակությունը:

Մարդ միշտ ձգտում է կատարելության: Մարդու կյանքի նպատակը կատարելության հասնելն է. չէ՞ որ քրիստոնյայի ամբողջ կյանքի ընթացքը պիտի պսակվի այդ հանգրվանում: Ունայնություն ունայնությանց կարող է համարել մարդը ամեն ինչ և իրեն մի չնչին մասնիկ՝ անհուն տիեզերքի անսահմանության մեջ: Բայց քրիստոնեության վեհ գաղափարների ճիշտ ըմբռնումը մարդուն բերում է ինքնաճանաչման, կատարյալին ձգտելու իմացության: Այդ ճանապարհին է ահա, որ մարդու համար մեծ դեր է խաղում աղոթքը:

Աղոթքը մարդու համար Աստուծո հետ հաղորդակցության միջոց է: Աղոթքը մարդու համար ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ «Սրտի խորքերից խոսք ընդ Աստուծո»: Աղոթքն է Աստուծո ներկայությունը վայելելու միջոցը, նրա հետ շփվելու առիթը, նրանով ջերմանալու պահը, նրանից ներշնչվելու պատեհությունը:

Մարդ աղոթքի միջոցով է, որ Աստծուն շարունակ զգում է իր մեջ: Նույնը նաև Հիսուս, որ ինքն իրեն Աստծու մեջ և Աստծուն իր մեջ էր զգում (Հովհ. ԺԷ 21):

Աղոթքի ազդեցությունը այնքան մեծ է մարդու վրա, որ հաճախ թվում է, թե հոգին անջատվելով մարմնից՝ ճախրում է կապույտ եթերում, հաղորդակից դառնալով հրեշտակներին: Ճշմարիտ աղոթքը մտքի բալասանն է: Ճշմարիտ աղոթողի համար աղոթքը դառնում է ապաշխարության, զղջումի միջոց:

Իր էության խորքում այսպիսի պահեր է ապրել Նարեկացին: Նարեկացին այն կանթեղն է, որ լույսեր է ցողել սևակնած միջնադարի վրա: Նա այդ լույսերը առաքել է դարերին: Այդ լույսերի շառափներով մենք այսօր հագեցնում ենք մեր ծարաված հոգիները:

Նարեկացին իր խորության մեջ է նկարագրում մեղքը: Սակայն նա չի մնում սոսկ մեղքի նկարագրող, նա կոչ է անում հավատացյալին ապաշխարության. «Զի Աստուած մեծագութ է եւ բազումողորմ»: Մեծ է Աստուծո սերը: Նարեկացին կոչ է անում բոլորին ապաշխարության: Ինչո՞ւ, որովհետև Աստուծո համար հաճելի է մեղավորի խոստովանությունը, ճշմարիտ ապաշխարողի ողբն ու աղաղակը: Չէ՞ որ ամեն ինչ կատարվում է զղջումի և սիրո միջոցով: Դրանից չէ՞, որ խուսափեց մեծամիտ փարիսեցին, իսկ անարգված մաքսավորը ընդունեց ապաշխարության կոչը և վերադարձավ ինքն ի-

րեն: Այլաշխարությունը նոր կյանքի սկիզբն է: Մենք ամենքս էլ պետք է հեզությամբ մոտենանք Աստծուն և, մաքսավորի նման, պաղատելով ասենք՝ «Աստուած, քաւեա զիս զմեղաւորս»: Երկնքի արքայության դռները բաց կլինեն մեր առջև, եթե մեր հանցանքները խոստովանելով՝ Աստուծո ողորմությանը հանձնենք մեզ: Հեզ և խոնարհ սրտով հանցանքը խոստովանելը առաջին պայմանն է, որ մենք պետք է կատարենք, որպեսզի, իբրև ժառանգորդ, քաղաքացի, երկնքի արքայություն կարողանանք մտնել:

Մեղքը միշտ ուղեկցում է մարդուն: Ադամի մեղանչումով մեղանչեց ողջ մարդկությունը: Բայց չէ՞ որ հիվանդության հետ միշտ կա նաև բուժիչ բալասանը: Ինչպես դեղն է բուժում և ապնվացնում մարմինը, այնպես էլ զղջումն ու խոստովանանքը բուժում են հոգին, իսկ աղոթքը՝ կենդանացնում և լուսավորում է այն:

*
* *

Մեծի պահոց շրջանը ընդգրկում է վեց կիրակի: Կիրակին նկատվում է հանգստյան օր, քրիստոնյա աշխարհի համար՝ նաև օրհնության, փրկության օր: Կիրակի օրը մարդիկ աշխարհային հոգսերը պետք է մի կողմ թողնեն և մտքով ու սրտով վերանան առ Աստուած, որ ոգի է և խաղաղություն: Առաքյալը գրում է. «Մերձեցարուք առ Աստուած, եւ մերձեսցի առ ձեզ» (Յակոբոս Դ 8):

Մեծի պահոց շրջանի վեց կիրակիների հետ կապված են աստվածաշնչական վեց պատմություններ: Արտաքնապես իրար հետ ոչ մի կապ չունեցող այդ վեց պատմությունները միմյանց հյուսված են օրգանապես, կարծես մի շղթայի վեց օղակներ լինեն:

Առաջին կիրակին Բարեկենդանի կիրակին է, դրախտային վվարձության վայելումն է, որին հաջորդում է Արտաքսման կիրակին, որն արտահայտում է նախաստեղծների մեղանչումը և անհնազանդությունը: Երրորդ կիրակին Անառակի կիրակին է, որը պատմում է անառակ որդու մեղանչումին ու անհնազանդությանը հաջորդող անկեղծ զղջումը: Չորրորդը՝ Տնտեսի կիրակին, պատմում է մի աշխարհի որդու խորագիտության մասին, որից պետք է սովորեն լուսո որդիները: Հինգերորդը՝ Դատավորի կիրակին, պատմում է այրի կնոջ համբերության ու հարատևության մասին: Այդ պատմությունը սովորեցնում է աղոթքի մեջ անձանձրույթ լինել: Եվ, վերջապես, վեցերորդ կիրակին պատմում է Երկնային Թագավորի, անմահ Փեսայի երկրորդ գալստյան մասին:

Բուն Բարեկենդան.—Խորհրդանշում է նախաստեղծների դրախտային վվարձություններով ու վայելումներով լի կյանքը: Առաջին մարդիկ երջանիկ կյանք էին վարում, նրանց համար երկիրը անմահական մի պարտեզ էր: Աստուծո հետ ապրելը նրանց ամենամեծ երջանկությունն էր: Աստուծո ձայնը նրանց ականջին էր հասնում, իսկ սերը՝ սրտին: Նրանց օտար էր ամեն կարիք: Թե ո՞րն էր բարին և ո՞րն էր չարը, այդ նրանք չգիտեին, անմեղ վիճակի մեջ էին: Բայց անմեղությունը դեռևս սրբություն չէր:

Անմեղ վիճակը աստվածային պարգև է, իսկ սրբությունը մարդու ջանքով ձեռք բերված նկարագիր: Նախաստեղծները անհնազանդ են գտնվում:

Արտաքսման կիրակի.—Անհնազանդության հնարավորությունը միշտ առկա է մարդու մեջ, նույնպես և փորձությունը: Այն չպետք է պակասի: Փորձության մեջ է, որ մարդու ուժերը վորանում են, հավատարմությունը՝ ամրապնդվում: Սուրբ Գրքի փորձության պատմությունը այլաբանորեն յուրաքանչյուր անհատի փորձության պատմությունն է: Ամեն ոք իր երջանիկ օրերում իր դրախտն է ունեցել և կորցրել է այն: Ամեն մարդու կյանքի մեջ տնկված է գիտության, բարու և չարի ծառը: Ամեն մարդու էլ մոտենում է փորձության օձը, որպեսզի հեռացնի նրան Աստծուց: Երբ հանցանքը վիշտ և տրտմություն է պատճառում, կյանքի ճանապարհի բաժանման տեղում Քերովբեն, կրակե սուրը ձեռքին կանգնած, ասում է յուրաքանչյուրին՝ դու պետք է առաջ գնաս, որովհետև ետ գնալ այլևս չես կարող: Մարդը պատվիրանվանց չէր լինի, եթե Աստծուն բարի հոր տեղ ընդուներ և նրա պատվիրաններն էլ փրկարար ճանաչեր: Սուրբ Գրքի փորձության պատմությունը ցույց է տալիս, որ մարդիկ արհամարհեցին Աստուծո պատվիրանը և հեռացան Աստծուց: Սակայն հանցավորը վերջ ի վերջո կգա այն գիտակցության, որ մարդկային սիրտը առանց Աստուծո խաղաղություն չի կարող գտնել, և առանց դարձի չի կարող փրկություն լինել:

Անառակի կիրակի.—Այս առակը մարդկային կյանքի և սրտի պատմությունն է: Այս առակը արտահայտում է քրիստոնեության ամբողջ էությունը: Սա մի ավետարան է Ավետարանի մեջ: Այստեղ պարզ երևում է, թե ինչպես որդին իր անմեղությամբ ընկնում է հանցանքի մեջ, թե ինչպես հանցանքը տանում է դեպի կործանում, կործանումը՝ դեպի ապաշխարություն, ապաշխարությունը՝ դեպի հավատ, իսկ հավատը՝ դեպի ջնորհ: Առակի հերոս՝ կրտսեր որդու կյանքը անցնում է հետևյալ պատկերով. ա. Որդին հոր մոտ. բ. Որդին հեռանում է հորից. գ. Որդու

վերադարձն առ հայր: Առակը պարզ կերպով թելադրում է մեզ, որ մենք կարող ենք մխիթարվել Աստուծո հայրական գթառատ սիրով, որ մենք ուրախությամբ կընդունվենք Նրա արքայության մեջ, եթե ապաշխարությամբ դառնանք դեպի Աստված: Այստեղ չպետք է մոռանալ առակի խրատական բաժինը, հորդորական մասը, որ Աստված մեղավորին սառը և անգութ կերպով չի մերժում իրենից, այլ ներում է նրան և խնդությամբ ընդունում:

Տնտեսի կիրակի.—Այս առակը լավ հասկանալու համար նախ ասենք, որ լուսո որդիները նրանք են, որ ճշմարիտ լույսով՝ Հիսուս Քրիստոսով լուսավորել են իրենք իրենց: Աշխարհի որդիները, հակառակը, ջանում են կուտակել հարստություն և կյանքի վայելքներ ձեռք բերել: Մի աշխարհի որդի, մի անիրավ տնտես, որ իր տիրոջը հապար ու մի ձևերով խաբել էր, մի օր կանչվում է իր տիրոջ մոտ և զրկվում պաշտոնից: Սակայն տնտեսը խորագետ է գտնվում. տիրոջ մերժումը լսելուց հետո սկսում է ապագայի մասին մտածել: Ա. Որոնում է միջոցներ. բ. Չի մոլորվում. գ. Ընտրում է միջոցներից ամենալավը. դ. Գործադրում է իր ընտրած միջոցը. ե. Արագ կերպով գործին մասնակից է դարձնում նաև ուրիշներին: Տերը գովում է իմաստուն ծառայի արարքը: Հիսուս ո՛չ խորագետ լուսո որդիներին հորդորում է վատ օրինակից լավն առնել, ոչ թե խորագետ լինել ստախոսության մեջ, այլ՝ ճշմարտության, ոչ թե խորագետ անհավատարմության մեջ, այլ՝ հավատարմության, ոչ թե անիրավության, այլ՝ իրավավարության: Ամեն ինչ ավելի լավ ընթացք կունենար, եթե լուսո որդիները աշխարհի որդիների նման խորագիտություն, եռանդ, հաստատակամություն, արագ վճռականություն ունենային իրենց գործունեության մեջ:

Դատավորի կիրակի.—Մի դատավոր է լինում մի քաղաքի մեջ և մի աղքատ այրի: Այրին, անիրավության զոհ դառնալով, ուզում է, որ դատավորը իր դատը տեսնի. «Իսկ անիրաւ դատաւորին, որ ի քաղաք ջինութեան մերոյ ոչ ունելով վերկիւղ քո սուրբ, եւ անպատկառ ի մարդկանէ ոչ առնելով դատ զրկելոյն» (Շարակնոց): Թեպետև դատավորը երկար ժամանակ չէր ուզում դատը տեսնել, բայց և այնպես իր մտքում ասում էր՝ թեև Աստծուց չեմ վախենում և մարդկանցից չեմ ամաչում, բայց այն բանի համար, որ այրի կինը ինձ հոգնեցնում է, նրա դատը կտեսնեմ:

Քրիստոս բացատրում է, որ Աստված արդարություն կանի իր ծառաներին, եթե նրանք գիշեր-ցերեկ աղոթեն և չձանձրանան:

Գալստյան կիրակի.—Աշխարհը իր գոյության ողջ ընթացքում շատ գալուստներ է տեսել, սակայն ոչ մի գալուստ չի ունեցել այնպիսի մեծ նշանակություն ու կարևորություն, որքան մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի գալուստը: Բոլոր ժամանակներում եղել են մեծաձայն, շռնդալից գալուստներ, բայց ոչ մի գալուստ չի ունեցել այն փառքն ու նշանակությունը, որ ունեցավ մեր Տիրոջ գալուստը: Եկավ Փրկիչը, համբուրեց մարդկության ճակատը: Նրա դառնություններն ու տառապանքները, որպես փշե պսակ, դրեց իր ճակատին: Այդ գալուստը բացեց դրախտի դռները և քանդեց դժոխքի կապանքները: Նա եկավ ու հաստատեց նաև երկրորդ գալուստը, որին հավատում է ուղղափառ Եկեղեցին և մենք՝ նրա անդամներս:

Մեծի պահոց շրջանը հոգեկան և ֆիզիկական պատրաստության շրջան է՝ ընդունելու և փառաբանելու համար Հիսուսի հրաշափառ Հարությունը:

ՍՄԲԱՏ ՍԱՐԿԱՎԱԳ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ



ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հայրապետն էր մեր առաջին,
Առաջինը, որ տեսլացավ միածնաէջ մեր արարչին—
Հրաշքների հրաշքին, որ իր ոսկեհուռ մուրճի վարկով
Շատրվանեց հայոց հողին տաճարն իր սուրբ հաղթանակով:

Վեհամեծար, աստվածատուր—հայրապետն էր մեր առաջին,
Որն հաստեց մեր կենաց երգը և կնիքը դրեց խաչին,
Միտքն էր նրա, որ հղացավ ու քարերով Արարատի
Այրարատյան հովտում հիմնեց այբուբենը մեր հավատի:

Անեղրական, աստվածատես—հայրապետն էր մեր առաջին,
Որն հավերժի իմաստն առավ մեծակառույց իր լույս աջին
Եվ կախեց իր կանթեղն անեղ գագաթն ի վար Արագածի՝
Աստղերն արծաթ, վառած մոմեր, կանթեղի մեջ արեգնածին:

Հայ առաջին ճարտարապետ—հայրապետն էր մեր առաջին,
Որն իր հոգու աչքերի մեջ ճառագայթեց գյուտը խաչի,
Բացեց դուռը երկինքների ու փրկության մեր բանալին
Կապեց հավետ մեր հավատքի անկիսելի ոսկե թելին:

Արշալույսով ոգեշնչված—հայրապետն էր մեր առաջին,
Որ լույսն երկնեց Խորվիրապի խորխորատում խավարչտին,
Մեկ ինքնության, իմաստության գերբ ու դրոշ տվեց անխախտ՝
Վրան գույներ ծիածանի ու արևը ամենահաղթ:

Մեր նահապետ, մեծ բանաստեղծ —հայրապետն էր, որ առաջին
Տեսավ բոլոր տեսիլքների տեսիլքը վեհ, աստվածածին,
Եղավ բոլոր մեր հայրերի աղոթքների երգ երգոցը,
Նախադուռը մեր առաջին ու հավատքի մեր Մաշտոցը:

Խորախորհուրդ ու հեռատես—հայրապետն էր մեր առաջին,
Որ թափանցեց երկինքների անհունի մեջ աստեղածին,
Ու տվեց մեկ հեռագնա, աստեղային սեր ու կարոտ,
Եթերային կապույտ ճամփա, կապույտ երակ ու առավոտ:

Ամենատես ու կորավար—հայրապետն էր մեր առաջին,
Որ փշրեց հին ու հեթանոս մեր հավատքի դուռը վերջին,
Դռներ բացեց, լուսամուտներ ու տաճարներ աստվածամերձ,
Զանգեր կախեց ու գմբեթներ՝ Մասյաց նման, փոքրիկ ու մեծ:

Քրիստոնյա ու մեծասքանչ—հայրապետն էր մեր առաջին,
Որ բիբլիական մեր լեռան դեմ երկնեց տաճարն Էջմիածին,
Իջման բեմին օծեց գահը, առաջինը պատարագեց
Եվ ուղղափառ մեր հավատքը օտարներից սրբապատեց:

Երկայնամիտ ու բազմախոհ--հայրապետն էր մեր առաջին,
Որ երկնքից ուրույն մի երգ իջեցրեց մեր հայոց հողին,
Եվ ամենայն հայոց Աթոռն օծեց հայոց հոգու գույնով
Եվ մեր հայոց հացն ու գինին շաղեց հայոց լույս մեռոնով:

Հայրենատենչ ու հայաշունչ—հայրապետն էր մեր առաջին,
Որ վերջ տվեց հալածանքին ու ձուլմանը մեր հայաջինջ.
Ու անշփոթ կնիքներով հայրենական խաչքարերի
Դաջեց անեղծ ճակատները մատյանների ու դարերի:

Խորվիրապի ու երկնքի—հայրապետն էր մեր առաջին,
Որ երկնքից երկիր բերեց անմահ հոգու մեր փրկիչին,
Եվ հիմնեց տունն իր լուսեղեն, ամենակոր ու փրկարար,
Որ պիտ ապրի հայալեզու, հավերժորեն, երկա՜ր, երկա՜ր...

ՎԱՉԱԳԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սույն թվականի մարտի 20—28 օրերին պաշտոնական այցով Մայր Աթոռում էին գտնվում Արգենտինայի հայոց թեմի կենտրոնական վարչության անդամներ պրն. Ժոզե Ռագուբյանը և դոկտոր Անդրանիկ Արսլանյանը՝ գլխավորությամբ թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Գրիգորիս վարդապետ Բունիայանի:

Այս առիթով նրանց ընկերակցում էր Սան Պաուլոյի ազգայիններից պրն. Հարություն Սանոսյանը:

Մարտի 23-ին, չորեքշաբթի օրը, Վեհարանի ընդունարանում Մայր Աթոռի հյուրերին ընդունեց Ամենայն Հայոց կաթողիկոսը և զրույց ունեցավ նրանց հետ: Զրույցի ընթացքում շոշափվեցին Արգենտինայի հայոց թեմին վերաբերող եկեղեցա-վարչական մի շարք հարցեր: Զրույցին ներկա էր Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպիսկոպոս Պոլատյանը:

Հետևյալ օրը, մարտի 24-ին, առավոտյան ժամը 11-ին, Հարավային Ամերիկայից ժամանած հյուրերը Էջմիածնի հոգևոր ճեմարանի հանդիսասրահում ներկա եղան Մայր Աթոռի միաբան հինգ երիտասարդ սարկավագների դիպլոմային աշխատանքների բանավոր պաշտպանությանը:

Մարտի 27-ին, կիրակի օրը, Ծաղկազարդի տոնի առթիվ Էջմիածնի Մայր տաճարում մատուցված ս. պատարագի հանդիսավոր արարողությանը ներկա գտնվեցին արգենտինահայ հյուրերը:

Նույն օրը, ժամը 14.30-ին, Վեհարանի սեղանատանը տրվեց ճաշկերույթ, որին ներկա եղան նաև Մայր Աթոռի հարգարժան հյուրերը:

Մայր Աթոռում գտնվելու օրերին հյուրերը ծանոթացան Մայրավանքի շրջափակում գտնվող կառույցներին, եղան «Ալեք և Մարի Մանուկյան» նորակառույց գանձատանը, այցելեցին Ծիծեռնակաբերդի հայ նահատակաց հուշարձան, Երևանի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցի, Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ուխտագնացություն կատարեցին դեպի Ս. Գեղարդ վանք, եղան Սարդարապատում, Սևանում, Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնում, դիտեցին «Արա Գեղեցիկ» և «Դիմակահանդես» թատերապարերը, այցելեցին Երևանի պատկերասրահ և այլ տեսարժան վայրեր:

Մարտի 28-ին, երկուշաբթի օրը, Մայր Աթոռի հյուրերը Վեհարանում հրաժեշտ տվեցին Վեհափառ Հայրապետին և շնորհակալ զգացումներով ու լավագույն տպավորություններով մեկնեցին Ս. Էջմիածնից:

ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՈՆԸ ԵՐԵՎԱՆԻ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Մարտի 27-ին, կիրակի օրը, առավոտյան, Երևանի Ս. Սարգիս Մայր եկեղեցու բակը լի էր հավատացյալներով: Նրանք տոնական տրամադրությամբ, ձեռքներում ուռենու թարմ ճյուղեր բռնած, եկել էին մտովի դիմավորելու Փրկչի գալուստը Երուսաղեմ:

Այդ օրը Ս. Էջմիածնից Երևան էր ժամանել Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպիսկոպոս Պոլապայանը՝ օրվա տոնի առթիվ նատուցելու ս. պատարագ:

Ժամը 11-ին, «Խորհուրդ խորին» սքանչելի շարականի հոգեպարար հնչյունների ներքո, գերաշնորհ սրբազան հայրը, զգեստավորված, հանդիսավոր թափորով շարժվում է դեպի եկեղեցի:

Սկսվում է հանդիսավոր ս. պատարագը: Պատարագի սրբազան արարողությանը երկյուղածությամբ և բարեպաշտ զգացումներով հետևում են Ս. Սարգիս եկեղեցու քահանայից դասը, թեմական և եկեղեցական խորհուրդների անդամները և բազմահարյուր հայ հավատացյալներ: Ս. Սեղանի վրա պատարագիչ սրբազան հորը սպասարկում է Տ. Գարեգին վարդապետ Ներսիսյանը:

«Հայր մեր»-ից առաջ, «Թագաւոր գոլով» շարականի երգեցողության ներքո, եկեղեցու բեմ է բերվում Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի սրբազան կոնդակը, որ ընթերցում է Տ. Ներսես եպիսկոպոսը: Իր սույն կոնդակով Նորին Սրբությունը Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ է նշանակում հոգեշնորհ Տ. Գարեգին վարդապետ Ներսիսյանին: Կոնդակում Հայոց Հայրապետը վեր է հանում Մայր Աթոռի միաբան երիտասարդ վարդապետի մտավոր ու հոգեկան բարեմասնությունները և վստահություն հայտնում, որ նա ձեռնհասությամբ և մեծ նվիրումով կկատարի իրեն վստահված այդ բարձր և պատասխանատու պաշտոնը: Ապա նորընտիր առաջնորդական փոխանորդի ուսերին գցում են հայրապետական պարգևը՝ մանուշակագույն ծաղկյա փիլոնը:

Այնուհետև, Ծաղկապարդի տոնի առթիվ, հավուր պատշաճի քարոզ է արտասանում Տ. Ներսես եպիսկոպոսը՝ բնաբան ունենալով օրվա շարականի հետևյալ նախադասությունը. «Ծերք ոստովք ձիթենեօք և տղայք ոստովք արմաւենեօք և երամ երամ դասուք աղաղակէին. օրհնեալ եկեալ ի յանունն Տեառն»: Իր քարոզում սրբազան հայրը վեր հանելով Քրիստոսի Երուսաղեմ մուտքի կրոնա-բարոյական մեծ իմաստը՝ նշում է, որ Քրիստոս այսօր խորհրդապես կրկին մուտք է գործում նոր Երուսաղեմ, այն է՝ այս եկեղեցուց ներս, հավատացյալների սրտերի մեջ: Նա, դիմելով հավատացյալներին, հարցնում է, թե, որպես ձիթենու և արմավենու ճյուղեր, ունե՞ն արդյոք իրենց սրտերի մեջ քրիստոնեական անհրաժեշտ առաքինությունները՝ դրանցով դիմավորելու համար մեր Փրկչի այցը:

Իր քարոզի վերջում պատարագիչ սրբա-

Առաջնորդական փոխանորդի նշանակման կոնդակի ընթերցում

կանը սրտագին շնորհավորանքներ է ուղղում Տ. Գարեգին վարդապետ Ներսիսյանին իր նոր պաշտոնի նշանակման առթիվ՝ մաղթելով նրան երկար քաջառողջ կյանք և բեղմնավոր ու արդյունավետ գործունեություն՝ ի փառս Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և հուրախություն հավատացյալ ժողովրդյան:

Ապա Ս. Սարգիս եկեղեցու երկու ավագ քահանաների ուղեկցությամբ նորընտիր առաջնորդական փոխանորդը հանդիսավոր կերպով բալմում է առաջնորդական գահի վրա:

«Սիրտ սուրբ և հոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ»:

Հավարտ սուրբ պատարագի, եկեղեցուն կից առաջնորդարանում տեղի է ունենում ընդունելություն, որտեղ քահանայից դասը, թեմական խորհրդի անդամները և եկեղեցու վարչական պաշտոնեությունը ջերմորեն շնորհավորում են Տ. Գարեգին վարդապետին՝ ցանկանալով նրան հետագա նորանոր հաջողություններ իր եկեղեցանվեր աշխատանքներում:



ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ԳԵՎՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐԱՅԴԱՐՅԱՆԻ ԱՅՑԸ ԴԱՄԱՍԿՈՍ

Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ, Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանը սույն թվականի հունվարի 28-ից մինչև փետրվարի 16-ը, պատասխանելով Դամասկոսի հայոց առաջնորդ Տ. Ոսկան եպիսկոպոս Գալփաքյանի և ազգային-եկեղեցական վարչությունների հրավերին, պաշտոնական այցով եղավ Դամասկոսում՝ մասնակցելու տեղի Ս. Սարգիս վանքի անվանակոչությանը նվիրված հանդիսություններին:

Հունվարի 28-ին Դամասկոսի նորակառույց օդանավակայանում սրբազան հորը դիմավորում և բարի գալուստ են մաղթում Տ. Ոսկան եպիսկոպոս Գալփաքյանը, Դամասկոսում Ռուս Օրթոդոքս Եկեղեցու ներկայացուցչության ղեկավար Տ. Վալենտին եպիսկոպոսը, Տ. Շավարշ և Տ. Սահակ Հայ Եկեղեցու քահանա հայրերը, Սիրիայի կրոնական գործերի մինիստրի քարտուղարը, Դամասկոսի թեմական, եկեղեցական և ազգային մարմինների ներկայացուցիչներ և սիրիահայ հավատացյալներ:

Հունվարի 29-ին, շաբաթ օրը, ժամը 12-ին, Սիրիայի կրոնական գործերի մինիստր դոկտ. Մուհամմետ Էլ Խաթիբը իր պաշտոնատեղում ընդունում է Տ. Գևորգ եպիսկոպոսին և զրույց ունենում նրա հետ: Հյուր սրբազանը մեծարգո մինիստրին է փոխանցում Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի սիրո ողջույնները: Զրույցի ընթացքում Տ. Գևորգ եպիսկոպոսը իր գնահատանքն է հայտնում Սիրիական Հանրապետության մեծարգո նախագահ Հաֆեզ Էլ Ասադի հայրենասիրական գործունեության նկատմամբ: Սրբազանը նաև իր գոհունակությունն է հայտնում, որ իր հայրենակիցները Սիրիայում ապրում են խաղաղ և անկաշկանդ ու ազատորեն օգտվում կյանքի բոլոր բարիքներից իբրև հավատարիմ և օրինապահ քաղաքացիները իրենց երկրորդ հայրենիքի:

Կրոնից մինիստրը շնորհակալություն է հայտնում Տ. Գևորգ եպիսկոպոսին Սիրիայի պետության և ժողովրդի հանդեպ իր ունեցած բարի զգացումների համար՝ մաղթելով նրան ուրախ կեցություն սիրիական հայրենիքում և հաջողություն իր հոգևոր առաքելության մեջ:

Նույն օրը, ժամը 13-ին, Դամասկոսի քաղաքագլուխ հարգարժան Ադնան Գուլին քաղաքապետարանում ընդունում է Տ. Գևորգ և Տ. Ոսկան եպիսկոպոսներին: Քաղաքագլխի և Հայ Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների միջև տեղի է ունենում բարեկամական ջերմ զրույց:

Հունվարի 30-ին, կիրակի օրը, Ս. Սարգսի տոնի առթիվ, Դամասկոսի հայոց եկեղեցում, հավատացյալների հոծ բազմության ներկայությամբ, ս. պատարագ է մատուցում Տ. Գևորգ եպիսկոպոսը: Պատարագի ընթացքում, «Տէր, ողորմեա»-ից առաջ, Տ. Ոսկան եպիսկոպոսի բարիգալստյան և ողջույնի խոսքից հետո, պատարագիչ սրբազանը ներկա հավատացյալներին հաղորդում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույնն ու օրհնությունները, ապա քարոզում «Ամենասուրբ Երրորդութեան ընտրեալ ծառայ և հաւատարիմ Սուրբդ Սարգիս» բնաբանով:

Նույն օրը, երեկոյան ժամը 21-ին, Դամասկոսի «Մերիդիեն» հյուրանոցում վրա-

հայոց թեմի առաջնորդի պատվին տրվում է պաշտոնական ճաշկերույթ, որին, բացի հայկական համայնքի ներկայացուցիչներից, ներկա են լինում Սիրիայի կրոնական գործերի մինիստրը և սիրիական կառավարության այլ բարձրաստիճան պաշտոնատար անձինք, ինչպես նաև Սիրիայում Սովետական Միության դեսպանատան ներկայացուցիչը:

Փետրվարի 3-ին Նորին Սրբություն Տ. Իգնատիոս Զաքքա Ա Պատրիարք-կաթողիկոսը Վեհարանի իր սեղանատանը ճաշկերույթով պատվում է Տ. Գևորգ և Տ. Ոսկան սրբազաններին:

Նոյն օրը, երեկոյան, Մայր Աթոռի ներկայացուցիչը այցելում է Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի փոխնախագահուհի և Մերձավոր Արևելքի Եկեղեցիների խորհրդի Դամասկոսի ներկայացուցիչ տիկին Մահաթ մա Խուրիին:

Տ. Գևորգ և Տ. Ոսկան սրբազանները Տ. Իգնատիոս Զաքքա Ա Պատրիարք-կաթողիկոսի հետ նրա ընդունարանում

Հունվարի 31-ին, փետրվարի 1-ին, 2-ին և 3-ին Տ. Գևորգ եպիսկոպոսը, ընկերակցությամբ Տ. Ոսկան եպիսկոպոսի և թեմական վարչության անդամների, պաշտոնական այցելություններ է տալիս Դամասկոսում Ռուս Պրավոսլավ Եկեղեցու ներկայացուցչության ղեկավար Տ. Վլադիմիր եպիսկոպոսին, Ասորական Ուղղափառ Եկեղեցու պետ, Անտիոքի և Համայն Արևելքի Պատրիարք Նորին Սրբություն Տ. Իգնատիոս Զաքքա Ա-ին, Անտիոքի և Համայն Արևելքի Երկաբնակ Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն Տ. Իգնատիոս Հալիմին, Սովետական Միության դեսպան Բորոբիկովին, ինչպես նաև լինում է Դամասկոսի հայոց Թարգմանչաց վարժարանում, որտեղ հանդիպում է ունենում վարժարանի ուսուցչական կազմի և աշակերտության հետ:

Փետրվարի 6-ին Տ. Գևորգ և Տ. Ոսկան եպիսկոպոսները այցելություն են տալիս Դամասկոսի Ազգ պալատի ազգագրական թանգարան, ապա պատմական Օմայա մզկիթ, իսկ երեկոյան տեղի Թեքեյան Մշակութային Միության սրահում ներկա են լինում միության հիմնադրման 35-ամյակի տոնակատարությանը, որի ընթացքում գործադրվում է գեղարվեստական մի ճոխ հայտագիր:

Հետևյալ օրը, փետրվարի 7-ին, Հայ Եկեղեցու երկու բարձրաստիճան հոգևորականները ուղևորվում են դեպի Հալեպ և իջևանում քաղաքի «Բարոն» հյուրանոցում: Այստեղ նույնպես Տ. Գևորգ եպիսկոպոսը պաշտոնական հանդիպումներ է ունենում տեղի հայկական համայնքի մշակութային, մարմա-

կան մի շարք կազմակերպությունների ղեկավար անդամների հետ նրանց կենտրոններում, այցելում է Հալեպի Կիլիկյան ճեմարան և ապա Հ. Բ. Ը. Միության Լապար Նաջարյան և Գալուստ Կյուլպենկյան երկրորդական վարժարան: Երկու ուսումնական հաստատություններում էլ Տ. Գևորգ և Տ. Ոսկան սրբազանները արժանանում են սըրտագին, ջերմ ընդունելության: Հայրենասիրական խանդավառ մթնոլորտում նրանք իրենց ոգևորիչ խոսքն են ուղղում կրթական այդ երկու օջախների խնամակալ մարմիններին, տնօրենությանց, ուսուցիչներին, աշակերտությանը և օրհնում նրանց՝ հորդորելով միշտ հավատարիմ և կապված մնալ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն, նրա բազմադարյան կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, մեր նախնյաց սրբազան ավանդություններին, հայ գրին ու դպրությանը և վերածնված մայր հայրենիքին:

Փետրվարի 9-ին, առավոտյան ժամը 8.30-ին, Հալեպի քաղաքագլուխը քաղաքապետարանում ընդունում է Տ. Գևորգ և Տ. Ոսկան եպիսկոպոսներին: Մեծարգո գաղաքագլխի և Մայր Աթոռի ներկայացուցիչների միջև փոխանակվում են բարիգալստյան և ողջույնի խոսքեր:

Երեկոյան ժամը 21-ին Հալեպի միջմիութենական մարմինը տեղի Հ. Բ. Ը. Միության սրահում Տ. Գևորգ եպիսկոպոսին հրավիրում է դասախոսելու հայկական տոմարի և տոմարագիտության մասին: Դասախոսությանը ներկա են լինում հայկական տարբեր միություններից և կազմակերպություններից ծանոթ անձնավորություններ և բազմաթիվ հայ ուսանողներ՝ թվով շուրջ 200 հոգի:

Փետրվարի 10-ին Տ. Գևորգ և Տ. Ոսկան եպիսկոպոսները Հալեպից վերադառնում են Դամասկոս և հետևյալ օրը, փետրվարի 11-ին, Վալենտին եպիսկոպոսի ուղեկցությամբ մեկնում Պալմիր (Տադմոր)՝ այցելելու նրա պատմական հուշարձանները: Դամասկոսից 230 կմ հեռու գտնվող հնադարյան այս հըռչակավոր քաղաքը պատմության մեջ առաջին անգամ հիշատակված է մեր թվագրությունից առաջ երկրորդ հազարամյակին: Նրա առաջին բնակիչներն են եղել տանադիացիներն ու արամեացիները: Շուրջ 6 քառ. կմ տարածության վրա ցրված են բազմաթիվ հինավուրց կոթողներ՝ մասամբ կանգուն կամ կիսավեր վիճակում: Այցելու սրբազանները մեծ հետաքրքրությամբ և հիացմունքով դիտում են Բելի հսկայական հեթանոսական տաճարը, աշտարակաձև դամբարանները, հռչակավոր ամրոցը և այլ հուշարձաններ:

Փետրվարի 12-ին Վրաստանի հայոց առաջնորդը Տ. Ոսկան եպիսկոպոսի և այլ ուղեկիցների հետ ուխտագնացության է մեկնում դեպի Մալոլա՝ Ս. Սարգսի վանք, որտեղ վանքի վանահայր հոյն կաթոլիկ հոգևորական հայր Միշելը, այցելուներին ողջունելուց և բարի գալուստ մաղթելուց հետո, մանրամասն տեղեկություններ է հաղորդում վանքի պատմության վերաբերյալ:

Ժամը 17-ին տեղի է ունենում Տյառնընդառաջի երեկոյան ժամերգություն հավատացյալների հոծ բազմության ներկայությամբ: Ժամերգությունից հետո վանքի բակում Տ. Ոսկան եպիսկոպոսը վառում է Տյառնընդառաջի խարույկը:

Ավելի ուշ Ս. Սարգիս վանք է այցելում Նորին Սրբություն Տ. Իգնատիոս Զաքքա Ա Պատրիարք-կաթողիկոսը իր շքախմբով: Տեղի է ունենում հյուրասիրություն վանքի ընդունարանում: Այս առթիվ Նորին Սրբությունը մի անգամ ևս իր հարգանքն ու եղբայրական սերն է արտահայտում Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի նկատմամբ՝ իր գոհունակությունը հայտնելով այն ջերմ և սիրալիր ընդունելության համար, որ վերապահվել էր իրեն Հայ Եկեղեցու Գահակալի կողմից անցյալ տարի Մայր Աթոռ Ս. Էջմիածին իր այցելության օրերին:

Հետևյալ օրը, փետրվարի 14-ին, Տյառնընդառաջի տոնի առթիվ, Վրաստանի հայոց առաջնորդը ս. պատարագ է մատուցում Ս. Սարգիս վանքում:

Փետրվարի 16-ին, ժամը 12-ին, Տ. Գևորգ եպիսկոպոսը, ընկերակցությամբ Դամասկոսի հայոց առաջնորդի, հրաժեշտի այցելություն է տալիս Սիրիայի կրոնական գործերի մինիստրին նրա պաշտոնատեղում: Զրույցի ընթացքում Տ. Գևորգ եպիսկոպոսը Հայոց Հայրապետի անունից խորին շնորհակալություն է հայտնում մեծարգո պարոն մինիստրին՝ Սիրիայում իր կեցության օրերին սիրիական կառավարության կողմից իրեն վերապահված ջերմ ընդունելության և ընձեռված բոլոր դյուրությունների համար: Իր հերթին կրոնական գործերի մինիստրը Մայր Աթոռի ներկայացուցչին խնդրում է իր հարգալից ողջույնները փոխանցել Ամենայն Հայոց Հայրապետին՝ նշելով, որ ինքը շատ երջանիկ կլինի, եթե Հայ Եկեղեցու Գահակալը բարեհաճի առաջիկա տարի այցելել Սիրիա:

Նույն օրը, ժամը 15.30-ին, Տ. Գևորգ եպիսկոպոսը, ընկերակցությամբ Դամասկոսի հայոց առաջնորդի, մեկնում է Դամասկոսի օդանավակայան՝ վերադառնալու համար մայր հայրենիք: Օդանավակայանում Վրաստանի հայոց առաջնորդին բարի ճանապարհ են մաղթում Տ. Ոսկան եպիսկոպոսը, Ռուս

Պրաւոսլաւ Եկեղեցու ներկայացուցիչ Վալենտին եպիսկոպոսը, Հայ Եկեղեցու քահանայից դասը, Սիրիայի կրոնական գործերի մինիստրի քարտուղարը, Դամասկոսում սովետական հյուպատոսարանի աշխատակից Ս. Ծատուրյանը, եկեղեցական և ազգային իշխանությանց ներկայացուցիչներ և այլ պաշտոնական անձինք:

Սիրիա կատարած իր այցելության ավարտին Վրաստանի հայոց առաջնորդը շնորհակալության մի հեռագիր է ուղարկում Սիրիայի Հանրապետության նախագահ Նորին Վսեմություն Հաֆեզ Էլ Ասադին: Հեռագրում Տ. Գևորգ եպիսկոպոսը իր երախտագիտությունն է հայտնում Սիրիայում պետական իշխանությանց կողմից իրեն վերապահված սիրալիր ջերմ ընդունելության և ամենուրեք ցուցաբերված մեծարանքի և պատվի համար: Նա իր հիացումն ու գնահատանքն է հայտնում նաև սիրիական հանրապետության մեջ կյանքի բոլոր բնագավառներում ձեռք բերված նվաճումների և առաջադիմության համար՝ հանրապետության մեծարգո նախագահի հովանավորության և իմաստուն ղեկավարության ներքո:





ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԼԻԱԳՈՒՄԱՐ ԺՈՂՈՎԸ

Սույն թվականի մարտի 10-ին Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նիստերի դահլիճում տեղի ունեցավ կոմիտեի տարեկան լիագումար ժողովը: Ժողովին ներկա էին հայրենի գրողներ, արվեստագետներ, գիտնականներ, Երևանի հասարակայնության ներկայացուցիչներ, ինչպես նաև մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության աշխատողներ:

Ժողովում Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի 1982 թվականի ընթացքում կատարած աշխատանքների մասին ընդարձակ հաշվետու զեկուցումով հանդես եկավ կոմիտեի նախագահ Վարդգես Համապասպյանը:

Իր զեկուցման սկզբում նա նշեց, որ հաշվետու ժամանակաշրջանում առավել ամրապնդվել են հայրենիք-Սփյուռք փոխադարձ կապերը, և կոմիտեի կատարած աշխատանքը իր կարևոր նպաստն է բերել հայապահպանության հայրենասիրական գործին: Այնուհետև զեկուցողը գոհունակություն արտահայտեց, որ ամենուրեք սփյուռքահայության գերակշիռ մեծամասնությունը հայրենասիրական անկեղծ զգացումներով է կապված Սովետական Հայաստանի հետ, և նրանց խորին համոզմամբ ամբողջ հայության օթևանն ու միակ հայրենիքը Սովետական Հայաստանն է, որտեղ, Սովետական հզոր Միության հովանու ներքո, ստեղծված են խաղաղ ու ապահով ապրելու և ստեղծագործելու բոլոր նպաստավոր պայմանները:

Ապա անդրադառնալով հաշվետու տարում կոմիտեի գործունեությանը՝ զեկուցողը նշեց, որ 1982 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին կոմիտեի նախաձեռնությամբ Երևանում կազմակերպվել է սփյուռքահայ մշակութային միությունների ղեկավարների հավաք, որի ընթացքում հավաքի մասնակիցների համար կատարվել են Սովետական Հայաստանի 60-ամյա նվաճումներին վերաբերող մի շարք շահեկան դասախոսություններ: Սույն դասախոսությունների առթիվ տեղի է ունեցել մըտքերի անկաշկանդ փոխանակություն: Սփյուռքահայ մշակութային կազմակերպությունների ներկայացուցիչները պատմել են իրենց գաղութների ազգային կյանքի իրավիճակի, իրենց դժվարությունների ու կարիքների մասին՝ անելով նաև օգտակար դիտողություններ փոխադարձ կապերի ամրապնդման նպատակին ուղղված: «Սփյուռքահայ գործիչների այսօրինակ հանդիպումները,—ընդգծեց զեկուցողը,—ամրապնդում են ոչ միայն հայրենիք-Սփյուռք կապերը, այլև նպաստում են աշխարհի տարբեր երկրներում ապրող հայ գաղթօջախների մշակութային գործիչների փոխադարձ կապերի ուժեղացմանը... Այս կարգի հավաքների կազմակերպումը կոմիտեի գործունեության նոր ձևերից է, նոր քայլ հայրենիք-Սփյուռք փոխադարձ կապերի ընդլայնման ուղղությամբ»:

Կոմիտեի նախագահը նշեց նաև, որ հայրենիք-Սփյուռք կապերի սերտացմանը մեծապես նպաստել են կոմիտեի ամենամյա առաքումները Սփյուռք, որոնք տարեցտարի ավելանում են: Հաշվետու տարում Սփյուռք են առաքվել տասնյակ հազարավոր օրինակներով տարբեր բնույթի գրքեր (գեղարվեստական, երաժշտական, հայագիտական գրքեր, դպրոցական դասագրքեր և այլն), ինչպես

նաև բալմահալար օրինակ հայրենական պարբերականներ, ամսագրեր և թերթեր:

Կոմիտեն առանձնահատուկ ուշադրություն է դարձրել թեմատիկ լուսանկարչական ցուցահանդեսների առաքմանը, որոնք բավական հստակ պատկերացում են տվել մայր հայրենիքի 60-ամյա նվաճումների մասին:

Սփյուռքի դպրոցներին ուղարկվել է 1550 բուկլետ-համալիր՝ հայ գրականության և արվեստի նշանավոր գործիչների դիմանկարներով:

Սփյուռքահայ օտարախոս երիտասարդության ազգային ինքնագիտակցության վարթոնքին նպաստելու նպատակով 1981 թ. վերջերին կոմիտեն մի նոր նախաձեռնություն է հանդես բերել: Արտասահման են ուղարկվել հայ ժողովրդի պատմության անցյալին ու ներկային վերաբերող փոքրիկ բրոշյուրներ, որոնք Հ. Բ. Ը. Միության միջոցներով ԱՄՆ-ում թարգմանվում են անգլերեն և հրատարակվում: Հաշվետու ժամանակամիջոցում ուղարկված է «Հայագիտակ» ընդհանուր խորագիրը կրող այդպիսի 10 բրոշյուր:

Մայր հայրենիքի նկատմամբ սփյուռքահայության տածած խոր սիրո դրսևորումներից է այն, որ Սփյուռքի հայրենասիրական կազմակերպությունները ու միությունները, ինչպես նաև անհատ մարդիկ սեփական միջոցներով ձեռք են բերում մեր ժողովրդի՝ աշխարհով մեկ ցրված հոգևոր արժեքները և հաճախ մեծ դժվարություններ հաղթահարելու գնով ուղարկում հայրենիք: Բացի հոգևոր արժեքներից, սփյուռքահայերը մայր հայրենիք են ուղարկել ժամանակակից սարքավորումներ, հագվագյուտ իրեր ու հրատարակություններ, որոնք հանձնվում են հանրապետության թանգարաններին, գրադարաններին, համապատասխան հիմնարկներին:

Հայրենիք-Սփյուռք կապերի ընդլայնմանն ու ամրապնդմանը մեծապես նպաստել են փոխադարձ այցելություններն ու մշակութային գործիչների նպատակային գործուղումները: Սփյուռքահայ մշակութային միությունների և հայրենասիրական կազմակերպությունների աշխատանքների աշխուժացման, հայրենասիրական ոգու խորացման և Սփյուռք-հայրենիք կապի զարգացման գործում կարևոր նշանակություն են ունեցել հաշվետու տարում հայրենի ծանոթ գրողների, արվեստագետների, գիտնականների, հասարակական կազմակերպությունների ղեկավար աշխատողների և այլ մտավորականների այցելությունները Լիբանան, Սիրիա, Հորդանան, Քուվեյթ, Կանադա, Միացյալ Նահանգներ, Բրազիլիա, Արգենտինա, Ֆրանսիա, Անգլիա, Բելգիա, Հոլանդիա, Ավստրիա, Շվեյցարիա և այլ երկրներ ու նրանց ելույթները այդ երկրների հայկական համայնքների ծոցում գործող հասարակական տարբեր կազմակերպությունների և միությունների կողմից կազմակերպված հրապարակային հավաքույթներին ու հանդիսություններին:

Նույն ժամանակամիջոցում մեծ թվով ըսփյուռքահայեր են այցելել մայր հայրենիք տուրիստական խմբերով ու մասնավոր հրավերներով, նաև բուժման ու հանգստի նպատակով: Կոմիտեն հյուրընկալել է Բուենոս Այրեսի «Մարի Մանուկյան» երկրորդական վարժարանի շրջանավարտներին, Ֆրանսիայից ԺԱՖ-ի երիտասարդական և Ամերիկայից «Հայաստանյայց Եկեղեցվո երիտասարդական» կազմակերպությունների մի խումբ ներկայացուցիչների: ԱՄՆ-ից ժամանած երիտասարդների խմբի համար լրացուցիչ կազմակերպվել են հայոց լեզվի և գրականության, երգեցողության ու պարի միամսյա դասընթացներ: Կոմիտեում ստեղծվել է «Հետաքրքիր հանդիպումների ակումբ» Երևանի կրթական բարձրագույն հաստատություններում սովորող սփյուռքահայ ուսանողների համար:

Հաշվետու տարեշրջանում, առաջին անգամ լինելով, սփյուռքահայ ուսանողներից կազմված մի խումբ ամռանը մասնակցել է Իջևան-Հրազդան երկաթուղու շինարարական աշխատանքներին:

Ինչպես անցյալում, այնպես էլ անցնող ամռան ամիսներին արտասահմանյան 19 երկրներից հայրենիք են ժամանել 143 ըսփյուռքահայ դպրոցականներ՝ հայրենի պիոներական ճամբարներում իրենց ամառային արձակուրդներն անցկացնելու համար:

Սփյուռքահայ ուսուցիչների համար կազմակերպվող ամենամյա վերապատրաստման դասընթացներին հաշվետու տարում մասնակցել են 14 երկրներից ժամանած 41 ուսուցիչներ: Նրանց համար դասախոսություններ են կարդացել հանրապետության անվանի մասնագետներ:

1982 թվականի հոկտեմբերին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի հրավերով Հայաստան է այցելել Հ. Բ. Ը. Միության 14 հոգուց բաղկացած խումբը՝ գլխավորությամբ Միության նախագահ Ալեք Մանուկյանի՝ մասնակցելու Մայր Աթոռում կառուցված «Ալեք և Մարի Մանուկյան գանձատան» բացման հանդիսություններին: Այդ առթիվ Ալեք Մանուկյանի պատվին ընդունելություններ են կազմակերպվել ՀՍՍՀ Մինիստրների խորհրդում, կոմիտեում:

1982 թվականին ԱՄՆ-ից, Կանադայից, Արգենտինայից, Մերձավոր Արևելքից, եվրոպական երկրներից և հայկական այլ գաղթօջախներից կոմիտեի պաշտոնական հրավե-

րով հայրենիքում հյուրընկալվել են բազմաթիվ սփյուռքահայ հասարակական և մշակութային անվանի գործիչներ:

Հայաստանի մշակութային կյանքում նշանակալից իրադարձություն էր «Հայագիտական միջազգային գիտաժողովը», որին մասնակցում էին աշխարհի տարբեր երկրների հայագետներ: Այդ առթիվ գիտաժողովին մասնակցած բոլոր հայ գիտնականների համար հատուկ հանդիպում և ընդունելություն է կազմակերպվել կոմիտեում, ուր շոշափվել են Սփյուռք-հայրենիք կապերի զարգացման հարցերը:

Նախագահի հաշվետու զեկուցումից հետո ծավալվեց մտքերի փոխանակություն:

Սփյուռքի հայկական վանական գաղթօջախներ կատարած իրենց ուղևորությունից ստացած տպավորություններով և գործնական մի շարք առաջարկություններով ժողովում հանդես եկան արձակագիր Սերո Խանզադյանը, Հայաստանի հեռուստատեսության և ռադիոհաղորդումների պետական կոմիտեի նախագահի տեղակալ, պրոֆ. Գևորգ Խրլոպյանը, ՍՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի անդամ, գեղանկարիչ Գրիգոր Խանջյանը, Հայաստանի պետական արխիվային վարչության պետ, դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Հարությունյանը, Հայկ. ՍՍՀ լուսավորության մինիստրության արտաքին կապերի բաժնի վարիչի տեղակալ Սարգիս Յափուջյանը, հայրենի անվանի դերասան և բեմադրիչ Մհեր Մկրտչյանը և ուրիշներ:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահությունը համալրվեց նոր անդամներով: Կոմիտեի նախագահության անդամ ընտրվեցին Հայաստանի գրողների միության վարչության նախագահ Վարդգես Պետրոսյանը, Հայաստանի նկարիչների միության վարչության նախագահ Սարգիս Մուրադյանը, Հայկ. ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանյան տուրիզմի վարչության պետ Հենրիկ Լիլոյանը, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Սեն Արևշատյանը և հեռուստատեսության ու ռադիոյի պետական կոմիտեի նախագահի տեղակալ Գևորգ Խրլոպյանը:





ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

«Չխաղաղութիւն թողում ձեզ, վխաղաղութիւն վիմ տամ ձեզ, ոչ որպէս աշխարհս տայ տամ ձեզ»:

(ՀՈՎՀ. ԺԴ 27)

Սույն թվականի հունվարի 10—21 օրերին, Բրիտանական Եկեղեցիների Խորհրդի հրավերով, Մեծ Բրիտանիա այցելեց Սովետական Միությունում գործող քրիստոնեական Եկեղեցիների ներկայացուցիչներից բաղկացած էկումենիկ մի պատվիրակություն՝ գլխավորությամբ Կիևի և Գալիցիայի միտրոպոլիտ Ֆիլարետի: Պատգամավորության կազմում էին Ռուս Պրավոսլավ Եկեղեցու, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, Վրաց Օրթոդոքս Եկեղեցու, Լատվիայի լութերական, կաթոլիկ, մկրտչական Եկեղեցիների և Էստոնիայի լութերական Եկեղեցու ներկայացուցիչներ՝ թվով տասնմեկ հոգի:

Լոնդոնի Հիտրո օդանավակայանում պատվիրակությանը դիմավորեցին և ողջունեցին Բրիտանական Եկեղեցիների Խորհրդի նախագահ, Քենթրբերիի Արքեպիսկոպոսի ներկայացուցիչ, Վիլկդընի եպիսկոպոս Հիվեթ Թոմսոնը, Բրիտանական Եկեղեցիների Խորհրդի գլխավոր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Մորգանը, կանոնիկոս Պոլ Օսթերայխը և քրիստոնեական տարբեր Եկեղեցիներ ներկայացնող պաշտոնական այլ անձինք:

Իր այցելության ընթացքում պատվիրակությունն ընդունվեց Քենթրբերիի Արքեպիսկոպոս Ռոբերտ Ռընսիի կողմից թե՛ Քենթրբերիում և թե՛ Լամբեթի պալատում: Պատվիրակությունն ընդունվեց նաև Նիկիական ակումբում (Լոնդոն), որտեղ Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի նախագահներից Օքսֆորդի եպիսկոպոս դոկտ. Պատրիկ Ռոդժերը, հանուն Քենթրբերիի Արքեպիսկոպոսի, ողջունեց և բարի գալուստ մաղթեց պատվիրակության անդամներին:

Հունվարի 12-ին Ադդինկտոնի պալատում տեղի ունեցավ խորհրդակցական հանդիպում Սովետական Միությունում գործող Եկեղեցիների պատվիրակության և Բրիտանական Եկեղեցիների Խորհրդի անդամների միջև: Այս առթիվ ճառով հանդես եկան ավագերեց Հ. Սորոխինը և Սոլզբերիի եպիսկոպոս Ջոն Բեկըրը: Երկու հռետորներն էլ շեշտեցին կայուն խաղաղության հաստատման անհրաժեշտությունը քաղաքական ներկա լարված դրության պայմաններում: Խորհրդակցության ընթացքում ընդգծվեց Արևելքի և Արևմուտքի պետությունների միջև փոխադարձ հասկացողության հաստատման կարևորությունը: Մասնավորապես շեշտվեց, որ անհրաժեշտ է էկումենիկ ոգին է՛լ ավելի տարածել և արմատավորել բոլոր քրիստոնյաների մեջ, որպեսզի քրիստոնեական Եկեղեցիները կարողանան միասնաբար իրենց կարևոր նպաստը բերել կողմերի միջև մերձեցում և փոխադարձ սեր ու հարգանք հաստատելու գործին: Վերոհիշյալ հարցերի շուրջ խորհրդակցության բոլոր մասնակիցներն էլ ելույթներ ունեցան՝ հիմնվելով իրենց անձնական փորձառության վրա:

Վերջում խորհրդակցությունն իր աշխատանքի արդյունքներն ամփոփեց չորս կետերի մեջ՝ իբրև առաջարկություն ներկայացնելու համար բոլոր պետություններին:

1. Փոխադարձաբար սահմանափակել մեղադրական հայտարարությունները:
2. Հրաժարվել առճակատման քաղաքականությունից, լինի ռազմական, տնտեսական թե քաղաքական, և առաջնորդվելով բոլոր տեսակի հարցերը միայն խաղաղ միջոցներով լուծելու նշանաբանով՝ որդեգրել այնպիսի մի քաղաքականություն, որը մեղմացներ միջազգային լարվածությունը և ստեղծեր անկեղծ համագործակցություն մշակութային, գիտական, տեխնոլոգիական և տնտեսական բնագավառներում:
3. Համաձայնվել անհապաղ հրաժարվելու գոյություն ունեցող միջուկային զինամթերքի կարևոր մասից՝ իբրև նախաքայլ միջուկային զենքերի հետագա ամբողջական վինաթափման:
4. Ռազմական նպատակների համար օգտագործվող ռեսուրսներն ու ամբողջ տեխնոլոգիան ուղղել ազգային կարևոր ծրագրերի իրագործման նպատակին:

Պատվիրակության անդամները Լոնդոնում օգտակար հանդիպումներ ու զրույցներ ունեցան անգլիկան, մեթոդական, վերակազմյալ, մկրտչական, լութերական և քուեյքրոկների եկեղեցական կենտրոններում, ինչպես նաև Շոտլանդիայի, Իռլանդիայի և Գալիայի Եկեղեցիների ներկայացուցիչների հետ՝ հիշյալ վայրերը իրենց այցելության ընթացքում:

Անգլիայի Երեսփոխանների խորհրդի նախագահ Ջորջ Թոմասը պառլամենտի շենքում հատուկ հյուրասիրությամբ պատվեց պատվիրակության անդամներին: Անգլիայում Սովետական Միության դեսպան Վիկտոր Պոլովի անունից, ի պատիվ պատվիրակության, պաշտոնական մի ընդունելություն կազմակերպվեց նաև Լոնդոնի սովետական դեսպանատանը, որտեղ հավաքվել էին շուրջ երկու հարյուր հրավիրյալներ:

Անգլիայում գտնվելու օրերին պատվիրակության անդամները հնարավորություն ունեցան այցելելու նաև Բելֆաստ և Հարավային Լոնդոնի Բրիքստոն թաղամասը, որտեղ գոյություն ունեցող քաղաքական անհանդարտ վիճակը և ցեղային խտրականությունը դեռևս շարունակում են մարդկային կոհեր խլել:

Այցելության վերջին օրը, Բրիտանական Եկեղեցիների Խորհրդի կենտրոնում, խորհրդի փոխնախագահ Դեվիդ Տեմպլը պատվիրակության պատվին տվեց պաշտոնական ճաշկերույթ: Երեկոյան Լոնդոնի Աթենե ակումբում խորհրդակցության նախապատրաստական կոմիտեի նախագահ Սըր Ջոն Լորենսը ընթրիքով պատվեց պատվիրակության անդամներին:

Մեկնումի օրը Լոնդոնի օդանավակայանի մատուռում տեղի ունեցավ էկումենիկ համատեղ աղոթք, որի ընթացքում Կենսինգտոնի եպիսկոպոս Մարկ Սենթըրը թարգմանը հանդիսանալով Բրիտանական Եկեղեցիների Խորհրդի նախագահ դոկտ. Ռոբերտ Ռընսիի եղբայրական զգացմունքների՝ քույր Եկեղեցիների ներկայացուցիչներին մաղթեց բարի ճանապարհ և վերստին հանդիպում՝ քրիստոնեական նույն ավնիվ նպատակներով:

ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՉԱՊԱԼՅԱՆ





ԵՂԻՇԵԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Որպես Եկեղեցական ավանդությունների շարունակող, Եղիշեն նույնպես բարձր արժեք է տալիս մարդուն: **Բանի** շնորհիվ ստեղված մարդը Արարչի մշտական մտահոգության և գուրգուրանքի կենտրոնն է, նրա ողջ փառքի և մեծության ժառանգորդը: Ուստի մարդիկ ևս, իրենց հերթին, պարտավոր են կատարել Հոր կամքը. «Ըստ կամաց Հօրն՝ և որդիքն պարտին լինել, ապա և Հայրն ըստ կամաց որդւոցն՝ պպէտս նոցա կատարէ»[1]:

Մեկ է Հայրը, որ ստեղծողն է ոչ միայն մարմնավոր էակների, այլ նաև հոգևորների: Եվ բնական է, որ նման մի հզոր Արարիչ ստեղծեր աշխարհը առանց որևէ դժվարության կամ, ինչպես Եղիշեն է ասում, «առանց ախտից, առանց ցաւոց»[2] ծներ բոլոր երևելիներն ու անտեսանելիները: Սակայն, ինչպես գիտենք, մարդն ապերախտ գտնվեց ու այդ ապերախտության պատճառով ժառանգեց մահը: Մութն իջավ մարդու՝ երբեմնի լուսավոր հոգուն: Խավար էր շուրջը, ու չկար հույսի ու փրկության ոչ մի շող:

Սակայն գիտենք մենք Աստուծո երկայնամտությունը, Նրա ցավը: Դա ցավն է ստեղծողի, երբ տեսնում է իր ստեղծած, սիրած առարկայի կործանումը: Ստեղծագործության կորուստը թերևս ամենաանդարմանելին է մարդու կյանքում: Եթե այդպես է մարդու պարագային, ապա Աստուծո՞... Եվ ինչպես գեղեցիկ ու բանաստեղծական ձևով գրում է Եղիշեն՝ «Գթացաւ Հայրն երկնաւոր, խոնարհեցաւ յերկնից յերկիր, եգիտ կամենեսեան յարիւն յապաժոյժ, ի վոհս մեռելոտի կռոց պաշտամանն: Առ, լուաց, սրբեաց, վգեցոյց վհանդերձն երկնաւոր, և մերձեցոյց անդրէն ի նոյն որդեգրութիւնն և ուսոյց վհայրենի վարդապետութիւնն»[3]:

Ի՞նչ չափով մարդը կարող է իր գոհությունը հայտնել Աստուծո, ի՞նչ անուն տանք Նրա արարքին, ինչպե՞ս չափենք Նրա մեծությունը: Այս հարցերի պատասխանը խըտացված մի բառ է միայն Եղիշեի մոտ, կարճ ու ամփոփ՝ երկրաչափական աքսիոմայի նման. «Անուն Աստուծոյ ո՞ կարէ դնել: **Սուրբն** ասելով՝ այն է ճշմարիտ անուն Աստուծոյ»[4]: Ուրիշ ի՞նչ կերպ կարելի կլինի կոչել այն էակին, որ «սրտին խորհրդոցն է լսող», որը «բարի գործոցն է հատուցանող»[5], Որի սիրելու և կատարելու տենչը մղում է նրան «ի գութ ողորմութեան»: Սրբություն պետք լինի մեկ՝ մարդկանց համար Աստուծո կամքը, որովհետև մարդը «բաժանակից» դարձավ Նրա աստվածությանը, դարձավ Նրա ժառանգորդն ու որդին: Եվ որպես շնորհակալանքի նշան, երախտագիտության չափ, մարդուն «Այս չափ է բաւական ասել. Հայր մեր որ յերկինս, սուրբ է անուն Քո»[6]: Որպես մեծ և հմուտ աստվածաբան Եղիշեն լավ է տեսնում Աստուծո բարձրության և մարդու՝ ցածրում գտնվելու տարբերությունը:

Տարբերությամբ նման ահռելիությունը Նարեկացուն տարավ դեպի «Մատեան», Ֆրիկին՝ «Գանգատ»: Սակայն բանաստեղծ չէ այս դեպքում Եղիշեն, մի այլ տեղ՝ հայտնի անվանական «Տատրակը» այլ՝ աստվածա-

[1] Եղիշէի վարդապետի մատենագրութիւնք, ի Վենետիկ, 1859. «Մեկնութիւն «Հայր մեր»-ի, էջ 199:

[2] Նույն տեղ, էջ 199:

[3] Նույն տեղ, էջ 200:

[4] Նույն տեղ, էջ 200:

[5] Նույն տեղ, էջ 200:

[6] Նույն տեղ, էջ 201:

բան, վարդապետ և ուսուցիչ: Ու միանգամայն ճիշտ ու արդարացի է (դավանաբանական տեսակետից) նրա հետևյալ մտածումը, թե՝ «Ինքն Աստուած կօրացուցանէ ի համբերութիւնն»: Ընդհանրական Եկեղեցու մեծ հայրերից մեկը՝ Որոգինեսը, կարծում էր, որ Արարչագործությունից հետո էլ Աստված միայնակ չթողեց մարդուն, այլ միշտ Իր նախախնամությամբ հետևում էր նրա աճմանն ու կարգացմանը՝ միշտ ներշնչելով նրան համբերելու կորությունը: Այնպես որ, այս դեպքում ևս Եղիշեն հարապատ է մնում արևելյան աստվածաբանության ավանդույթներին:

Եղիշեի աստվածաբանական հայացքների մեջ, ինչպես ողջ հայ Ոսկեդարի աստվածաբանությունում, քրիստոսաբանական ուսմունքը գտնվում է արդեն իր հասուն և վերջնական վիճակում, այն վիճակում, որի դիրքերից Հայ Եկեղեցին հետագա դարերում կարողացավ խելացի հակահարված հասցնել քաղկեդոնականությանը: Քրիստոսաբանական ողջ ուսմունքը Եղիշեի մոտ խիտ է, ամփոփ և իր կառուցվածքային իմաստով՝ վերջնական ու կատարյալ:

Քրիստոս Աստուծո Որդին է, մասնակիցը Արարչագործության: Նա պարզ է Իր բնությամբ և մյուս մարմինների նման՝ կուրկ բաղադրությունից (խոսքը վերաբերում է նրա աստվածային բնությանը): Քրիստոսի աստվածային բնության հենց պարզ ու անբաղադրելի լինելու մեջ է Նրա **Սրբության** և **Աստվածության** երաշխիքը: Սակայն բնության այդ պարզությունը բոլորովին չի նսեմացնում Բանի (λόγος) մեծությունն ու բարձրությունը: Մարդկային բնության խաթարումից հետո Աստուծո Որդին՝ Հոր ցանկությամբ, Որը չէր ցանկանում մարդկության կործանումը, այլ՝ փրկվելը, կամ ինչպես Եղիշեն կասեր՝ «որպէս և կամեցաւ հոգեղէնն հողեղինիս տիպք լինել»[7],—դարձավ մարդ ըստ պատկերի՝ սովորեցնելու համար մարդկանց՝ «առաքինութեամբ ձևանալ»[8]:

Քրիստոսի մարդեղության խորհուրդը մինչ այսօր, չնայած աստվածաբանների տված բացատրություններին, Սուրբ Երրորդության խորհրդի հետ միասին համարվում է քրիստոնեական Եկեղեցու մեծագույն և անբացատրելի խորհուրդներից մեկը: Աստուծո Որդու, Բան-ի մարդկային մարմին առնելը անթափանցելի մի գաղտնիք է մարդկային տրկար մտքի համար: Եղիշեի լակոնիկ բացատրությունն սքանչելի է. «Ինքն իսկ կնորա (**մարդու**, Ան. վրդ.) տիպն առնոյր, որպէս և Ինքն գիտէր»[9]: Մի՞թե կարելի է ավելի կարճ և միաժամանակ գոհացուցիչ ձևով պատասխանել, թե ինչ կերպ կարող է աստվածության անձերից մեկը ստանալ ուված երևումը:

Աստվածային խորհուրդներից մեկն էր, որ Քրիստոս մարդեղության խորհրդից հետո չկրեց Իր վրա մեղքի կնիքը: Ինչպես մեր Պատարագամատույցն է ասում. «Ճանապարհորդեաց ընդ ամենայն կիրս մարդկային կենցաղոյս առանց մեղաց»[10]: Համաձայն այդ տնօրինման էլ Քրիստոս, ըստ Եղիշեի, «ձեվացրեց» Իրեն (**դրսևորեց**, Ան. վրդ.) «անխախտելի և անքակտելի կորպիսութիւնն, անհասանելի և անասելի, միայն հատատալի և յուսալի»[11]: Գութն է Քրիստոսի մարդասիրական գործունեության հիմնական առանցքը: Գութն էլ դարձավ Իր քարոզությունների ժամանակ մարդկանց տեղից շարժելու Իր՝ գործողությունների հիմնական ուժը: Աշխարհը, որ գտնվում էր մեղքի կամ, ըստ Եղիշեի, «ի խանձարուրի և յօրրանս», պետք է որ փրկվեր և շարունակեր գոյատևել: Դրա միակ ճանապարհը Աստուծո գութը շարժելն էր, առ Նա «կարդալը»: Եվ Քրիստոսի «ապգակցաւն» խոսելն էլ ուներ իր թաքուն նպատակը. առակներով ուսուցանել աներևույթ աստվածությունը: Ու թեև նրա աշակերտներից շատերը չէին կարող հասկանալ նրան, Քրիստոս, սակայն, ինչպես Եղիշեն է ասում, «կրկնէ և երեքկնէ զնոյն բան»[12], որպեսզի մարդիկ դյուրությամբ ընկալեն Բան-ի զոյությունը. «Ի վեր հայեցոյց», ինչպես խորհրդաստ կերպով նշում է հեղինակը: Եվ թեև «Լսէին ի նմանէ զբանն, ոչ կարէին վաղվաղակի ի միտ առնուլ»[13], սակայն Քրիստոս՝ «կենդանի հացն» բազում անգամներ համբերությամբ բացատրում էր նույն բանը, որպեսզի մարդիկ «դիւրաւ լուցեն և հաւատովք ընկալցին զԲանին զօրութիւն»[14]:

Քրիստոս որպես Բան (λόγος) բարձր է Տիեզերքի մեջ եղող ամեն մի արարածից. ավելին՝ Նա Որդին է Հոր (Աստուծո): Նրա շնորհիվ է, որ մարդիկ ճանաչեցին Հորը: Նա երկնավոր Հացն է, որով «առլցաւ» մարդը: Եթե ոք ճաշակե այդ Հացից՝ կապրի հավիտյան (Բացատրվում է այն քրիստո-

[7] Նույն տեղ, էջ 201:

[8] Նույն տեղ, էջ 201:

[9] Նույն տեղ, էջ 202:

[10] Խորհրդատետր Սրբոյ Պատարագի ըստ ծիսի Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ, էջ 13: Վաղարշապատ, 1880 թ.:

[11] Նույն տեղ, էջ 202:

[12] Նույն տեղ, էջ 203:

[13] Նույն տեղ, էջ 203:

[14] Նույն տեղ, էջ 203:

նեական դավանությունը, թե Քրիստոսին ընդունելու, խոստովանելու պայմանով միայն մարդ կարող է փրկության հասնել):

Եղիշեի մոտ Քրիստոս Ինքը Իր իսկ մասին խոսող արքայությունն է: Նա, որ եկավ, գալու է երկրորդ անգամ:

Քրիստոսի ուսմունքի, վարդապետության մեծությունը, ըստ Եղիշեի, այն է, որ Փրկիչը ամրացրեց եղբայրության և խաղաղության հիմքերն աշխարհի վրա, քանի որ՝ «պաշակերտսն որդիս ասաց, և զծառայս տէրս արարեալ, և զմահկանացուս յանմահութիւն հրաւիրեալ»[15], ինչպես նաև սովորեցրեց՝ «Ի հատուցմունս իւրաքանչիւր իշխանութեան, որչափ և զքեզ կարասցես վիճակեցուցանել»[16]:

Քրիստոսով է փրկությունը, Քրիստոսի մեջ է հավիտենական կյանքը՝ այս է մեծ վարդապետի քրիստոսաբանական ուսմունքի անվիճելի գաղափարը:

Սուրբ Երրորդության վարդապետությունը Եղիշեի մոտ զարգացած վիճակում է: Սուրբ Երրորդության երեք անձերի գործողությունների սահմանները ճշտված են: Հստակ ձևով են ներկայացված նրանց փոխհարաբերությունները:

Այսպես, Հայրը աշխարհի Արարիչն է՝ արարչությամբ: Նա հանդիսանում է նաև **Որդեգրողը** մարդու: Արարիչը նույնն է (Իր աստվածությամբ) **Արքայի** հետ՝ «Որ և եկն»[17]: Նույնն է Հոր և Քրիստոսի (Արքայի) արքայությունը: Հայրը մեր Աստվածն է Իր բնությամբ և աստվածության Իր շնորհով: Նա Աստվածն է բոլորի: Աստված մտադիր չէ տանել մարդուն փորձության, այլ՝ փրկել փորձությունից ու մահվանից: Ամենամեծ գրավականը Նրա սիրելի Որդու՝ հանուն մարդու մահվան մատնվելն է (Աստուծո կամքով ու ցանկությամբ):

Որդին, Որով մարդկությանը շնորհվում է ամեն մի բարիք՝ Փրկիչն է աշխարհի: Նրա կողմից մարդկությանը մեծ պատիվ է տրված, քանզի՝ «Էր արքայ, և եղև քո եղբայր»[18]: Ուրիշ էլ ի՞նչ առավել մեծ պարգև կարելի է ստանալ:

Քրիստոսի՝ մարդու հետ եղբայրանալու խորհուրդը (մարդեղություն և փրկագործություն) Եղիշեի մոտ ավելի է, քան «պառաջին արարչութեանն»[19]:

Փոփոխական է Հայր ու Որդու հարաբերությունը: Կար Հայրը, սակայն ադամական մեղքից հետո՝ հրաժարվեց աշխարհից ու «բարձաւ ի նմանէ հայրութիւնն»[20]: Ապա հայրության հոգսը Իր վրա վերցրեց Որդին և գնաց նույն (Հոր) ճանապարհով: «Այսպէս փոխանորդութեամբ վախճանելոց է աշխարհս»[21]:

Ինչպես տեսնում ենք, աստվածության երկու անձերի՝ Հոր և Որդու անսկզբնելիության և տիեզերքի կառավարման մեջ ներդաշնակության (երկու կողմից) գաղափարը խորապես և ճիշտ կերպով տեղ է գտել Եղիշեի աստվածաբանության մեջ, այն ժամանակ, երբ Արևմուտքը դեռ նոր էր դուռ բացում Սուրբ Երրորդության անձերի վերաբերյալ սուր վիճաբանությունների:

Որպես քրիստոնեության ջատագով, Եղիշեն մեծ կարևորություն է տալիս հավատքին մարդու կյանքում: Սակայն, ինչպես և Եզնիկը, Եղիշեն համակարծիք է Հակոբոսի այն մտքին, թե՝ «Հաւատք առանց գործոց դատարկ են» (Հակ. Բ 21): Հավատքը պետք է օգնի մարդուն, հուսադրի նրան: Հավատքով է, որ սպասում ենք Քրիստոսի երկրորդ գալուստին, սակայն՝ «Ըստ աղօթից մերոց և գործք մեր երևեսցին ստուգութեամբ»[22]: Հավատքը Եղիշեի մոտ նմանվում է այն սյուներին, որոնց վրա հաստատվում է շինությունը (խորհրդաբար՝ Եկեղեցին): Իսկ գո՞րծը: Ինչքանո՞վ է այն կարևոր:

Դրա պատասխանը Եկեղեցու սրբերի և նահատակների կյանքի մեջ է, երբ նրանք իրենց սուրբ կյանքով ու Քրիստոսին հավատարմորեն ծառայելու անկոտրում մղումով ցույց տվեցին քաջության բպում օրինակներ՝ արժանանալով հավիտենական արքայության. «Յառաջինսն հայեցարուք և քաջալերեցարուք: Ոչ ակարարանսն միայն բաւական համարեցան անձանց ի հաւատս, այլ և զմեռանելն քան զապրելն: Ի նահատակադիրն հայեցան և կատարեցան»[23]:

Նույնպես և սուրբ մարգարեները կամ, ինչպես ինքն է ասում՝ «Մարք և ստնտուք, դայեակք և սնուցիչք»[24], որոնք շարունակողը հանդիսացան **Օրենքի:** Եվ չնայած, որ նրանք չունեին ուսուցիչներ կամ վարդապետներ, սակայն կարողացան «բանիւք» խոսել և «գործով» կատարել:

Եղիշեն գտնում է, որ ճշմարիտ քրիստոնյան հետևողը պետք է հանդիսանա մարգարեական ուսուցումների: Ու թեև մարդը ապերախտ գտնվեց ու անհնազանդ, այն աստիճան, որ նրանից «ձանձրացան» նույնիսկ

[15] Նույն տեղ, էջ 202:
[16] Նույն տեղ, էջ 202:
[17] Նույն տեղ, էջ 202:
[18] Նույն տեղ, էջ 201:
[19] Նույն տեղ, էջ 201:
[20] Նույն տեղ, էջ 199:
[21] Նույն տեղ, էջ 199:
[22] Նույն տեղ, էջ 201:
[23] Նույն տեղ, էջ 202:
[24] Նույն տեղ, էջ 200:

մարգարեները, այնուամենայնիվ՝ Քրիստոսով մարդը բարձրացավ պատվո աստիճանի Աստուծո մոտ, այնքան, որ Աստծուն կարողացավ **Հայր** կոչել: Տիեզերքում եղող ոչ մի բանական էակ (որ են հրեշտակները) չունի այս իշխանությունը, «թեպէտ և հպօրք են և հոգևորք»[25], սակայն սպասավորներն են Աստուծո ու ոչ թե որդիները:

Հրեշտակների պարտականությունը, ըստ դավանաբանության տեսության, Աստծուն փառավորելն է: Նույնն է նաև Եղիշեի մոտ. «Վերին կօրքն ամենեին կամաց նորա սպասեն սիրով. լծեալ կան ի միաբանութեան՝ փառաւորելով զԱստուած, և յահագին փառաց նորա ծածկեն զոտս և զերեսս, զի յինքեանս սիրեսցեն զԱստուած: Փոխանակ աչօք տեսանելոյ, զսէրն բաւական համարին յանձինս»[26]:

Այլ է նրա վերաբերմունքը չաստվածների նկատմամբ: Հեթանոսական կուռքերի գոյությունը Եղիշեի մոտ տարակարծության տեղիք չի տալիս, որովհետև «չիցեն իսկ, և ոչ այլ լինելոց են»[27]: Տարբեր են նրանք «ոմն գող, ոմն՝ սպանանող, ոմն՝ շուն և ամենեքեան՝ իւրաքանչիւր ախտիւքն չարչարանաց»[28]:

Հեթանոսները կամ այն կռապաշտները, որ այդ չաստվածներին են պաշտում, Եղիշեի մոտ «ոչ են ճշմարիտ որդիք Աստուծոյ»[29]: Որպես հմուտ աստվածաբան և քրիստոնյա, Եղիշեն ոչ միայն չի ժխտում, այլ նաև միմյանց է կապում Հին և Նոր Կտակարանները:

Նրա համար աշխարհի ստեղծումից մինչև այժմ էլ (5-րդ դար) Աստված նախախնամողն է աշխարհի: Նրա այն մեջբերումը, թե՝ «Ծագեսցէ աստղն Յակոբայ և յարիցէ այր յԻսրայելէ, և հասցէ և սատակեսցէ զկօրութիւնս Ամաղեկայ»[30] և նրա հետ՝ «Աստղն ծագեաց, և **այրն** յարեաւ, եհար սատակեաց զսատանայ, որ էր զօրութիւն հեթանոսաց»[31]: նախադասության հասեմատումը լավագույն վկայությունն է վերը նշված մեր մտքի:

Եղիշեն մի տեղ ուղղակի հայտարարում է այս մասին՝ ասելով. «Այս կամք Աստուծոյ էին ի սկզբանէ և կատարեցան ի գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»[32]:

Սակայն նախախնամությանը մեծ տեղ տալով հանդերձ, նա Օգոստինոսի նման չի մերժում բնավ մարդու ազատ կամքը, մարդու արարքները դրանով պայմանավորելը: Ազատ կամքը Եղիշեի մոտ մեծ դեր է խաղում հավատացյալի կյանքում: Նա հաստատում է, որ թեև Աստված կարող է մարդուն միանգամից սրբացնել կամ, ինչպես ասում է՝ «երկնաւորս առնել»[33], սակայն «զպաղօթսն ի մեր կամս ընկենու. զի մեք երկրաւորքս՝ մեզէն կարեմք լինել երկնաւորք»[34]:

Այլ խոսքով՝ փրկության ճանապարհի վրա կանգնելը կամ նրանից շեղվելը իր իսկ՝ հավատացյալի ձեռքում է:

ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԱԲԱՋՅԱՆ

[25] Նույն տեղ, էջ 201:
[26] Նույն տեղ, էջ 203:
[27] Նույն տեղ, էջ 200:
[28] Նույն տեղ, էջ 200:
[29] Նույն տեղ, էջ 200:
[30] Նույն տեղ, էջ 201:
[31] Նույն տեղ, էջ 201:
[32] Նույն տեղ, էջ 201:
[33] Նույն տեղ, էջ 202:
[34] Նույն տեղ, էջ 202:



ՈՒՂՂԱՓԱՌ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՎ ԱՆՀԱՂԹ ՓԻԼԻՍՈՓԱ ԵՐԱՆԵԼԻ ԵՂԻՇԵԻ ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔԻ՝ «ՀԱՅՐ ՄԵՐ ՈՐ ՅԵՐԿԻՆՍ»-Ի ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ

Բնությամբ պարզ է, իսկ խոսքերը՝ առավել քան բարձր:

[Նրանց] հայացքները դեպի վեր ուղղել տվեց և Աստծուն Հայր ճանաչեցրեց բոլորին: Անձկալի գթության համար է, որ [Նա] ստիպում է, որ որդիները Հորը դիմեն, և նրանց ցանկության կարոտության համար է, որ Հորը կոչում է ողորմածության: Որդիներն էլ պետք է լինեն Հոր կամքի համաձայն, այն ժամանակ Հայրն էլ որդիների ցանկության համաձայն կհոգա նրանց կարիքները և նրանց կդարձնի Իր ողջ հարստության ժառանգորդները: Այդ Հայր անունը մեկ է հոգևորների և մարմնավորների համար, իսկ մարմնական կարիքները, մասերի բաժանվելով, վատորոշվում են միմյանցից: Երկրավոր հայրերին մարմնավոր ցանկասիրության սխտերը առաջնորդեցին որդեծնության՝ ախտավոր հղիությամբ որդիներ ծնելու: Փոփոխական է հայրությունը, երբեմն Որդին է դառնում հայր, հրաժարվում աշխարհի կյանքից, վերանում է Նրանից հայրությունը, փոխարենը գալիս է որդին, դառնում հայր և նույն ճանապարհով գնում: Այդպես էլ մեկը մյուսին փոխարինելով՝ այս աշխարհի վերջը պիտի գա:

Մեկ է ճշմարիտ Հայրը և ողջ աշխարհի Արարիչը: Առանց կրքի հղացավ, առանց ցավերի ծնեց բոլոր երևացող և աներևույթ բաները: Ով որ ծնվեց, հենց նա էլ (Քրիստոս) գալով ուսուցանում է որդիներին՝ դիմելու երկնավոր Հորը, որպեսզի աշխարհը տևապես չմնա խանձարուրի ու օրորոցի մեջ: Կաթնակերներ և մանկական սնունդ ընդունողներ, որ ընկղմվեցին ու թավալվեցին գարշելի ախտերի մեջ, որոնցից ձանձրացան մայրերն ու ստնտուները, թեքեցին իրենց երեսները դայակներն ու կերակրողները: Եվ սրանք օրենքն ու մարգարեներն են: Ծովի մեջ լվացին, բայց չկարողացան մաքրել: Գետի միջով անցան, բայց չողողվեցին: Առատորեն օճառ օգտագործեցին և լվացվեցին բորակով, բայց չմաքրվեցին: Ինչ որ կրում էին իրենց վրա, նետեցին և հեռացան: Գթաց երկնավոր Հայրը, երկնքից երկիր իջավ, գըտավ բոլորին արյան մեջ թաթախված, մեռած կուռքերին կոհ մատուցելիս: Վերցրեց, լվաց, մաքրեց, հագցրեց երկնային հանդերձանք և մոտեցրեց նորից նույն որդեգրության: Սովորեցրեց Հոր վարդապետությունը, որպեսզի կարողանան դիմել սիրելի երկնավոր Հորը: «Երբ,—ասում է,—աղոթքի մեջ եք, երեխայի նման մի՛ շատախոսեք: Աստված լսում է սրտի խորհուրդները և բարի գործերի դիմաց բարի է հատուցում»: Իբրև բանավոր վկայություն այսքանն է բավական ասելու. «Հա՛յր մեր, որ երկնքում ես, սուրբ է Քո անունը»: Այս պարգևը, [այսինքն] այն, որ Աստված մարդկանց Հայրն է, ավելի մեծ է, քան մարդկանց տրված բոլոր պարգևները: Հրեշտակներն անգամ, թեպետ հզոր են և հոգևոր, իրավունք չունեն այս ասելու, որովհետև սպասավորներ են և ոչ՝ որդիներ: Ո՞վ մարդ, կգույշ եղի՛ր քո անձի համար, ինչպիսի՞ պատվով մեծարվեցիր, որ համարձակվեցիր Աստծուն քեզ Հայր անվանել: Այս բանի մասին մտածի՛ր և քեզ պահիր Հոր պատվի համեմատ, որպեսզի վերիններն ու

ներքինները իմանան, թե իսկապես Աստուծո որդի ես: Աստված մարդուն խոսքով է ծնունդ տալիս: Թեպետև դու խոսքով չես կարող, սակայն մարմնիդ ցանկություններով մի՛ ընկղմվիր երկրային բաների մեջ: Կտրի՛ր, դե՛ն նետիր քեզնից ավելորդ ցանկությունները: Անհրաժեշտ ուտելիքներով բավարարվիր: Խախտումներ մի՛ արա և մի՛ շվայտացիր: Գիրության հետևանքով ցանկասիրությամբ է լցվում մարդ, և շատ ճարպից անօրենություններ են առաջանում, ինչպես հարբեցողությունից՝ պիղծ գիջությունը: Այնպիսին՝ Աստծուն Հայր չի կարող անվանել: Արդյոք դու ինքդ չվկայեցի՞ր՝ ասելով՝ սուրբ է Քո անունը: Աստծուն ո՞վ կարող է անուն դնել: Երբ «Սուրբ» ենք ասում, ա՛յն է Աստուծո ճշմարիտ անունը: Սուտ աստվածների անունները սուրբ չեն. որը գող է, որը՝ սպանող, որը՝ շնացող, և յուրաքանչյուրը մի չարչարելի ախտով վարակված, մանավանդ որ [նրանք] գոյություն չունեն էլ և չեն էլ ունենալու: Այն մարդիկ, որ նրանց աստվածներ կոչեցին, Աստուծո ճշմարիտ որդիները չեն: [Քրիստոս] նրանց սովորեցնում է դիմել Աստծուն և նրանց հրամայում է աղոթել Հորը: Նրանց միջոցով է բացվում դռուը բոլորի համար, որպեսզի այդ դռնով անցնեն բոլորը: Նույն աղոթքները սովորեն, այն է՝ աղաչել Աստծուն և ասել. «Հա՛յր մեր, որ երկնքում ես, սուրբ է Քո անունը»: Երբ սովորեն ճշմարտախոս լինել աղոթքների մեջ, այն ժամանակ և ճշմարտագործ կլինեն աշխարհում. այն ժամանակ էլ կարող են լքել և դեն գցել սուտ աստվածներին: Նրանք, որոնք քարը և փայտը հայր ու մայր էին կոչում, նրանցից հեռացան, հրաժարվեցին իրենց անառակ գործերից, մաքրվեց նրանց միտքը իմաստության գիտությամբ, բացվեցին նրանց բերանները՝ համարձակ խոսելու և ասելու. «Թող գա Քո արքայությունը, թող լինի Քո կամքը ինչպես երկնքում, այնպես էլ՝ երկրի վրա»: Երբ Աստված թագավորեց ամեն ինչի վրա, Նրա արքայությունն էլ [թագավորեց] Իր կամքը կատարողների վրա: Միայն, ասում է, թող գա Քո թագավորությունը: Սա նման է այն բանին, թե «կծագի Հակոբի աստղը, Իսրայելից կելնի մի մարդ, կհարձակվի, կխորտակի Ամաղեկի զորությունը»: Աստղը ծագեց, և մարդն ելավ, հարվածեց սպանեց սատանային, որ հեթանոսների ուժն էր: Աստուծո այս կամքը սկզբից կար և կատարվեց մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի գալըստյամբ: Այս աղոթքը պետք է սովորենք խոսքերով և հավատով սպասենք Նրա երկրորդ գալստյան, երբ մեր աղոթքների համաձայն մեր արարքներն էլ ճշմարիտ կերպով հայտնի կլինեն:

«Թող գա Քո արքայությունը»: Ինքն արքայությունն է սովորեցնում իր մասին խոսել: «Նա աշխարհում կար, աշխարհը Նրա միջոցով եղավ, բայց աշխարհը Նրան չճանաչեց»: [Քրիստոս] սովորեցնում է Հայր ասել, որպեսզի միայն Նրան ճանաչես աշխարհի Արարիչ. որպես արարիչ՝ ամեն ինչի, որպես Որդեգիր՝ միայն մարդու: Ով որ ստեղծեց, Նա էլ արքան է, Ով որ եկավ, Նա էլ Նրա արքայությունն է: Բնությամբ մեր Աստվածը նույն մեր Հայրն է Իր աստվածության շնորհներով: Երբ Աստված բոլորի Հայրն է, Քրիստոս-եղբայրն է բոլոր նրանց, որոնք Նրա կամքն են կատարում: Արքա էր և քեզ եղբայր դարձավ: Այս պարգևը մեծ է քան արարչության առաջնեկը: Այն ժամանակ ասվեց, որ ըստ Աստծու պատկերի է եղել մարդը, որ [Նա] ըստ պատկերի է ստեղծել. հոգեղենը ցանկացավ, որ հողեղենը իր կերպարանքով լինի, որպեսզի սա էլ Նրանից սովորի առաքինի լինել: Երբ [հողեղենը] չկարողացավ մեկ լինել Նրա հետ, Ինքն իսկ առավ նրա կերպարանքը, այնպես, ինչպես Իրեն էր հայտնի: Ինքը կերպարանավորվեց անխախտելի և անքակտելի էությունը, անհասանելի և անասելի, միակ հավատալին և հուսալին: Եվ Նա է միայն արժանի սիրվելու, որ մեր լեզվով է մեկ հետ խոսում և ուսուցանում: Խոսում է մեկ հարմար ձևով և երևելի օրինակներով ուսուցանում աներևույթ աստվածությունը, որպեսզի երևացողներով ճանաչես աներևույթ արքայությունը: Ինչպես որ Նա եկավ, նույն ձևով և երկրորդ անգամ պիտի գա: Այժմ վարդապետությունը աշակերտներին որպես որդիներ ճանաչեց, ծառաներին տերեր դարձրեց և մահկանացուներին անմահության հրավիրեց՝ ասելով. «Թող գա արքայությունը»՝ կգուշությամբ պատրաստվելու և ապա՝ յուրաքանչյուր իշխանության հատուցման համար: Աղոթքը ցանկալի է այն չափով, որչափով որ քեզ կարողանաս ժառանգակից դարձնել և արքայության մասունքին ընծայել. և Նա մեր մարդկային բնությունից էլ վեր պարգևներ է խոստանում:

Նա ասում է. «Քո կամքը թող լինի»: Աստծու կամքը մարդու համար սրբություն է, որովհետև Նա նրան բաժնեկից դարձրեց Իր աստվածությանը: Եվ այդ ոչ այն պատճառով, որ չենք կարող հասնել այդ [աստվածության] բաժնին, այլ՝ որպեսզի հեշտությամբ ձեռք բերենք մեր հույսի համար համբերությունը, նման նրանց, որոնց սովորեցրեց աղոթել: Եթե նրանք վախճան գտան աղոթքներով, ապա մենք էլ կարող ենք. միայն թե հավատա, հուսա և սիրիր. այն ժամանակ [երկրավոր կյանքդ] կալարտես խնդու-

թյամբ: Իսկ եթե տրտմությամբ չարչարակից լինես Քրիստոսին, Աստված Ինքը կկորացնի քեզ համբերելու համար: Եվ եթե ի վիճակի չլինեինք, Աստված մեզ այդպիսի աղոթք չէր սովորեցնի: Մեզանից առաջ եղողներին նայենք և քաջալերվենք: Հավատքի համար ոչ միայն [իրենց] անձերը չարչարեցին, այլ նույնիսկ լավ համարեցին մեռնել, քան ապրել: Նահատակության հիմքը դնողին նայեցին և մահն ընդունեցին: Խոսքերով գովաբանենք նրանց, իսկ գործով նույն նահատակությամբ վախճանվենք: Աստված բոլորի Հայրն է հավասարապես, հավասարապես էլ բոլորս պարտավոր ենք որդիներ լինել, որովհետև մեկ է ժառանգությունը, որ Նա բաշխեց բոլորին:

(Նա ասում է). «Քո կամքը թող լինի ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա»: Չնայած, որ Աստված կարող է բոլոր մարդկանց երկնավոր դարձնել, [սակայն] աղոթքը մեր կամքին է թողնում, որպեսզի մենք՝ երկրավորներս, ինքներս կարողանանք դառնալ երկնավորներ: Վերին զորքը [հրեշտակները] ամբողջովին Նրա կամքին են ծառայում սիրով, միաբանությամբ լծված են Աստծո փառաբանությանը և Նրա մեծ փառքի դիմաց ծածկում են [իրենց] ոտքերն ու երեսները, որպեսզի իրենց մեջ սիրեն Աստծուն: Նրան աչքերով տեսնելու փոխարեն Իր սերը բավական են համարում իրենց համար: Աստված էլ նրանց սիրո դիմաց Իր կամքը սիրով է կատարում նրանց մեջ: Չընդունենք մարմնավոր աչքերով տեսնել Աստծուն, որպեսզի անժամանակ չսպառվենք: Թող մեր սերը պատգամավոր լինի մեզանից դեպի Նա և Նրա հանդեպ [մեր ունեցած] սիրուց թող կատարվի Նրա կամքը մեր մեջ: Ինչ որ սովորեցրին մեզ մարգարեները, ջանանք դրանց ետևից ընթանալ. նրանք խոսքով ասացին, իսկ գործով կատարեցին: Նրանց վարդապետն էլ Նա էր, ով քեզ աղոթք սովորեցրեց: Եվ դու էլ խոսքով սովորիր աղոթել և գործով ջանա կատարել: Դու հեռու չես հրեշտակներից, այլ նրանց հետ աղոթում ես, որպեսզի նրանց հետ փառավորես Աստծուն: Ինչպես որ դու ես նրանց հետ միաբանվում, այնպես էլ նրանք քեզ երգակից են լինում աղոթքներով և օրհնություններով: Համարձակ բաց ես անում բերանդ և ասում. «Թող լինի Քո կամքը ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա»: Այս իշխանությունը ավելի մեծ է, քան առաջին օրհնությունը: Այնտեղ միայն երկրի վրա իշխանությամբ տիրելու մասին է խոսքը, այստեղ, ասում է, և՛ երկնքում, և՛ երկրի վրա:

(Նա ասում է). «Մեր ամենօրյա հացը տուր մեզ»: Երկրաբույս հացը Աստված առանց խնդրելու շնորհում է բոլորին առհասարակ: (Ասված է). «Դու ես Տեր, որ մարդկանց և կենդանիներին ապրեցնում ես»: Եվ ինչպե՞ս պետք է ասել, սա ամենօրյա իսկ չէ. մանկամտությունը վերացնում է, հիվանդությունը՝ կարճում, չքավորությունը՝ խափանում, մահը՝ քանդում և հեռու նետում: (Ասված է). «Ձեր հայրերը կերան մանանան անապատում և մեռան: Սա է ճշմարիտ հացը, որ իջել է երկնքից: Եթե որևէ մեկը ուտի այս հացից՝ չի մեռնի հավիտյան»:

[Մարդիկ] լսում էին Նրանից խոսքը և չէին կարողանում անմիջապես հասկանալ: Նա կրկնում և երրորդ անգամ է ասում նույն խոսքը, որպեսզի դյուրությամբ լսեն և հավատքով ընդունեն խոսքի ուժը: «Ես եմ,—ասում է,—կենդանի հացը՝ իջած երկնքից: Ով որ այս հացից ուտի՝ մահ չի ճաշակի»: Աղոթքի մեջ Նա սովորեցնում է այս հացը խնդրել Աստծուց ամեն օր: Եթե լավ մտածես, [կիմանաս], թե, ով այս հացը սրբությամբ է ուտում և իր անձը դրան արժանի ձևով է պատրաստում, նա երկրավոր արքայության կարոտը չի քաշի: Մահկանացու ձեռքերի մեջ անմահ հաց դրվելով՝ իսկույն նեթ ձեռքերն անմահանում են, և այս [հացը] ուտելով՝ մարդը ամբողջապես՝ շնչով, հոգով և մարմնով հոգիանում և բաժնեկից է դառնում Քրիստոսին՝ միայն անարատ պահելով զորությունը սկզբից մինչև վերջ: Չկա այնպիսի երկրային չարչարանք, որ նման մարդուն հաղթի: Արծաթն արհամարհելի է նրա համար և ոսկին ատելի՝ նրա աչքում: Այս աշխարհի փառքը [նա] ցավ է համարում, քանի որ անմահ հացով լիանալով՝ նրա մտածումները մաքրվում են երկնավոր ապատությամբ:

Այս նույնը ի զորու եղավ բոլորին: Թե նա մանուկ է՝ չափահաս երևաց, թե ցավերից տկարացել էր՝ Աստուծո ուժը նրա մեջ բնակվեց, թե այս կյանքում իր վախճանն էր գտել՝ անմահ կյանքն իր հետ տարավ առ Աստված: Մեր Տերը աղոթքի մեջ ա՛յս էր սովորեցնում, որ խնդրենք Իրենից «Մեր հացը ամեն օր տուր մեզ»: Ո՛չ երկրից, այլ՝ Տիրոջից: Հայտնի է, թե ո՛չ երկնքից, այլ [ասում է՝ տուր մեզ] բոլորի Տիրոջը: «Այս է,—ասում է,—Իմ մարմինը և այս է Իմ արյունը»: Թեպետ [այն] անփոխարինելի էր, [բայց] քո սիրո համար փոխարինվեց. և քեզ, որ քո կամքով փոխարինվեցիր, անփոխարինելի աստվածությամբ Իրեն կցեց: [Ասված է]. «Չես թողնի ինձ դժոխքում և Քո սրբին թույլ չես տա տեսնել ապականություն»: Ուրբաթ օրը խաչվեց՝ մահը փոխարինելու համար, կիրակի օրը ադամական փոխարինված ոսկորները հավաքեց և իրար կցեց՝ անմահացնելու համար և շատերին ցույց տը-

վեց ճշմարտապես և ոչ երևութապես. մի օր հաց դարձավ վերնատան մեջ և ամեն անգամ հաց է դառնում եկեղեցում, սուրբ սեղանի վրա: Նախ Ի՛նքը ճաշակեց և ապա մեկ բոլորիս ճաշակակից դարձրեց նույն չարչարանքներին: Նա այսուհետև չարչարանքների մեջ չէ, այլ փառավորվում է հայրական փառքի մեջ՝ հրեշտակների և մարդկանց կողմից: Եվ մեր՝ բոլորիս չարչարանքները կրեց Իր անչարչարելի աստվածությամբ: Մեր հավատքի հույսը իբրև մի խարիսխ հաստատուն պահենք մեր հոգիներում և մարմիններում: Ինչպես այունը ամրություն է կառույցի համար [այնպես էլ] հավատքը մարդու համար միություն է Աստծու հետ. ահա թե ինչու [մարդը] համարձակ կերպով կարող է խոսել և ասել. «Ների՛ր մեզ մեր պարտքերը, ինչպես որ մենք ենք ներում մեր պարտապաններին»:

Այս է ճշմարիտ, բնական և օգտակար աղոթքը: Երբ դու չպահանջես ընկերոջիցդ իր պարտքը, այն ժամանակ Աստված էլ քո բոլոր հանցանքները կների քեզ՝ անմեղ ճանաչելով: Լսի՛ր Պետրոսին, թե ինչպես սովորեց նա Տիրոջից: Նա յոթն անգամ կամեցավ ներել եղբոր հանցանքը, իսկ մեր Տերը ասաց. «Յոթանասուն անգամ յոթը»: Պետրոսը, իբրև մարդ, սահման դրեց, իսկ մեր Տերը Իր աստվածային էության մարդասիրության բարերարությունը չսահմանափակեց: Շարունակ մեղք ենք գործում մեր խոսքերով և գործերով, իսկ Աստված տեսնում է և վանց է առնում, որպեսզի Իր համբերատարությամբ մեզ ապաշխարություն բերի: Մեղք չգործելն իսկ մարդու համար կատարյալ արդարություն է, իսկ եթե որպես մարդ հանցանք գործեց, թող շտապի վրջալ ապաշխարությամբ. բաց են Նրա ողորմության դռները. ապաշխարողների առաջ Նա չի փակում, մանավանդ [նրանց, որոնք գիտեն հավատով խնդրել: Նրանք էլ կարող են առաքինությամբ ճգնել՝ հոգևոր վաստակի համար: Նրանք ոչ միայն իրենց ընկերների պարտքերն են ներում, այլ նաև իրենց ունեցվածքն են բաժանում կարիքավորներին:

Աստուծո վորությունն է, որ նրանց մղում է առաքինության, ինչպես որ նախնիներն Լին անում: «Ովքեր,—ասում է,—գյուղերի, ագարակների և ունեցվածքի տեր էին, [նրանցից] յուրաքանչյուրը վաճառում էր ունեցվածքը և բերում-դնում առաքյալների ոտքերի առջև»: Մեր Տերը նրանց ուղարկեց Բանը քարոզելու: Նրանք Բանի քարոզիչներ էին և ինչքի մատակարարներ: Խոսքի ձայնը ականջին է հասնում, իսկ երկնայինի սերը առանց խոսքի ուսուցանում էր առատաձեռնություն. ոչ նրա համար, որ աղքատանալ էին ուզում, այլ որպեսզի կարողանան հասնել երկնավոր հարստությանը: Եվ դու, երբ քո ընկերոջը ներում ես քեզ ունեցած պարտքը, այդ ոչ թե նրա համար է, որ ատելով ատում ես քո ունեցվածքը, այլ նրա համար, որ քո արած քիչ ողորմությամբ Աստված քեզ ների այն բազմապատիկ պարտքերը, որ դու ունեիր: Այս խոսքերին հետևիր. երբ դու ներես քո ընկերոջը, դու էլ ներման կարժանանաս: Համարձակությամբ բացում ես բերանդ և ասում. «Մի՛ տար ինձ փորձության, այլ՝ փրկիր չարից»:

Աստուծո կամքը չէ մարդուն փորձության տանել, այլ՝ փորձությունից ազատել և մահվանից փրկել: [Նա, որ չխնայեց Իր Որդուն և մեզ բոլորիս համար մահվան մատնեց, Նրանով ամենայն բարիք է շնորհում բոլոր նրանց, ովքեր խնդրում են Նրանից: Թեպետ ի վիճակի չենք փոխարենը հատուցելու Աստծուն, [սակայն] չծուլանանք, որքան որ կարող ենք: Մեր ժուժկալությունը պահեցողություն է համարվելու, քիչ խմիչք օգտագործելը՝ խմիչքից կտրվել, համեստ հանդերձանքը՝ խոնարհություն, անհրաժեշտ չափի ունեցվածքը՝ աղքատություն. հանուն երանության պետք է հեզ լինել, ընկերոջը պետք է սովորեցնել խոնարհություն: Եթե չենք կարող անքուն մնալ, ապա [գոնե] ողջ գիշե՛րը չքնենք, որպեսզի երբեք չմոռանանք սաղմոսներն ու օրհնությունները: Եթե աղքատների կարիքները չենք կարող հոգալ, [գոնե] պատառ հացի և բաժակի կարոտ չթողնենք նրանց: Մեր ունեցվածքի մեջ որբերից և այրիներից հափշտակված բան թող չգտնվի: Ինչ որ ունենք, թող Աստծուն նվիրված լինի: Այն ժամանակ մեր անձերն էլ Նրա համար հաճելի և ընդունելի պատարագ կլինեն: Բոլորը պետք է շտապեն Աստուծո պատվիրանները կատարելու՝ տղամարդիկ և կանայք, ապառներն ու ծառաները, քանի որ մեր Տերը բոլորի՛ փրկության համար եկավ. և Նրա մարդասիրությանը վայել են փառք, իշխանություն և պատիվ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կ. Գանձակեցին, որն ավելի վաղ կոչվել է **Կիրակոս Գետիկցի, Կիրակոս Արևելցի,** 13-րդ դարի հայ խոշորագույն պատմիչներից մեկն է: Նրա գլխավոր երկը՝ «Հայոց պատմությունը», 13-րդ դարի մեր ժողովրդի (և ոչ միայն հայ ժողովրդի) կյանքում կատարված կանավան անցուդարձերի, հատկապես թաթարմոնղոլների՝ Հայաստան կատարած արշավանքների վերաբերյալ ականատեսի գրչով շարադրված եվակի արժեք ներկայացնող գրական հուշարձան է: Այն վաղուց ի վեր գրավել է հայ և այլազգի պատմաբանների, բանասերների, լեզվաբանների ուշադրությունը, թարգմանվել է ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլ լեզուներով, նրա մասին գրել են աշխատություններ:

Ըստ Հ. Անասյանի «Մատենագիտության»[1], Կ. Գանձակեցու «Հայոց պատմություն» գործի գրաբար բնագիրն առաջին անգամ հրատարակվել է Մոսկվայում 1858 թվականին, երկրորդ անգամ՝ Վենետիկում, 1865-ին, երրորդ անգամ՝ Թիֆլիսում, 1909-ին: Ավելացնենք, ուրեմն, որ չորրորդ հրատարակությունը տեղի է ունեցել Երևանում, 1961 թվականին, որը բազմաթիվ ձեռագրերի համեմատությամբ, ընդարձակ ու արժեքավոր «Առաջաբան»-ով ակադեմիական հրատարակություն է՝ ճանաչված բանասեր Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի աշխատասիրությամբ[2]:

Որքան էլ կարմանալի է ու տարօրինակ, չկար նշված հավվագյուտ երկի աշխարհաբար թարգմանությունը: Ահա այս կարևոր բացը վերացրեց վաստակաշատ հայագետ, պրոֆ. Վարագ Առաքելյանը՝ մեր ժողովրդին մատուցելով արդի գրական հայերենով ու դասական թարգմանությամբ Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմությունը»[3]: Այս աշխատանքն արժեքավոր լուրջ ներդրում է հայկական թարգմանչական արվեստի մեջ: Հայ ժողովուրդը վաղուց, շատ վաղուց իրավամբ բարձր է գնահատել թարգմանչական արվեստը որպես համամարդկային մշակույթի գանձարանից օգտվելու լավագույն միջոցներից մեկը: Խորին խորհուրդ ու մեծ իմաստ կա այն բանի մեջ, որ մեր նախնիները դարեր ի վեր նշել են «թարգմանչաց տոնը»: Այն, փաստորեն, մեր ժողովրդի հոգևոր մշակույթի, նրա ճիշտ զարգացման տոնն է, մի ավանդույթ, որն այսօր էլ շարունակվում է: Կ. Գանձակեցու «Հայոց պատմություն» երկի պրոֆ. Վարագ Առաքելյանի աշխարհաբար այս թարգմանությունը մեկ թույլ է տալիս ասելու, որ հմուտ գիտնականը հայ թարգմանչական արվեստի ակնիվ ու նվիրական ավանդույթների արժանի շարունակողներից, նրա բարի մշակներից մեկն է:

Նշված մատենագիրն ու նրա նշանավոր երկը բավական վաղուց են հրապուրել պրոֆ. Վարագ Առաքելյանին: Բավականանք թեկուզև նշելով, որ դեռևս 1968 թվականին նա հրատարակել է «Կիրակոս Գան-

[1] Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի,** Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ ՃԻԲ—ՃԻԳ:

[2] **Կիրակոս Գանձակեցի,** Պատմություն Հայոց: Աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961:

[3] Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի,** Հայոց պատմություն: Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վարագ Առաքելյանի, Երևան, 1982:

ձակեցի» խորագրով հոդված[4]: Նույն վերաառությամբ մի արժեքավոր հոդված-ուսումնասիրություն է տպագրել նաև 1972-ին[5]: Եվ վերջապես, մինչ բուն նյութին՝ Կ. Գանձակեցու «Հայոց պատմության» աշխարհաբար թարգմանությանը ձեռնամուխ լինելը, նա քննախույզ մտքով ձեռնարկել է հիշյալ ստեղծագործության գրաբար բնագրի ճշգրտման, վերականգնման աշխատատար, տքնաջան, բայց և խիստ շնորհակալ գործը՝ 1969 թվականին հրատարակելով «Բնագրական ուղղումներ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկում»[6] հոդվածը: Այստեղ-է ահա, որ պետք է ասել՝ նման գործ կատարելու ու այդպիսի որակով հոդված գրելու, հրատարակելու համար աշխատանքն ու տքնանքը ինչ-որ տեղ իրոք քիչ են: Առավել կարևորը լեկվակացողությունն է, այն էլ՝ գրաբարի զգացողությունը, ներհունությունը: Հիշյալ կողմերի գոյության, դրանց խելացի համադրման արդյունքն է այս հոդվածը, որը ճաշակով, մանրակրկիտությամբ և հմտությամբ արված գործ է: Ասվածը ճիշտ ու անաչառ կերպով ըմբռնելու նպատակով չմոռանանք, որ պրոֆ. Վարագ Առաքելյանը բնագրային իր համոզիչ ճշգրտումները կատարել է Կ. Մելիք-Օհանջանյանի պես ներհուն ու բանիմաց մի բանասերի կողմից աշխատասիրված ակադեմիական-քննական բնագրի մեջ: Մյուս կողմից, խնդրին մոտենալով մեթոդական առումով՝ սա միանգամայն իրավացի ու ճիշտ քայլ է պրոֆ. Վարագ Առաքելյանի կողմից, մի ուղեցույց բոլոր նրանց համար, ովքեր ձեռնամուխ կլինեն որևէ մատենագրի գրաբարալեկու երկի թարգմանական ակնիվ գործին: Հակառակ դեպքում, որակի մասին խոսք լինել չի կարող, եթե ելման կետը՝ բնագիրը ըստ հնարավորին ճշգրտված չէ:

Կ. Գանձակեցու «Հայոց պատմությունը» մի գործ է, որին մեր օրերում խիստ քչերը կարող էին մոտենալ: Ասվածը որպեսզի չափազանցություն չհնչի, տեսնենք, թե պրոֆ. Վարագ Առաքելյանն ինչպե՛ս է միջամտում բնագրին, մի հանգամանք, որը և՛ լեկվակացողություն, և՛ մեծ զգուշություն ու պատասխանատվություն է պահանջում: Ահա մի փոքրիկ քաղվածք վերոհիշյալ հոդվածից.

«Էջ 117, տող 10—11. «Իսկ սքանչելի հայրապետն Գրիգորիս օր ըստ օրէ յաւելոյր **ի բարեգործութիւն** ի պայծառութիւն եկեղեցւոյ»: **Ի բարեգործութիւն** կապակցության **ի**-ն ավելորդ է: Եթե **յաւելոյր** չհասկանանք ավելանում էր և **ի բարեգործութիւն**-ն էլ չմտածենք ներգոյական հոլով:

Էջ 123, տող 3—4. «Նոյնպէս և որդի, ընդ հօր **երդում** մշտնջենաւոր»: **Երդում** բառը կատարյալ սխալմունք է այստեղ. պետք է լինի **իւրում.** չնայած Շնորհալու «Թուղթ ընդհանրականի» համապատասխան տեղը **իւրոյ** է:

Էջ 129, տող 7. «Զայսոսիկ Աթանասիոս»: Պետք է ուղղել «Զայսոսիկ ասաց Աթանասիոս», ինչպես ունի Շնորհալին համապատասխան տեղում»[7] և այլն:

Պրոֆ. Վարագ Առաքելյանի կողմից կատարված թարգմանության համառոտ ծանոթագրման մեջ կարդում ենք. «Թարգմանությունը կատարված է Կիրակոս Գանձակեցու «Պատմություն Հայոց» աշխատության գիտահամեմատական բնագրից, որը պատրաստել է ակադեմիկոս Կ. Ա. Մելիք-Օհանջանյանը»: Սա միանգամայն ճիշտ է և պրոֆ. Վարագ Առաքելյանի կողմից՝ ճանաչված բանասերի գիտական աշխատանքի արժեքավորման, գնահատման լավագույն վկան: Սակայն, սրանով հանդերձ, ինչպես արդեն ցույց տվեցինք, թարգմանչի կողմից այդ բնագիրը բարձրացվել է գիտական միանգամայն նոր որակի:

Պատահակա՞ն է արդյոք Կ. Գանձակեցու «Հայոց պատմության» աշխարհաբար թարգմանության այս բարձր որակը, հաջողությունը: Մեր խորին համոզմամբ՝ ամենևին: Եվ ահա թե ինչու: Դեռևս 1948 թվականին պրոֆ. Վարագ Առաքելյանը հմտալից մի գրախոսություն է գրել Փ. Բուզանդի «Հայոց պատմություն» երկի՝ ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի կողմից կատարված թարգմանության առթիվ (սա աշխարհաբար առաջին թարգմանությունն է, Երևան, 1947)[8]: Մատնանշենք նաև 1956 թվականին պրոֆ. Վարագ Առաքելյանի տպագրած գրախոսությունը Ե. Տեր-Մինասյանի՝ Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին «երկի աշխար-

---

[4] Տե՛ս «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ, Երևան, 1968, հուլիսի 10:

[5] **Վ. Դ. Առաքելյան,** Կիրակոս Գանձակեցի («Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 1, էջ 48—63):

[6] **Վ. Դ. Առաքելյան,** Բնագրական ուղղումներ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկում («Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1969, № 2, էջ 63—73):

[7] Տե՛ս **Վ. Դ. Առաքելյան,** Բնագրական ուղղումներ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկում («Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 2, էջ 67):

[8] **Վարագ Առաքելյան,** Փավստոս Բուզանդի աշխարհաբար թարգմանությունը (ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի «Աշխատությունների ժողովածու», հ. 3, Երևան, 1948, էջ 311—338):

հաբար թարգմանության առթիվ[9], որը նույնքան արժեքավոր է ու գիտական: Ուրեմն, ճշգրտել, ուղղել հայ բանասիրության մեջ ակադեմիկոսներ Ստ. Մալխասյանցի, Կ. Մելիք-Օհանջանյանի, պրոֆ. Ե Տեր-Մինասյանի պես հեղինակությունների աշխատությունները, ինքնին արդեն շատ բան է ասում: Սակայն թերևս ավելի ուշագրավ է ու կարևոր հարցի մի այլ կողմը, այն, թե այդ գրախոսություններն ի՞նչ չափով են գործածվել հիշյալ երկերի հաջորդ հրատարակությունների ժամանակ: Փ. Բուզանդի վերաբերյալ նրա գրախոսությունն ամբողջությամբ օգտագործվել է պատմիչի երկի հաջորդ հրատարակության մեջ (Աշոտ Աբրահամյանի և Վարագ Առաքելյանի խմբագրությամբ), որի «Խմբագրության կողմից» բաժնում կարդում ենք. «Այս հրատարակության մեջ օգտագործվել է նաև Վարագ Առաքելյանի գրախոսությունը Փավստոսի երկի մասին»[10]: Իսկ Ե. Տեր-Մինասյանը Եղիշեի իր աշխարհաբար թարգմանության առաջին հրատարակության մասին գրված գրախոսությունների վերաբերյալ նշում է. «Լույս տեսած քննադատական հոդվածներից ամենաարժեքավորը Վարագ Առաքելյանինն է..., որի մի շարք ճիշտ դիտողություններն ու ցանկությունները շնորհակալությամբ օգտագործել ենք գրքիս երկրորդ հրատարակության ժամանակ»[11]: Այս ամենին ավելացնենք նաև, որ պրոֆ. Վարագ Առաքելյանը մեր մի քանի պատմիչների գործերի աշխարհաբար հրատարակությունների մասնագիտական խմբագիրն է եղել (հաճախ՝ Ա. Ա. Աբրահամյանի հետ միասին): Պրոֆ. Վարագ Առաքելյանը 1969 թվականին հրատարակեց Մովսես Կաղանկատվացու հայտնի երկի աշխարհաբար թարգմանությունը[12]: Ե՛վ գիտական, և՛ թարգմանչական, և՛ տեքստաբանական աշխատանքի հոգեբանական ամուր ու առողջ թրծվածություն ստանալուց հետո միայն պրոֆ. Վարագ Առաքելյանը հայ թարգմանչական մշակույթը հարստացրեց Կ. Գանձակեցու «Հայոց պատմություն» երկի թարգմանությամբ, որը անտարակույս մի նոր որակ է Մովսես Կաղանկատվացու գործի՝ իր իսկ կողմից կատարված թարգմանության նկատմամբ:

Պրոֆ. Վարագ Առաքելյանը բուն թարգմանությունից առաջ կետեղել է «Կիրակոս Գանձակեցի» խորագրով մի ուսումնասիրություն (էջ 3—20), որի առաջին ենթավերնագիրն է «Կյանքը և միջավայրը»: Հասկանալի է, թարգմանիչը օգտվել է բանասիրության ձեռք բերած նվաճումներից: Այլ կերպ չէր էլ կարող լինել. գիտության շենքը միանգամից չի կառուցվում: Այսպես, պրոֆ. Վարագ Առաքելյանը, ակադեմիկոս Կ. Մելիք-Օհանջանյանի նման (ավելի ճիշտ՝ նրա հետևությամբ), ընդունում է, որ Կիրակոսը **Գանձակի երկրից** է (ինչպես մի առիթով հարեվանցիորեն ակնարկում է հենց ինքը՝ Կ. Գանձակեցին) և ոչ թե **Գանձակ** քաղաքից, որ այս մատենագիրը **Գանձակեցի** մականունը նախապես չի ունեցել:

Սակայն թարգմանիչն ունի նաև ի՛ր ըմբռնումները, հետազոտության արդյունքները: Այսպես, պրոֆ. Վարագ Առաքելյանի կողմից գիտական շրջանառության մեջ է մտնում հետևյալ տեղեկությունը, որն ինքնին ուշագրավ է. «Մեր պրպտումները,— գրում է նա,—թե երբ է Կիրակոս անվան վրա **Գանձակեցի** ավելացվել, մեկ հասցրին 17-րդ դարը: Դրանից հին նշում ոչ մի տեղ չենք գտնում:

1617 թվականին արտագրված մի ձեռագրում (Մատենադարան, № 5587) գրված է. «Ի պատմութենէ Կիրակոսի Գանձակեցւոյ»: Նրա անունը հիշատակող բոլոր պատմիչներն էլ կա՛մ Կիրակոս են կոչում, կա՛մ Կիրակոս Վարդապետ: Իսկ ինքն իրեն անվանում է Կիրակոս Արևելցի: Հետագա պատմաբաններից Կիրակոսին Գանձակեցի կոչողներից ամենահինը Միքայել Չամչյանն է, որի «Պատմութիւն հայոցը» լույս է տեսել 1784 թ.: Ամենայն հավանականությամբ այս վերջին աղբյուրից էլ Մխիթարյանների միջոցով ընդհանրացել է Գանձակեցի հորջորջումը: Նրա երկի բոլոր հրատարակությունները՝ սկսած 1858 թվականից, արդեն որդեգրել են այդ անվանումը»[13]: Այս կարգի փաստերի կարելի է հանդիպել ինչպես նշված, այնպես էլ հաջորդ ենթագլխում, որը խորագրված է «Գանձակեցու «Հայոց պատմություն» աշխատությունը»:

Գրաբարալեզու մատենագրության բազմաթիվ հուշարձաններ (այդ թվում նաև Կ. Գան-

[9] Տե՛ս **Վարագ Առաքելյան**, Եղիշե, Վարդանանց պատմությունը (Ե. Տեր-Մինասյանի թարգմանության առթիվ) («Բանբեր Մատենադարանի», Երևան, 1956, № 3, էջ 203—217):

[10] **Փավստոս Բուզանդ**, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 3:

[11] **Եղիշե**, Վարդանի և հայոց պատերազմի մասին: Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1971, էջ 16 («Ներածություն» բաժնում):

[12] **Մովսես Կաղանկատվացի**, Պատմություն Աղվանից աշխարհի: Թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Վարագ Առաքելյանի, Երևան, 1969:

[13] Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, Հայոց պատմություն, Երևան, 1982, «Կիրակոս Գանձակեցի» բաժինը, էջ 3—4:

ձակեցու «Հայոց պատմությունը») մեկ են հասել լեզվական աղավաղումներով: «Այդ փոփոխություններն ու աղավաղումները,— գրում է պրոֆ. Վարագ Առաքելյանը,—երկու հիմքով են կատարվել. կամ եղել են խմբագրման արդյունք և կամ հետևանք են ակամա գրչական սխալների»[14]: Ըստ հնարավորին ուղղվում, վերականգնվում են բնագրերը գիտության գործիչների կողմից: Բայց, այնուամենայնիվ, գրաբար բնագիրը թարգմանելիս, այս կամ այն նախադասության միտքն առավել հստակ ու ճիշտ ըմբռնելու համար, թարգմանիչները հաճախ ավելացնում են (նախադասության ընդհանուր բովանդակությամբ կամ նրա մի հատվածի իմաստով պայմանավորված) անհրաժեշտ բառեր, արտահայտություններ, որոնք առնվում են մաթեմատիկայի մեջ գործածվող միջակ փակագծերի մեջ, որպեսզի ցույց տրվի, թե այդ հավելումները ոչ թե բնագրինն են, այլ թարգմանչինը: Սակայն թարգմանիչների կողմից այդպիսի բառերի, արտահայտությունների ներմուծումը վուտ աղավաղումների կամ մատենագրի խրթին ոճի պատճառով մթագնված մտքի պարզման հետևանք չէ: Երևույթի գլխավոր պատճառները թարգմանվող երկի հեղինակի ապրած ժամանակաշրջանի լեզվի և արդի հայերենի միջոցով միևնույն միտքը արտահայտելու որոշ տարբերությունների, առանձնահատկությունների առկայությունն են, տարբեր ժամանակներում ապրած կամ ապրող մարդկանց լեզվամտածողական առանձնահատկությունները:

Պրոֆ. Վարագ Առաքելյանը ևս Կ. Գանձակեցու «Հայոց պատմության» թարգմանության մեջ միջակ փակագծերի մեջ վերցված բառերով, բառակապակցություններով, արտահայտություններով միջամտում է (բայց միջամտում է հմտորեն) նախադասության ոգին: Ահա մի քանի օրինակ-քաղվածք՝ «Այդ պատճառով [ըստ Կիրակոսի Մոկի գավառը] Վայոց ձոր անվանվեց մինչև այսօր» (թարգմանություն, էջ 64): «Նրա [Ստեփանոսի] մասունքներից բազմաթիվ բժշկություններ են լինում...» (նույն տեղում): «Սրանց օրոք Հռոմում տեղի ունեցավ պատկերների կանգնեցումը [ընդունվեց պատկերապաշտությունը]» (նույն տեղում, էջ 65) և այլն.

Հույժ արժեքավոր են նաև աշխարհաբար այս թարգմանությանը կցած թարգմանչի հարուստ, 325 կետերից բաղկացած ծանոթագրությունները, որոնք բանասիրական երկարատև հետազոտությունների արդյունք են: Դրանք թարգմանված երկը վանական կողմերով լուսաբանող, մեկնող ուղեցույցներ են, հաճախ նաև՝ ճշգրտումներ բանասիրության համար:

ԳԵՎՈՐԳ ԲԱՂԴԻՇՅԱՆ
(Բանասիրական գիտությունների թեկնածու)

---

[14] Վ. Դ. Առաքելյան, Բնագրական ուղղումներ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկում («Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 2, էջ 63):



ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»
(Հատվածներ աշխարհաբար թարգմանությունից,
թարգմ. Վարագ Առաքելյանի)

Հավատում ենք և՛ Հորը և՛ Որդուն, և՛ Սուրբ Հոգուն՝ երեք կատարյալ անձերի և մի փառավորված աստվածության. սուրբ ու փառակից Երրորդություն, անսկիզբ ու անվախճան, անժամանակ ու անտեղ, միշտ անկարոտ և ուրախ, ամեն բանում կատարյալ և բարու մեջ իմացված, որը [բարին] բնականորեն ունի և անպակաս տալիս է կարոտներին: Կատարյալ Երրորդություն, անաճելի ու աննվազելի, անձով բաժանված, երբեմն նաև անունով, բայց միության մեջ մնացած, փառավորված է ու փառավորվում է աստվածության էությամբ, կամքով, իմաստությամբ, գործով, մեծությամբ, մանավանդ անհասանելիությամբ և անասելի ողորմածությամբ:

Հայր անծին, Որդի ծնված Հորից, անցավ ու անմարմին, Հորը էակից ժամանակներից առաջ: Սուրբ Հոգին Հորից բղխումնք և Որդուց երևացում, ոչ թե Որդու նման ծնունդով, այլ աղբյուրի նման առաջ եկած, իրեն համար միայն քննելի օրինակ, իսկ արարածների կողմից անիմանալի, միշտ Հոր հետ Որդի ու Հոգի. Հոգի ինչպես Հոր, նմանապես և Որդու, ոչ Հայրն է փոխվում Որդու, կամ Որդին՝ Հոգու, կամ Հոգին՝ Որդու և Հոր:

Հայրը ունի անձ և հայրական անուն, և Որդին ունի անձ ու որդիական անուն, և Հոգին ունի անձ ու հոգիական անուն. նորոգություն կամ անունների ու անձերի փոփոխություն չունեն, այլ Հայրը միշտ Հայր է, Որդին՝ միշտ Որդի, Հոգին՝ միշտ Հոգի, որին և հավատում եմ:

Սրանից ու սիրուց Որդին անձնավորության պես հոգով ու մարմնով գոյացավ սուրբ կույս Մարիամի մեջ՝ Գաբրիել հրեշտակապետի ավետումով, և մեր փրկության համար նրանից մարդացավ. մեր էության համապատասխան [ունեցավ] հոգի, միտք, ջունչ, մարմին, ինչ որ է կատարյալ մարդ՝ Ադամի մեղանչած էությամբ, որից Մարիամն էր, որին առնելով աստվածացրեց առանց խառնըման ու փոփոխման, անքննելի ու անպատմելի խառնումով, և եղավ երկու կատարյալ էություններից՝ աստվածայինից ու մարդկայինից, մի կատարյալ անձնավորություն՝ էությամբ անփոփոխելի ու անբաժանելի: Ոչ փոփոխեց մարդկային խիտ ու բաղադրյալ էությունը աստվածային անբաղադիր ու պարզ էությանը՝ իրենը կորցնելով, և ոչ էլ աստվածային պարզ, անմարմին էությունը խառնեց մարմնական էության հետ. պակասեց իր հավիտենական պարզությունից, թեպետ և անքակտելի միության համար ասվում է անմարմինը մարմնավորվում է և Բանը [Քրիստոսը] թանձրանում է: Մնաց մի միածին Որդի, մի անձ, մի Քրիստոս, և ճըշմարտորեն երկուսից միացված մի էություն, մի կամք, մի իղձ, մի գործ, կուսությամբ մի ծնունդ, մի մայր առանց հոր, որը հավիտենությունից առաջ առանց մոր էր ծնված:

Եվ դավանում եմ Էմմանվելի մորը՝ Աստվածածնին մինչև հավիտյան և Էմմանվել Աստծուն մինչև հավիտյան՝ նույն մարմնով ծննդից հետո: Մարդեղության բոլոր գործերը Աստծու գործ եմ ընդունում՝ ցածրագույնները, բարձրագույնները և անբամբասելի տանջանքները, որ մեզ համար կրեց. չեմ բաժանում, այլ համարում եմ մի, անկոյգ իմ տերը, և խառնում չեմ ճանաչում, ու նզովում եմ խառնում ճանաչողին ու ասողին:

Նույնպես խաչի կրածները խոստովանում եմ Աստծու խաչ, և մահը իսկական էությամբ մահ չեմ ընդունում, կամ մարմնից բաժանում. այլ էությամբ միացած աստվածությանը և աստվածացած. Աստված եմ խոստովանում, որով մեռավ անմահը՝ բանական հոգին ավանդելով հորը:

Աստվածությունը հոգուց ու մարմնից չբաժանվեց, այլ անքակտելիորեն միավորվեց, ըստ որում հոգով դժոխքն էր ավերում ու մահը սպանում. մարմինը ջնջում էր քայքայումը որպես Աստված և Աստծու մարմին, բոլոր գերեզմանների մեջ ճառագայթներ էր արձակում, շատերին հարություն տալիս, գիտեր երկրի վրա սահմանված ժամանակը, շատ մեծ քանակով էր հարություն առնում և ոչ թե մենակաբար, ինչպես Հովնանը ձկանից, այլ դժոխքից մահակուլ հոգիների լրիվությամբ՝ սկսած Ադամից և գերեզմաններում հողացած շատ մարմիններով: Ելավ ձեռք չտված անլույծ կնիքի գերեզմանից, ինչպես Մարիամի արգանդից, և բարձրացավ մտավ կուսությամբ անձեղքելի երկինքը, որպես անբաց դռներով վերնատուն, որպեսզի հայտնի լինի, թե մարմնական էությունից վեր է: Քանի որ մարմնի էությունը մահկանացու, ոչնչացող ու մեղսալի է: Եթե ինքնին առանձնանա, մարմին առնել չի կարող անճանաչելի մնալով, այլ տերունականը [մարդեղությունը, մարդ լինելը] և տերը լրիվ ունեն ճշմարիտ մարդը՝ իր սահմանով, սակայն շողացած ու փայլատակած աստվածությամբ, որ ներգործում էր Քրիստոսի վայելուչ [մարմնական] մասի վրա, որը ձեռքերով շոշափեցին առաքյալների դասերը և տեսան երանելի աչքերով անկերպարանքը կերպավորված: Նույն մարմնով և Հոր փառքով գալու է դատելու ողջերին ու մեռածներին, նրա թագավորությունը վախճան չունի:

Հավատում եմ նույն Երրորդությունից ստեղծված չեղածներից բոլոր եղածներին, բարի ձևացրած Ադամին, որ ինքնագլուխ կամքով կատարած հանցանքով լուծվեց մահվան մեջ և միևնույն Արարչից վերստին նորոգվեց՝ մեկ միածնի նախախնամությամբ, Հոր և Հոգու կամքով:

Հավատում եմ բանականներիս ընդհանուր հարությանը Ադամից սկսած՝ ստեղծողի ու նորոգողի միևնույն կորությամբ:

Հավատում եմ հավուր դատաստանի արդար իրավունքին ըստ արժանվույն և հավիտենական կյանքի ու տանջանքի հատուցմանը:

Այս է մեր բոլոր ուղղափառների հավատի համառոտ խոստովանությունը... (էջ 238—241):

* * *

Իսկ նա, որ իր երկյուղածների կամքը կատարում է ու նրանց աղոթքները լսում, անտես չարեց նրանց բարի խնդրվածքը: Մեսրոպին երևաց մի հզոր ձեռքի թաթ, որ վեմի վրա գրում էր: Եվ նա ծանոթանալով բոլոր հանգամանքներին՝ վեր կացավ ստեղծեց գիրը:

Եվ այնուհետև հավաքում են բազմաթիվ մանուկների և ուսուցանում մեր ամբողջ երկրին, իսկ մատաղատի, լավ սովորող, փափկաձայն և երկարաշունչ մանուկներին բաժանում են երկու խմբի, և հիմնում են ասորերեն ու հունարեն լեզվով դպրոցներ: Այդ մանուկները սովորեցին բոլոր գիտությունները՝ քրիստոնեական ու հեթանոսական և դարձան ճշգրիտ թարգմանիչներ: Թարգմանեցին Հին ու Նոր Կտակարանների բոլոր գրքերը՝ սկսելով Սողոմոնի առակներից, ամենը ամբողջացրին:

Սրանք ոչ միայն թարգմանիչներ էին, այլև վարդապետներ և ուսուցիչներ, նաև ապագան կանխագուշակող մարգարեներ:

Սրանք լցված էին Սուրբ Հոգով, խոսում էին ապգերի լեզուներով, թարգմանողներ էին բազմաթիվ ապգերի [լեզուներից], խրթին խոսքերի բացահայտողներ էին, խորիմաստ խոսքերի պարզ մեկնիչներ:

Սրանք եկեղեցու սյուներ էին ու նրա զավակների համար ամրափակ պարիսպներ, լուսատու աշտանակներ էին ու վառված ջահեր, որոնք իրենց լույսը համընդհանուր կերպով ծավալում էին աշխարհի ոլորտները:

Սրանք կենաց խոսքի աստվածաբաններ էին ու պապակված անձանց արբուցիչներ, բանսարկուի ջերմ տապի զովացուցիչներ էին և ջերմացնողներ հավատի մեջ սառածներին:

Սրանք ճռվողող ծիծառներ էին, քաղցրախոս տատրակներ ու ողջախոհ մարդիկ, սրբությունը սիրողներ և աղտեղության անարգիչներ: Սրանք մանուկների դաստիարակներ էին և երիտասարդների համար բարի օրինակներ, կույսերի համար զարդարանք էին, ամուսնացածների համար օրենք, ծերերի սփոփիչներ, տկարների մխիթարիչներ, ընկածներին բարձրացնողներ, մեղք գործածներին ուղղողներ, ծույլերին խթանողներ ու դրդիչներ, եռանդուններին դեպի գործ մղողներ, ուսում սիրողներ ու ատողների հանդիմանիչներ:

Սրանց վարդապետներն և ուսուցիչներն էին Սուրբ Սահակն ու Մեսրոպը» (էջ 35—36):

*
* *

Այն ժամանակ Վանական կոչված մեծ վարդապետը մի շատ բարձր քարի գագաթին իր ձեռքով իր համար քարայր էր փորել, որ գտնվում է Լորուտ կոչված գյուղի հանդեպ, Տավուշ բերդի հարավային կողմից: Այդ այրում շինել էր մի փոքրիկ եկեղեցի ու այնտեղ գաղտնի դադար էր առել, երբ Ջալալադին սուլթանի ավազակների կողմից Երգեվանքի բերդի հանդեպ գտնվող նրա առաջին վանքը ավերվեց: Այնտեղ հավաքված ու պետեղված էին բազմաթիվ գրքեր, որովհետև այդ մարդը շատ ուսումնասեր ու մանավանդ աստվածասեր էր: Շատերը գալիս էին նրա մոտ ու նրանից սովորում էին վարդապետական ուսումը: Երբ մարդիկ շատացան, նա հարկադրված եղավ իջնել քարայրից ու ժայռի ստորոտում շինեց եկեղեցի, սենյակներ և այնտեղ տեղակայվեց (էջ 176):

*
* *

Իսկ նրանք ընդհանրապես մորեխի բազմությամբ սփռված էին դաշտերը, լեռները, ձորերը, կամ իբրև անձրև հորդությամբ տեղացել էին երկրի վրա: Այնուհետև այնտեղ պետք էր տեսնել տրտմագին աղետներ և ողբերի արժանի սուգ: Որովհետև հողը չէր թաքցնում մտածներին, ոչ էլ քարերն ու անտառներն էին պահում ապաստանածներին, ոչ բերդերի շատ ամուր շինվածքները, ոչ նեղ ու խոր ձորերը, այլ ամենը դուրս էին նետում թաքնվածներին: Լքվում էր արանց արին, աղեղնավորների կորովի ձեռքերը թուլանում էին, թաքցնում էին սրեր ունեցողները, որպեսզի թշնամիները չտեսնեն ու անողորմ կերպով չսպանեն: Թշնամիների ձայները հալում էին նրանց, կապարճների չխկոցները ահաբեկում էին նրանց բոլորին: Յուրաքանչյուր աչք իր օրհասը եկած էր տեսնում, և իրենց սրտերը ներսում մեռնում էին: Մանուկները սրի ահից փախչում էին ծնողների մոտ, իսկ ծնողները նրանց հետ վախից ընկնում էին նախքան թշնամիների վար գցելը:

Այնտեղ պետք էր տեսնել, թե ինչպես սրերը անխնա կոտորում են տղամարդկանց ու կանանց, երիտասարդներին ու մանուկներին, ծերերին ու պառավներին, եպիսկոպոսներին ու քահանաներին, սարկավագներին ու դպիրներին: Ծծկեր մանուկները քարի էին խփվում, և գեղեցիկ կույսերը խառնակվում ու գերվում էին (էջ 172—173):

*
* *

Ամբողջ երկիրը լցվեց մեռելների դիակներով, և չկար մեկը, որ թաղեր դրանք: Սիրելիների աչքերի արտասուքը սպառվել էր, և չկար մեկը, որ անօրենների ահից ընկածներին ողբար:

Սուգ հագավ եկեղեցին, և նրա գեղեցկության պայծառությունը վերացավ. խափանվեցին նրա արարողությունները, և վերացան նրա պատարագները նրա սեղանից. լռեցին նրա ժամասացությունները, և նրա մեջ այլևս չէր լսվում երգերի ձայնը: Ինչպես խավարով պատած էր ամբողջ երկիրը, և մարդիկ ավելի գիշերն էին սիրում, քան ցերեկը: Երկիրը թափուր դարձավ իր բնակիչներից, իսկ նրա վրա օտար որդիներ էին շրջում: Ինչք ու ստացվածք հափշտակվեցին, իսկ նրանց ագահությունը երբեք չհագեցավ: Խուզարկվեցին բոլոր տներն ու սենյակները, և ոչինչ չմնաց, որ չգրավեցին: Այստեղ-այնտեղ շրջում էին այծյամների արագությամբ ու կեղեքում, պատառոտում էին իբրև գայլեր: Նրանց երիվարները վազքի մեջ չէին հոգնում, և նրանք ավար հավաքելով չէին ձանձրանում (էջ 173—174):

*
* *

Հայոց յոթ հարյուր մեկ թվականին (1252 թ.) սարսափելի մորեխ եկավ, այնքան, որ երբ վեր էին բարձրանում, ստվեր էր առաջանում, և արևի լույսը նվազ էր երևում: Եկավ Պարսկաստանի կողմերից, կերավ մեր հայոց աշխարհը՝ ոչ միայն կանաչ բույսերը, այլև երկրի հողը, և աղբերն էր լափում, մտնում էր տները երդիկներից, դռներից, եթե բաց էին լինում: Երկիրը սարսափի մատնվեց, և հացի սղություն եղավ: Երբ հասավ ձմեռը, գետինը ձու դրեց և ոչնչացավ: Հողը հոտից նեխեց: Երբ յոթ հարյուր երկու թվականի (1253 թ.) գարունը եկավ, հողը բուսցրեց մորեխի ձագեր այնպիսի սարսափելի թանձրությամբ, մինչև իսկ ծածկվեցին երկրի հողն ու քարերը: Երեկոյան ժամերին բլրաձև կուտակվում էին միմյանց վրա: Սկսեց ուտել կանաչն ու հողը:

Մարդիկ մտածեցին թողնել իրենց բնակությունները և գնալ օտարություն, որտեղ որ ուտելիք գտնեն: Եվ քանի որ նախապես կերել էր շրջակա երկրները՝ սկսած Սպանիայից, Ասիայից, Պարսկաստանից, Միջագետքից, այդ պատճառով չգիտեին ինչ անեն: Սկսեցին այնուհետև ապավինել ամենակարող ձեռքին ու հզոր բազուկին, որ ոչնչությունից գոյացրեց արարածներին և իր

ողորմությամբ միշտ խնամում է սրանց, որի համար և անհնարինները հնարավոր են: Արտասուքներով և ուխտերով նրանից հայցում էին, որ պատուհասը վերացնի երկրից:

Իսկ ողորմած Աստված ծանր վերքերին արագ սպեղանի տվեց, և «ով հարվածեց, նա էլ բժշկեց»: Որովհետև խատուտիկ փոքր թռչունների մի բազմություն եկավ, որին շատության համար սովորաբար տարմ են ասում, և կարգով սկսեց եկրերից, համահավասար կերավ սպառեց մորեխի ամբողջ բազմությունը, այնպես որ մի հատ էլ չէր գտնվում: Եվ այնտեղ պետք էր տեսնել, թե ինչպես ամեն բերան Աստծու գովությամբ էր լբաղված, ամեն միտք հիացման մեջ էր: Բայց այն լրույցը, որ վերաբերում է այս թռչուններին, արժանի է սքանչացման (էջ 258—259):



Ա. Խ. ԹՈՐԱՄԱՆՅԱՆ

ՄՈԼԴԱՎԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ*

ՎԻՄԱԿԱՆ ՎԿԱՅԱԳՐԵՐ ԺԷ—ԺԹ ԴԴ. ՄՈԼԴԱՎԻԱՅԻ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ավելորդ չէ մի անգամ ևս նշել, որ Մոլդավիան եղել է հնագույն հայ գաղթօջախներից մեկը, որտեղ դարեր շարունակ մոլդավ ժողովուրդը հյուրընկալել է գաղթական հայերին, ստեղծելով նրանց կյանքի գոյատևման և աշխատանքի համար ամենայն բարենպաստ պայմաններ: Իրենց հերթին երախտապարտ հայերը մեծ ջանք են թափել իրենց երկրորդ հայրենիքի ծաղկման համար: Այդ են վկայում բավմաթիվ բնակելի և պաշտամունքային կառույցները, հայերի մասնակցությունը առևտրի և արհեստների և այլ բնագավառների զարգացման գործում: Պակաս դեր չեն խաղացել գաղթօջախի Հայ Եկեղեցին, նրա բարձրաստիճան և շարքային ծառայողները: Թե ովքեր են եղել նրանք, այդ մասին կարող են մեզ տեղեկություններ տալ պատմական աղբյուրները, արխիվային փաստաթղթերը և այլն: Այդպիսի տեղեկություններ, ինչքան էլ դրանք համեստ լինեն, ունեն որոշ նշանակություն հայ գաղութի համար մասնավորապես, հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու պատմության համար ընդհանրապես: Այդ տեսակետից ստույգ տեղեկություններ կարելի է ստանալ Մոլդավիայի վիմական արձանագրություններից, որտեղ հիշատակվում են գաղթօջախում Հայ Եկեղեցու բարձրաստիճան և շարքային ներկայացուցիչների անունները, պաշտոնները, ծննդյան վայրերը և այլն: Կարևոր նշանակություն ունեն հատկապես այն վիմական արձանագրությունները, որոնք վերաբերում են Մոլդավիայում ապրած երևելի կամ հասարակ մարդկանց՝ Հայաստանում և Մոլդավիայում հոգևոր ծառայողների հարազատներին:

Այսպես, մեկ հետաքրքրող հնագույն հայկական արձանագրություններից մեկը գտնվում է անցյալում հայաշատ Աքքերմանի (Բելգորոդ-Դնեստրովսկի) քաղաքի հայկական եկեղեցու հարավ-արևելյան ավանդատան մեջ: Ուղղանկյուն (84×49×10 սմ) մուգ մոխրագույն մարմարե սալի վրա փորագրված այդ արձանագրությունը վկայում է, որ 1699 թ. «...վարդ(ա)պ(ե)տ ծայր...» Աթանասի նպաստությամբ քաղաքի ժողովրդի և վաճառականների կողմից «...շինեցաք զսուրբ Օգսենտ եկ(ե)ղ(ե)ցիս...» (նկ. 4):

Համաձայն մեր ուսումնասիրությունների, նշված թվականին ոչ թե ամբողջությամբ շինվել է եկեղեցին, այլ նրա արևելյան խորանին ավելացվել են ներկա քառակուսի թաղածածկ ավանդատները[1]:

Եվս մի կարևոր հիշատակություն կա պահպանված Մոլդավիայի Հայ Եկեղեցու հոգևոր բարձրաստիճան մի ներկայացուցչի մասին: Դա մի արձանագրություն է՝ փորագրված մեր կողմից պեղված շքեղ զարդարանքով սպիտակ մարմարե մի գերեզմանաքարի վրա, որը գտնվում է Գրիգորիոպոլում, այժմ գոյություն չունեցող Ս. Աստվածածին եկեղեցու բակում (նկ. 5): Ահա արձանագրությունը՝

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1983 թ. № Ա-ից:

[1] Այս մասին ավելի մանրամասն տես մեր հոդվածը՝ «О некоторых армянских архитектурных памятниках Белгород—Днестровска», «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1970, № 2 (49), էջ 291:

Նկ. 5. Գրիգորիոպոլ. 1784 թ. արձանագրությունը

ՏԷՐ

ԱՅՍ ՀՈՂԱՅԻՆ ԵՒ ՎԻՄԱՓՅԱՐԿՍ ՇԻՐՄԻ
Է ՍՏԵՓԱՆՆՈՍ ԾԵՐՈՒՆԻԱՅԼ Վ (ԱՐԴ) Ա (Պ) Ե) ՏԻ
ՈՐ ՄԻԱԲԱՆ ԷՐ ԼՈՒՍ (Ա) ՁԵԽ ԳԱՀԻՆ ՄԵԾԻ
ՔՍԱԿԵՐՏ ՍԲ ԱԹՈՌՈՅՆ ԷՋՄԻ (Ա) ԾՆԻ
ՈՐՈՒՄ ԵՒ ԷՐ ԱՇԽԱՏԱՒՈՐ ԵՒ ՊԻՏԱՆԻ

ԱՐՀԻՊԱՆԾ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈԼՈՎ ՅԱՐԳԻ
ԲՆԻԿ ՏԵՂԵ (Ա) Ի ՋՈՒՂԱԵՑԻ ԵՒ ՄԵԾ ԱՋՔԻ
ՈՐՈՑ ԱՆՈՒՆ ԲԱՐԱՔԵ (Ա) ՁԵՆՔ ՎԵՐԱՁՅՆԻ
ՁՈՐ ՂՈՒԿ (Ա) ՍՈՒ ՍՐԲ (Ա) ՁԱՆ ՍԲ ՎԵՀԱՊԵՏԻ
ԷՐ ԱՌԱՔԵ (Ա) ԼԻ ՆՈՒԻՐԱԿ ԱՅՍԸՄ ԵՐԿՐԻ
ՈՐ ԸՍԿՍԵԼ՝ Ի ԲՈՒՂՏԱՆ (Ա) Ց ԱՍՏ ՀԱՍԱՆԻ
ԱՅԼ ՎԻՃԱԿ (Ա) Ց ԳՈՐԾՆ ՄՆԱՑԵ (Ա) Լ ԱՌ
Վ (Ա) ԽՃՆԻ
Ի ՄԻ ՀԱՋԱՐԵԻԵՐԿԵՐԻԻՐ ՄԵՐ ԷՍ ԹՈՒԻ
ԵՐԵՍՆԵՐԵՔ ԵՒ ԱՒԵԼԻ... ՀՈՒՆՎԱՐԻ
ԱՐԴ ՈՐ ԱՍԷ... ԱԾ ՈՂՈՐՄԵՑԻ
Յօրն վերջին ի Քրիստոսէ վնոյն ընկալցի
1784:

Արձանագրության ութերորդ տողը, սկսած ներքևից, վկայում է, որ եպիսկոպոս Ստեփանոսը եկել է «...Բուղտան (ա) ց» երկրից, այսինքն՝ պատմական Մոլդավիայից: Ըստ այսմ, հավանական ենք համարում, որ Ստեփանոս վարդապետը ծառայել է Դնեստր-Պրուտ միջագետքի տարածքի վրա գտնվող մի որևէ հայաբնակ գաղթօջախում (Բելգորոդ-Դնեստրովսկի, Կիլիա, Իզմայիլ և այլն), որը թուրքական տիրապետությանը ենթակա մի շրջան էր: Վարդապետի գերեզմանաքարի առկայությունը Ս. Աստվածածին եկեղեցու բակում բացատրվում է նրանով, որ 1792 թ., Գրիգորիոպոլի հիմնադրումից հետո, նշված և այլ քաղաքներից մեծ թվով հայեր են տեղափոխվում այս նորաստեղծ հայկական քաղաքը՝ ազատագրվելով թուրքական գերիշխանությունից: Այս առիթով է, որ հայերը տեղափոխում են իրենց համար նվիրական առարկաները, եկեղեցական իրերը, հարապատների և Հայ Եկեղեցու բարձրաստիճան կամ շարքային ներկայացուցիչների գերեզմանաքարերը և այլն: Նույն առիթով Գրիգորիոպոլի գերեզմանոց են տեղափոխվել Մոլդավիայի տարբեր հայաբնակ գաղթօջախների 1713, 1721, 1766, 1781, 1788 թվականները կրող գերեզմանաքարերը:

Դրանց մեջ բավական հարուստ և հետաքրքրքական տեղեկություններ է պարունակում շքեղորեն զարդարված 1800 թվականի սպիտակ մարմարե մի տապանաքարի արձանագրությունը (նկ. 6):

Ահա այն՝

«ՏԱՊԱՆ ՀՌՉԱԿԱՒ ՈՐ ԱՌՆ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՈՐԴՒՈՑ
ՏԷՐ ԻՍԱՀԱԿ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԵՂԲՈՐ ԻՍԱՀԱԿԱՅ ՄԵԾ
ԱՆՈՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՁՄԻԽՌՆԻՈՅ ՍԱՍԱՐԵԱԼ
Ի ՁԱՐՄԷ ԳԵՂԱՄԱՑ ԵՒ ԴԱՒԹԱՑ ՊԵԿԻ ՄԵԾ Ի ԾՆԵԱԼ
ԻՇԽԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՈՅ Ե ԲՆԱԿԵԱԼ ՅԵՐԵԱՆ ՔԱՂԱՔ
ԱՊԱ Ի 1784 ԹՈՒԻՈՅ ՓՐԿՉԻՆ ԿԱՐԳԵԱԼ ԴԵՍՊԱՆԻ
ԱՐԱՐԱՏԵԱՆ ՀԱՅՈՑ Ի ԴՐԱՆ ԻԻՐՈՒՀԻՈՅ ԿԱՅԻ (ՍԵ)
ՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԵ ԵԿԱՏԱՐԻՆԷՐ Ի ԵՐԿՐՈՐԴԻ Վ (ԵՐԱ)
ՊԱՏՈՒԵՑԱՒ ՀԱՋԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ (ՈՒ)
ՊՕՏՊՕԼԳՈՎՆԻԿՈՒ Ե ՅՈՒՍԿ ՅԵՏՈՅ ԺՈՂՈ (ՎՐԴԻ)
Ի ՊԵՍԱՐԱԲԻՈՅ ՁԲԱՁՄՈՒԻԱՁԻՆ
Ի ԳՐԻԳՈՐԻՊՕԼ ԿԱՐԳԵՑԱՒ ՆԱԽԱԹՈ (Ռ) (ԴԱ)
ՏԱԽՈՐ ՀԱՅՈՑ ՅՐԱՎԱՐՏԱԿԱՒ ԿԱՅՍ (ԵՐԱԿԱՆ)
Ի ՀԱՍԱԿԻ ՎԱԹՍՈՒՆ Ե ՀԻՆԳ ԱՄԱՑ
ԿԱԼԵԱԼ ԶՎԱՂՃԱՆ ԿԵՆԱՑ ԱՍՏԻՆ
ՓՈՓԻ... Ի 1800 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4 ԻՆ:»



Նկ. 6. Գրիգորիոպոլ. 1800 թ. արձանագրությունը

Մոլդավիայի մի ուրիշ հայկական գաղթօջախում՝ Քիշնևում, հայկական գերեզմանոցում պահպանվել է 1828 թ. վախճանված Թովմաս Ագուլեցի վարդապետի հիշատակին կանգնեցված կրաքարե սալը: Թեև արձանագրությունը չի նշում հանգուցյալի վարդապետական աստիճանը, բայց դրա փոխարեն հիշատակում է. «...հայրն Ագուլեցի, որ ի տոհմէն Յոհ(ա)նճանի...»: Սալի վերևի մասում քանդակված է Հայ Եկեղեցու հոգևոր բարձրաստիճան անձնավորությանը հատուկ վեղարաձև գլխարկը, որի վրա պատկերված է խաչ: Բացի այդ, սալի վրա քանդակված է նաև վարդապետական կամ եկեղեցական

այլ բարձր իշխանություն խորհրդանշող գավազանը[2]:

1871 թվականն է կրում Քիշնևի հայկական եկեղեցու գավթի մեջ, այժմ անհետացած, բաց մոխրագույն մարմարյա ուղղանկյուն սալը (1,17×0,89×0,02 սմ), որի վրա կարելի է կարդալ հետևյալը. «Տ. Գէորգ արքեպիսկոպոսի Տէր Մկրտչեան երեւանցւոյ թեմական առաջնորդի վիճակիս եւ միաբանի սրբոյ Էջմիածնի...»: Հիշատակված թվականին արքեպիսկոպոսը 60 տարեկան էր[3]:

Բացի այս բերված օրինակներից, Մոլդավիայի հայկական գաղթօջախների վիմագրերում կարելի է հանդիպել ինչպես Մոլդավիայի, այնպես էլ Հայաստանի եկեղեցիներում ծառայած շարքային անունների: Այսպես, Բելգորոդ-Դնեստրովսկու հայկական եկեղեցու վերոհիշյալ արձանագրության մեջ հիշատակվում է տիրացու Կարապետի անունը, որի հիշատակին սալատախտակի վրա փորագրված է հավասարաթև խաչ: Նույն այս քաղաքի այժմ անհետացած մատուռ-աղբյուրի մուտքին կից գերեզմանաքարի վրա, որը, հավանական է, տեղափոխված է եղել այստեղ մի այլ վայրից, կարելի է կարդալ հետևյալ արձանագրությունը. «Երևանուի կեթոնեցի Յակոբի որդի տիացու Յովանէսին որ վոխեցաւ առ թվին Ռձ (1715)...»: Քաղաքի նույն եկեղեցու գավթում գտնվող մարմարյա մի սալի վրա, որը եկեղեցու արևելյան մասի հատակի գերեզմանաքարերից է, հանդիպեցինք հետևյալ արձանագրության. «Մկրտիչ այս կուարթ պատանին որդի քրոջ նուիրակին Էջմիածնի սուրբ աթոռին Տէր Դանիէլ արհի պետին Պայազիտցի ելով...»: Հիշատակված Մկրտիչը վախճանվել է 1798 թ.:

Քիշնևի հայկական գերեզմանոցում մինչև այժմ պահպանվել են մի շարք գերեզմանաքարեր, որոնց արձանագրությունների մեջ կարելի է կարդալ հավանաբար միայն Քիշնևի գաղութի հայկական եկեղեցու ծառայողների անուն-ազգանունները: Այդպիսիք են 1827 թ. վախճանված տիգրանակերտցի Անտոն ավագ քահանայի, 1852 թ.՝ Տեր Ավետիսյան քահանայի որդի Ավետիսի, 1878 թ.՝ Մարտիրոս Սարգսյանի Չափչաքյանցի գերեզմանաքարերը:

Մոլդավիայի հյուսիսային մասում, Ռիշկանի շրջանի Գորոդիշե հեռավոր գյուղի մոլդավական գերեզմանոցի եկեղեցու հյուսիսային պատին կից, մինչև այսօր պահպանվել է մի խաչարձան, որից երևում է, որ այն պատկանել է 1862 թ. վախճանված Ավետիս անունով մի հոգևորականի դուստր Վարդենիկին:

Այսպիսով, մենք հնարավորություն ունեցանք ոչ մեծ քանակությամբ պահպանված վիմագրական հուշարձանների օրինակով համոզվելու, որ Մոլդավիայի հայկական գաղթօջախները ԺԷ—ԺԹ դդ. ապրել են եկեղեցական կյանքի որոշ վերելք: Ոչ մի կասկած չկա, որ բերված տեղեկությունները, որոնց վրա կարելի է ավելացնել նաև լրացուցիչ այլ վավերագրերից քաղված նյութեր, կարևոր աղբյուր են հանդիսանում Մոլդավիայի հայկական գաղթօջախի և նրա եկեղեցու կյանքի ու գործունեության պատմության վերաբերյալ:

[2] **Ա. Թորամանյան**, Քիշնևի հայկական գաղութը և նրա մի քանի եկեղեցական արձանագրությունները, «Էջմիածին», ԺԱ, 1974, էջ 62, նկ. 6:

[3] Սալը ամրացված էր գավթի արևելյան պատի ներսի կողմից: Մենք այն լուսանկարել ենք մինչև նրա վնասվելը:



ՎԱՀԱՆ ՏԵՐ-ԱՌԱՔԵԼՅԱՆ
(Ծննդյան հարյուրամյակի առթիվ)

Թուրքմենչայի պայմանագրի համաձայն, 1828 թվականին, Արևելյան Հայաստանը ազատագրվելով պարսիկ խաների ատելի տիրապետությունից, միացվում է Ռուսաստանի կայսրությանը:

Ի կենսագործումն հիշյալ պայմանագրի, մոտ 45 հազար հայեր այդ տարիներին ներգաղթում են Հայաստան: Նրանց թվում Վայոց ձոր է ներգաղթում նաև, որբացած վիճակում, Առաքել Տեր-Աստվածատրյանը և իր քրոջ հետ բնակություն հաստատում նոր հիմնադրվող Մալիշկա գյուղում: Մի քանի տարի անց մահանում է գյուղի Տեր Սարգիս անունով քահանան: Նրա մահվանից հետո քահանա է ձեռնադրվում հոգևորականների շառավիղ Առաքել Տեր-Աստվածատրյանը, և Վայոց ձորի Մալիշկա գյուղում սկզբնավորվում է Տեր-Առաքելյան տոհմը:

Վահան Տեր-Առաքելյանը Տեր Խաչատուրի երրորդ որդին էր: Նա ծնվել է 1883 թվականի սեպտեմբերի 5-ին: Նախնական կրթությունն ստացել է իր հոր մոտ, գյուղի դպրոցում:

Տեր Խաչատուրը տեսնելով, որ իր որդին ունի արտակարգ ընդունակություն և ուսանելու անհագ ցանկություն, որոշում է իր մանչուկին փոխադրել Գևորգյան ճեմարան՝ ուսումը շարունակելու համար:

1896 թվականին տասներեքամյա գեղջուկ պատանին քահանա հոր ուղեկցությամբ գալիս է Էջմիածին: Ճեմարանում ընդունելության քննությունները հաջողությամբ հանձնելով, նա ընդունվում է դպրոցական բաժնի Ա դասարանը: Այս բաժնի վեց դասարանները փայլուն կերպով վերջացնելուց հետո, 1902 թ. ընդունվում է ճեմարանի բարձրագույն՝ լսարանական բաժինը, որտեղ երեք տարի ուսանելուց հետո, 1905 թվականին, 22 տարեկան հասակում, ավարտում է հայագիտության այն ժամանակվա բարձրագույն դպրոցը՝ Գևորգյան ճեմարանը:

Վայոց ձորեցի գեղջուկ մանչուկին բնությունն օժտել էր նաև հավվագյուտ մի շնորհով. նա հմայիչ ու գերող ձայն ուներ և երաժշտական նուրբ լսողություն: Ամենայն հավանականությամբ, առավելապես այս վերջին հանգամանքը ստիպում է Հայր Կոմիտասին ջերմ հոգատարություն ցուցաբերել և առանձնահատուկ ուշադրություն դարձնել սև աչք ու ունքով, գանգրահեր, բարձրահասակ, թխադեմ, գեղեցկատես և շնորհաշատ պատանու վրա՝ նրան հաղորդակից դարձնելով երգի ու երաժշտության դժվարին արվեստին, բացահայտելով դրա յուրահատուկ հմայքն ու ծանոթացնելով նրան կատարողական արվեստին, երաժշտական գիտության նրբություններին, նրա մեթոդներին, եղանակներին և այլն:

Այդ մասին ինքը Վահան Տեր-Առաքելյանը Կոմիտասի մասին գրած «Անհիշաչար մարդը» վերնագրով իր հուշերում ասում է. «Կոմիտասն առանձնապես գուրգուրում էր ձայնեղ և երաժշտասեր տղաներին: Վերջիններիս թվին էր պատկանում տողերիս գրողը»:

Պրպտող, համեստ, հեզահամբույր և ուսման ծարավի աշակերտը, ինչպես որ պետք էր ենթադրել, շուտով դառնում է իր ուսուցչի արժանավոր սանը, նրա հանճարի երկրպագուն ու հետագայում կոմիտասյան երգի ակտիվ պրոպագանդիստը և մեկնաբանը: Շատ ժամանակ չանցած Վահանը Կոմիտաս-

սի երգչախմբի անգերազանցելի մեներգիչն է դառնում:

Անմահ Կոմիտասի արժանավոր սաներից, նրա երգչախմբի անդամ, երաժշտագետ, ճեմարանավարտ հանգուցյալ Մելքոն Քրիշչյանը հետևյալ կերպ է բնութագրում Վահանին Կոմիտասի մասին գրած իր «Անմար կանթեղ» հուշերում. «...Վահանի մասին թույլ եմ տալիս ինձ այսպես ասել. եթե ես Վահանին ամբողջ հոգով սիրած չլինեի, անպատճառ նրան կնախանձեի: Ինչպե՞ս կարող էր վարպետը նրան ջերմորեն չսիրել, քանի որ Վահանին բոլորն էին սիրում իր հրաշալի ձայնի և շենշող բնավորության համար: Վահանն էր, որ մեկ փրկում էր Էջմիածնական ճեմարանական հանդեսներում, Տփխիսի հայտնի համերգում, քանի որ վարպետը Վահանին, իբրև մեներգչի, մոտավոր իսկ չափով փոխարինող չուներ: Նա սյունն էր և առհասարակ Էջմիածնի փայլուն աստղը»:

Մի այլ տեղ նույն հուշերի հեղինակը գրում է. «Վահանի մասին դու մի մտածիր, հավանորեն նա Մոսկվա կգնա»: Այսպես է ասել մի կրույցի ժամանակ Կոմիտասը Մ. Քրիշչյանին:

Վահան Տեր-Առաքելյանը 1905 թվականի հայտնի կոմիտասյան համերգում հանդես է եկել մի շարք փայլուն մեներգերով՝ «Հայր մեր», «Ով կարմանալի», «Մոկաց Միրվա», «Ցնծա, կարթնիր», «Ալելուիա», «Սուրբ-Սուրբ», «Սև մութ ամպեր» և այլն:

Սակայն երգչի ամենասիրած երգը և նրա կատարողական արվեստի գագաթնակետն է եղել «Անտունին»: Երիտասարդ երգիչն այնպիսի խորը, հուզումնալից զգացմունքով է հաղորդել դահիճին պապենական օջախը կորցրած, անհանգրվան, պանդուխտ հայի կսկիծով լեցուն այդ ողբը, որ համընդհանուր սարսուռ է ազդել դահիճին:

Վահան Տեր-Առաքելյանը Կոմիտաս վարդապետի հետ (1908 թ.)

Արժանահիշատակ այդ համերգից հետո, Վահանին տասնյակ ու տասնյակ ողջունողների մեջ առաջինն էին Վրթանես Փափազյանն ու Հովհաննես Թումանյանը: Վերջինս Կոմիտասի հետ ողջագուրվելուց հետո, դառնում է Վահանին՝ ձեռքը դնելով նրա ուսին. «Հրաշալի է քո ձայնը, տղաս, հրաշալի, կոմիտասյան հայ երգը արժանի կատարող ունի»: Հիացմունքի այս արտահայտությամբ է առաջին անգամ դիմում մեծ բանաստեղծը շնորհաշատ երգչին:

1905 թվականի Կոմիտասի հանրահայտ համերգը նոր, համընդհանուր համբավ է բերում Վահանին, և որպես երգիչ նա արդեն դուրս է գալիս ճեմարանյան սահմաններից՝ դառնալով համազգային:

Երգչախմբի և հատկապես մեներգչի մա-

սին ժամանակի մամուլը դրվատանքի շատ էջեր է նվիրել ու վետեղել նրա լուսանկարը:

Վահանը Անդրկովկասի կանապան խոշոր քաղաքներում երգչախմբի հետ, Կոմիտասի ղեկավարությամբ, որպես մեներգիչ, մասնակցել է բազմաթիվ համերգների:

Ավելի ու ավելի մոտիկից ճանաչելով իր շնորհալի, խոստումնալից աշակերտին՝ Կոմիտասը նրա մեջ տեսնում է ապագա խոշոր երաժշտին: Այդ պատճառով, ճեմարանն ավարտելուց հետո, նրան ուղարկում է Պետերբուրգի կոնսերվատորիան ուսանելու: Այստեղ Վահանը, որպես ապատ ունկնդիր, մասնակցում է նաև Պետերբուրգի համալսարանի բանասիրական ֆակուլտետի պարապմունքներին:

Կոնսերվատորիայում սովորելու տարիներին, նա միաժամանակ երգում է Մարիինյան (այժմ՝ Կիրովի անվան) թատրոնի երգչախմբում և Պետերբուրգի հայկական եկեղեցում:

Վահան Տեր-Առաքելյանի կատարողական արվեստի երկրպագուն է եղել նաև Եղիշե Չարենցը: Ահա թե ինչ է գրում իր հուշերի մեջ երաժշտագետ Աղավնի Մեսրոպյանը. «...Մի երեկո... 1929 թվականի գարնանը, կոմիտասյան ծրագրով մի քանի համերգներ տալու համար Թիֆլիսի բնակարանիս մեջ, Կոմիտասի էջմիածնական հայտնի սան Վահան Տեր-Առաքելյանը, նրա աշակերտուհի Արփիկ Մելիք-Մուշկամբարյանը ու ես, մեր վերջին փորձը կկատարեինք: ...Աննկատելիորեն ներս մտավ մեր Չարենցը և առաջին րոպեից զգալով կոմիտասյան մոտիվներն ու շունչը, լուռ ու մունջ, առանց նույնիսկ բարևելու գլխի թեթև շարժումով, մատների ծայրի վրա անցավ ու նստեց անկյունի բազմոցի վրա:

Կոմիտասյան եղանակներն սկսեցին կենդանանալ Վահան Տեր-Առաքելյանի քաղցր ձայնի միահյուսվող տենորի ու բարիտոնի մեջ, պարզ ու խորունկ հուզումների ալիքներով... հայտագրի առաջին մասի ավարտումից հետո, Չարենցը, ոգևորված, մոտեցավ մեզ ու առանձին-առանձին բարևելուց հետո, դարձավ Վահանին ու ասաց. «Իզուր են ասում, որ քսաներորդ դարը հրաշքներ չի ճանաչում... ահա ձեզ երկու հրաշք, առաջինը կոմիտասյան երգերի Ձեր կատարումը ...իսկ երկրորդը՝ Ձեր կատարումը լսելու այս անակնկալ երջանկությունս»:

Վահան Տեր-Առաքելյանը Կոմիտասի հետ և առանձին 1909 թվականին ձայնագրվել է Ալեքսանդրապոլում: Այդ ձայնագրություններից միայն 3—4 ձայնապնակ պահպանվում է ՀՍՍՀ ռադիոկոմիտեի ձայնադարանում:

Ի դեպ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր Ռուբեն Զարյանը իր «Հուշապատում» գրքի երկրորդ հատորում, Մարտիրոս Սարյանի մասին գրած հուշերում, Տեր-Առաքելյանի մասին հետևյալ հետաքրքիր ու սրտառուչ դեպքի մասին է պատմում. «Եկավ Սիրավյանը, որ մի երկու օր չէր երևացել: Ասաց, թե մի փոքր առաջ ռադիոյով լսել է Կոմիտասի և Վահան Տեր-Առաքելյանի միատեղ երգն ու հիացել»: Եվ հետո՝

«Ես Սարյանին հարցրի, թե Տեր-Առաքելյանին ճանաչո՞ւմ էր:

— Ինչպես չէ:- Այնիվ մարդ էր, մաքուր, բյուրեղյա: Շատ եմ լսել նրա երգը:

Հարցրի, թե չի՞ նկարել:

— Չէ, դժբախտաբար չեմ նկարել, ի՞նչ իմանայի, որ այդպես դժբախտ վերջ պետք է ունենա, թե չէ անպայման կնկարեի: Թող հիշատակ մնար, գոնե մեկ-մեկ կնայեի, կհիշեի»:

Այնուհետև հուշերի հեղինակը շարունակում է.

«Պատմեցի, թե ինչպես համաշխարհային առաջին պատերազմի ժամանակ ռուսական բանակի սպա Տեր-Առաքելյանը գերի է ընկնում թուրքերի ձեռքը: Երեք ասկյարի հանձնարարում են տանել դաշտ ու գնդակահարել... Երբ տեղ են հասնում, ասկյարներից մեկը Տեր-Առաքելյանին հարցնում է, թե սեռնելուց առաջ ի՞նչ խնդրանք ունի: Նա խնդրում է թույլ տալ իրեն մի երգ երգել: Թույլ են տալիս: Մեջքով դեպի վինվորները, երեսը դեպի դաշտերը, ծառերը, ծաղիկները, սարերն ու ձորերը, Տեր-Առաքելյանը երգում է «Դլե յամանը»: Երբ վերջացնում է, վինվորներից մեկը, որ գլխավորն է լինում, ասում է. «Գնա՛, ախպեր ջան, կյանքդ քեզ հալալ...»: Ու այդպես Վահան Տեր-Առաքելյանը փրկվում է:

Վահան Տեր-Առաքելյանին չի հաջողվում ավարտել կոնսերվատորիան և համալսարանը. նրան 1907 թ. զորակոչում են բանակ:

Առաջին համաշխարհային պատերազմի առաջին օրերից Տեր-Առաքելյանը նորից զորակոչվում է, այս անգամ գործող բանակ, և կռվում է սկզբից ավստրո-գերմանական ռազմաճակատում:

Այստեղ, Գալիցիայում ու Կարպատներում, Բելոստոկյան 50-րդ գնդում ցուցաբերած բազմաթիվ սխրագործությունների և անասելի քաջագործությունների համար նա պարգևատրվել է ցարական Ռուսաստանի այն ժամանակվա բոլոր շքանշաններով:

1915 թվականի հաղթություն տարած մարտերից մեկի ժամանակ Վահանը վիրավորվում է ոտքից ու ձեռքից: Ապաքինվելուց հետո նա վերադառնում է զորամաս: Քաջ ու

անվեհեր սպային առաջարկում են ծառայության անցնել կայսերական հատուկ կորագնդում, սակայն նա շնորհակալություն հայտնելով հրաժարվում է և, առաջնորդվելով հայրենասիրական բուռն, անդիմադրելի ցանկությամբ, խնդրում է հրամանատարությանը իրեն փոխադրել թուրքական ռազմաճակատ. «Նրանք մեր ժողովրդի թշնամիներն են, ես կուզենայի չափվել հատկապես դրանց հետ», ասում է Վահանը: Նրա խնդրանքը չի մերժվում, և նույն թվականի մայիսից կռվում է թուրքերի դեմ, կովկասյան ռազմաճակատում:

Իր հուշերում գնդապետ Ա. Մելիք-Փարսադանյանը գրում է. «Թուրքիայի կողմից Ղարսը գրավելուց երեք օր առաջ, ինձ ծառայության գործերով անհրաժեշտ եղավ լինել կորքերի շտաբում, որը տեղավորված էր առանձին շենքում. այն գտնվում էր բերդի ամրոցներից մեկի վրա: Այնտեղ ես ծանոթացա բերդի շտաբի պետ, գնդապետ Վահան Տեր-Առաքելյանի հետ, նրա կրծքին նկատելով Գեորգյան սպիտակ շքանշանը՝ նույն բոպեին գլխի ընկա, որ ես գործ ունեմ հերոս սպայի հետ, որի ազգանունը ինչ-որ ժամանակ կարդացել եմ ռազմական գործողությունների հաղորդագրություններում, և այժմ անմիջապես հիշեցի:

Խորը հարգանքի ու հիացմունքի զգացումով եմ ես հիշում Վահան Տեր-Առաքելյանին, որի մեջ համեստությունը զուգորդված էր համարձակության, հոգեկան փափկությունը՝ իսկական արիության հետ: Շրջապատի նկատմամբ անպարսավ ազնվությունը, վարվելակերպի պարզությունը, անկեղծությունը և դատողությունների սկզբունքայնությունը նրա համար ստեղծել էին համընդհանուր սեր ու հարգանք...»:

Բանակից զորացրվելուց հետո, Վահան Տեր-Առաքելյանը զբաղվել է երաժշտությամբ, մանկավարժությամբ և թարգմանչական գործերով:

Քսանական թվականներից հետո նա երգչուհիներ Հայկանուշ Դանիելյանի և Մուշկամբարյանի հետ Անդրկովկասի մի շարք քաղաքներում տվել է վանական համերգներ, որոնց աֆիշներից մի քանիսը գտնվում են ՀՍՍՀ գրականության և արվեստի թանգարանում:

Հոկտեմբերյան մեծ հեղափոխության 10-րդ տարեդարձի առթիվ, 1927 թվականին, Վահանը, Սպ. Մելիքյանի և մի քանի ուրիշ անվանի երաժիշտների հետ, մեկնում է Մոսկվա հոբելյանական համերգների, որոնք մեծ հաջողություն են ունեցել: Դրանց վերաբերյալ ժամանակին գրվել է մոսկովյան, երևանյան և Թբիլիսիի պարբերական մամուլում: Այդ մասին հիշատակվում է նաև Սպ. Մելիքյանին հասցեագրված Վահան Տեր-Առաքելյանի 21 դեկտեմբերի 1927 թվակիր նամակում, որը հրապարակվել է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի կողմից 1964 թ. հրատարակված «Սպիրիդոն Մելիքյան» խորագրով գրքում:

Վահան Տեր-Առաքելյանը ճանաչված, ըստ արժանվույն գնահատված ու սիրված երգիչ, բազմափորձ, անվախ ու անձնուրաց զորական լինելուց բացի, նաև տաղանդավոր թարգմանիչ էր, շնորհալի արձակագիր ու բանաստեղծ: Նա ռուսերենից հայերեն է թարգմանել Բորիս Գորբատովի «Բջիջը», Իոհանես Բեխերի «Լյուլիտ կամ միակ արդարացի պատերազմը», Դ. Մ. Ֆուրմանովի «Խռովությունը», Բաղաևի «Բոլշևիկները պետական դումայում» վեպերը և այլն:

Վահանի գրչին են պատկանում 60-ից ավելի գործեր, որոնք թարգմանված են ռուսական և արևմտաեվրոպական կլասիկներից: Դրանց մեջ ուշագրավ է հատկապես Լև Տոլստոյի «Աննա Կարենինա» վեպի անվուգական թարգմանությունը, որը վերահրատարակվել է մի քանի անգամ և այժմ էլ պահպանում է իր թարմությունն ու բուրմունքը: Նույն ուժով ու վարպետությամբ է թարգմանված Յարոսլավ Հաշեկի «Քաջ վինվոր Շվեյկի արկածները», Բելլա Իլեշի «Տիսան բոցերի մեջ», Յասենսկու «Ես այրում եմ Պարիզը» գրքերը և այլն:

Նա թարգմանել է նաև մի շարք բանաստեղծություններ Պուշկինից՝ «Գյուղը», «Մարգարե», «Խարդավանք», «Կյանքի սայլը», «Փառքի տենչ», «Սիբիր դեկաբրիստներին», «Անչար» և այլն:

Բացի դրանցից Տեր-Առաքելյանը թարգմանություններ է կատարել նաև Վ. Մայակովսկուց և Եսենինից:

Տեր-Առաքելյանը հեղինակ է «Գրավ», «Դեպի նոր կյանք», «Կարմիր դրոշ», «Նեռի ծնունդը», «Անմահ կայծը», «Կաթնաղբյուր», «Թալանի վանքը» և մի քանի այլ պատմվածքների, որոնք լույս են տեսել տարբեր ժամանակներում և կարդացվում են մեկ շընչով:

Հ. Բաբաջանյանը, բնութագրելով Վահան Տեր-Առաքելյանի չափածո գործերը, մասնավորապես գրել է. «...Համերգից հետո Թումանյանը Կոմիտասին ու Վահանին իր տունը տարավ»: Շարունակելով իր միտքը՝ Բաբաջանյանը նշում է. «Թումանյանը Վահանին գնահատեց ոչ միայն որպես տաղանդավոր երգչի, այլև հիացավ նրա բանաստեղծական շնորհքով»:

Ես մի չոր ծառ էի,
Դուն գարնան արև,
Քո սիրով ծաղկեցավ,
Իմ ճյուղն ու տերև:

Հոդվածագիրը այնուհետև շարունակում է. «Կոմիտասի շրթներից լսելով Վահանի այս քառատողը՝ Թումանյանը բացականչել է.

— Ի՞նչ գեղեցիկ համեմատություն, ի՞նչ խորություն ու պարզություն, ես մեծ սիրով իմ անունը կդնեի այդ տողերի տակ»:

Վահանը միաժամանակ ջերմ հայրենասեր էր, ակտիվ հասարակական գործիչ և վայելում էր Հայաստանի ու թիֆլիսաբնակ հայ և այլ ազգի մտավորականության սերն ու հարգանքը: Նա ստեղծագործական ու ընկերական մտերմիկ կապերի մեջ է եղել Եղիշե Թադևոսյանի, Փ. Թերլեմեզյանի, Ս. Բարխուդարյանի, Ե. Չուփուռյանի, Ռոմ. Մելիքյանի, Մարտին Մալմանյանի, Վռ. Կոստանյանի, Գ. Լևոնյանի, Վահրամ և Վրթանես Փափազյանների, Մ. Սարյանի, Մ. Աղայանի, Շարա Տալյանի, Հայկանուշ Դանիելյանի, Սպ. Մելիքյանի, Նիկողայոս և Արմեն Տիգրանյանների, Նար-Դոսի, Հակոբ Հակոբյանի, Ե. Չարենցի և այլ մտավորականների հետ:

Նա հանդիպումներ է ունեցել Ավ. Իսահակյանի հետ, այդ մասին գրել է հուշեր, որոնք տպագրվել են մամուլում: Դրանց բնագրերը նույնպես գտնվում են ՀՍՍՀ գրականության և արվեստի թանգարանում:

1941 թվականին, երկարատև հիվանդությունից հետո, Վահան Տեր-Առաքելյանը իր մահկանացուն կնքեց Ռուսաստանի Ուխտա քաղաքում:

Վահան Տեր-Առաքելյանը իր մշակութային և հայրենանվեր գործունեությամբ կարևոր ավանդ է մուծել հայ ժողովրդի լուսավորության ու հայ հոգևոր արժեքների տարածման գործում և իբր այդպիսին արժանի է ամենայն գնահատանքի ու մեծարանքի:

ԱԼԲԵՐՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ



ՄԱՀ ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆԻ

Կյանքից անժամանակ հեռացավ Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի բազմամյա խմբագիր և հոգևոր ճեմարանի վաստակավոր դասախոս Արթուն Հատիտյանը: Երկար տարիներ նա անձանձրույթ նվիրումով իր իմացական կարողությունն ու ողջ գիտելիքները ի սպաս էր դրել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին իբրև Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջին Վեհափառ Հայրապետի մերձավորագույն գործակիցներից մեկը: Նրա մահը մեծ կորուստ եղավ հայ մշակութային կյանքի համար ընդհանրապես և Մայր Աթոռի համար մասնավորապես:



Արթուն Նապարի Հատիտյանը ծնվել է Կիլիկիայի Այնթապ քաղաքում, արհեստավորի ընտանիքում, 1914 թվականի մայիսի 5-ին: 1915 թվականին, մանուկ հասակում, նա իր հարազատների հետ աքսորվում է Տեր-Զոր և հրաշքով միայն ազատվելով սպանդից՝ 1918-ին վերադառնում է իր ծննդավայրը:

1920-ին, Կիլիկիայի հայության տեղահանությունից հետո, ծնողները ապաստանում են Հալեպ քաղաքում, որտեղ էլ նա ստանում է իր նախնական և միջնակարգ կրթությունը:

Ի ծնե մտավոր ընդունակություններով օժտված պատանի Հարությունը իր ազգին առավելագույնս ծառայելու կոչում զգալով իր մեջ՝ մեկնում է հայ Երուսաղեմ, Սրբոց Հակոբյանց վանք, որտեղ 1930—1935 թվականներին հոգևոր կրթություն և դաստիարակություն է ստանում Հայ Եկեղեցու մեծ դեմքերից հետո գիտնական Թորգոմ Պատրիարք Գուշակյանի շնչի տակ: Այդ տարիներին նրա սիրելի ուսուցիչներն են լինում արևմտահայ հայտնի գրականագետ և քննադատ Հակոբ Օշականը և մեծանուն արվեստաբան ու իմաստասեր Շահան Ռ. Պերպերյանը, որոնք ուսումնածարավ պատանու հոգում արմատավորում են սեր և պաշտամունք դեպի Հայաստանյայց Եկեղեցին, հայ գրականությունն ու հայ ժողովրդի հոգևոր արժեքները: Երուսաղեմի հայոց Ժառանգավորաց վարժարանում և Ընծայարանում սովորելու շրջանում նրա դաստիարակ-ուսուցիչները, տեսնելով ու գնահատելով պատանի Հարությունի արթուն միտքը, նրան վերանվանում են Արթուն:

Ազգային-եկեղեցական կայուն գիտելիքներով զինված՝ նա 1935—1946 թվականնե-

ին, որպես ուսուցիչ և գրադարանավար, աշխատում է Երուսաղեմում և Յաֆայում՝ միաժամանակ իր աշխատակցությունը բերելով Երուսաղեմի հայոց Պատրիարքարանի պաշտոնաթերթ «Սիոն» ամսագրին:

Արթուն Հատիտյանը ետեղեռնյան սերնդի այն ներկայացուցիչներից էր, որոնք Սփյուռքի ծանր պայմաններում, հավատարիմ հայ ազգային ավանդություններին, լույսով ժլիտեցին խավարը, ոգեղեն արժեքներով փոխարինեցին մեր ժողովրդի ֆիզիկական մեծ կորուստը՝ լույսով հալածելով յաթաղանի մահասփյուռ ջունչը:

Հայրենիքի կանչը հայրենասեր Արթուն Հատիտյանին բերում է իր գիրկը: 1947 թվականին նա իր հարազատների հետ ներգաղթում է Հայաստան, բնակություն հաստատում վերածնված հայ ժողովրդի նոր մայրաքաղաքում և նույն տարին աշխատանքի անցնում Երևանի Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանում որպես ավագ գրադարանավար:

1950—1955 թվականներին, իր ուսումը կատարելագործելու նպատակով, սովորում է Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտում՝ ավարտելով նրա պատմա-բանասիրական ֆակուլտետը փայլուն առաջադիմությամբ:

Հայ ժողովրդի վերածննդի հետ իր հոգևոր վերածնունդն ապրող Մայր Աթոռը կարիք ուներ մեր ազգային-եկեղեցական պատմությանը քաջածանոթ նվիրյալների: Արթուն Հատիտյանը, հիրավի, լավագույն թեկնածուներից էր: 1952 թվականից սկսած նա պաշտոնավարում է Մայր Աթոռում նախ որպես «Էջմիածին» ամսագրի խմբագրի տեղակալ, ապա որպես գլխավոր խմբագիր: Երեսուն տարուց ավելի, մինչև իր մահը, նա անընդմեջ աշխատում է Մայր Աթոռում թե՛ որպես խմբագիր և թե՛ որպես հոգևոր ճեմարանի դասախոս:

Իր կոչումն ու գիտելիքները դրսևորելու լայն ասպարեզ է բացվում Արթուն Հատիտյանի առաջ: Իր կյանքի վերջին երեսունամյակին, իր ջանասիրության շնորհիվ, նա հայ մտավորականի բացառիկ բեղուն կյանք է ունենում: «Էջմիածին» ամսագրում նա ստորագրել է շուրջ 200 հմտալից հոդվածներ և խնամված գեղեցիկ խմբագրականներ՝ նվիրված մեր եկեղեցական, ազգային և մշակութային կյանքի ամենատարբեր բնագավառներին: Ջղուտ հրապարակագրի հատու լեզվով նա պայքարում էր մեր ազգային և եկեղեցական կյանքից ներս թափանցելու միտող ապազգային խորթ ազդեցությունների և հերձվածողական մտայնությունների դեմ: Հայաստանյայց Եկեղեցու ծոցում առաջացած ներքին տագնապի առաջին օրերից սկսած նա հայրենասիրական դիրքերից հետևողական պայքար մղեց Անթիլիասի Կիլիկյան Աթոռի դեմ՝ ցույց տալով նրա մոլորությունների վտանգավորությունը մեր Եկեղեցու և ազգի համար:

Իր հեղինակության և անձնական հմայքի շնորհիվ Արթուն Հատիտյանը կարողացավ «Էջմիածին» ամսագրի շուրջը հավաքել հայ մտավորականության լավագույն ներկայացուցիչներին և Մայր Աթոռի պաշտոնաթերթը բարձրացնել իր ավագ եղբոր՝ «Արարատ» ամսագրի մակարդակին: Նրա գրչին պատկանող հոդվածներում և խմբագրականներում կարելի է գտնել մեր եկեղեցական և ազգային կյանքի վերջին մի քանի տասնամյակների կենդանի և բաբախուն վարկերակը: Նրա ջանքերի շնորհիվ Մեծ Եղեռնի 50-ամյակին, հայերեն Աստվածաշնչի տպագրության 300-ամյակին, Կոմիտաս վարդապետի ծննդյան 100-ամյակին, Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի վերաբացման 25-ամյակին և այլ հիշարժան տարեթվերին նվիրված «Էջմիածին» ամսագրի հոբելյանական բացառիկ համարները հայ մամուլի պատմության լավագույն էջերից են և անբաժանելի մասն են կազմում հայ հոգևոր մշակույթի: Իր այս արժանիքների շնորհիվ «Էջմիածին» ամսագիրը հոգեղեն սնունդ ջամբող փնտրված հրատարակություն դարձավ հատկապես սփյուռքահայ բյուրավոր ընթերցողների համար:

Արթուն Հատիտյանը ի ծնե մանկավարժ էր և հռետոր: Մեր խնկաբույր մատյաններից նա քաղել և գեղեցիկ ներդաշնակությամբ իր մեջ կուգակցում էր մատենագիտական լրջախոհությունն ու ճարտասանական բացառիկ կարողությունը:

Վեհափառ Հայրապետի՝ դեպի սփյուռքահայ թեմական վանական կենտրոններ կատարած հովվապետական ուղևորությունների ընթացքում, որպես հայրապետական շքախմբի անդամ, նա հաճախ իր բոցեղեն լեզվով հայրենասիրական կրակ է բորբոքել բյուրավոր հայորդիների հոգիներում՝ հեռու վանելով նրանցից ուծացումի ահեղ վտանգը և այդպիսով իր նպաստը բերելով հայապահպանության նվիրական գործին:

Ամբողջ երեք տասնամյակ Արթուն Հատիտյանը հոգևոր ճեմարանի հարկի տակ էլ ջանք չխնայեց գիտելիք և ոգի հաղորդելու ճեմարանի սաներին, որոնցից շատերը, որպես Հայ Եկեղեցու կինվորյալ վավակներ, իրենց ուսուցչի հետևողությամբ, բարի սերմնացաններ դարձան Սփյուռքի տարբեր գաղթօջախներում:

Արթուն Հատիտյանը անսահման սիրով

կապված էր իր հայրենի գավառին՝ Այնթապին: Որպես Այնթապի հայրենակցական միության վարչության գործուն անդամ, նա իր եռանդուն մասնակցությունն էր բերում այդ միության ծավալած հայրենաշեն գործունեությանը: «Էջմիածին» ամսագրի ընթերցողները մեծ գնահատանքով և սիրով ընդունեցին նրա «Հայ Այնթապը և իր հերոսամարտը» սրտահույզ հոդվածը:

Արթուն Հատիտյանն ապրեց գեղեցիկ և իմաստավոր կյանքով. մահկանացու մարդու համար կա՞ արդյոք ավելի գեղեցիկ կոչում. քան իր գիտակցական կյանքը ծառայեցնել իր ժողովրդի հոգևոր մշակույթի հարստացմանը և աստվածահաճո գործ կատարել:

Մայր Աթոռին մատուցած իր ծառայությունների համար Արթուն Հատիտյանը բազմիցս արժանացել է Հայոց Հայրապետի գնահատանքին: Ի գնահատություն նրա երկարամյա կրթական, մշակութային և մանկավարժական գործունեության, Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը 1978 թվականին Իր սրբատառ կոնդակով նրան շնորհել է վաստակավոր դասախոսի պատվավոր կոչում՝ այդ առթիվ պարգևատրելով նաև «Ս. Սահակ—Ս. Մեսրոպ» շքանշանով:

Բարձր է գնահատվել նաև «Էջմիածին» ամսագրի էջերում ի նպաստ խաղաղության Արթուն Հատիտյանի կատարած աշխատանքը: Սովետական Միության Խաղաղության պաշտպանության կոմիտեն 1969 թվականի մայիսի 30-ին նրան պարգևատրել է «Ժողովուրդների միջև խաղաղության պաշտպանության գործում ակտիվ մասնակցության համար» պատվոգրով:

Արթուն Հատիտյանի մահվան տխուր առիթով Հայոց Հայրապետը հանգուցյալի ընտանիքին և հարազատներին ուղղեց հետևյալ ցավակցական գիրը.

«Վաղաժամ մահը Արթուն Հատիտյանի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համար ծանր կորուստ է, վիշտ պատճառող մեր բոլորիս սրտերին:

Արթուն Հատիտյանը իր եկեղեցագիտական լուրջ պատրաստությամբ, իր հրապարակագրի և հրապարակախոսի տաղանդով, իր նվիրվածությամբ մեր Եկեղեցու և վերածընված Մայր Հայրենիքի հիմնական շահերին, իր աշխատանքի բացառիկ կորովով անփոխարինելի մի աշխատակից էր Մայր Աթոռիս և անձամբ Մեզ համար, մոտ երեք տասնամյակներ շարունակ, հատկապես Մեր գահակալության առաջին օրերից սկսյալ, իբրև խմբագիր Մայր Աթոռիս պաշտոնաթերթի, իբրև դասախոս հոգևոր ճեմարանի և իբրև գործակից Գերագույն Հոգևոր Խորհրդի աշխատանքների և խորհրդական Կաթողիկոսի:

Շատ ափսոս, որ նրա կյանքի օրերը այսքան անժամանակ ընդհատվեցին, անողոք մի հիվանդությամբ, սուգի մատնելով նրա ընտանիքը և Մայր Աթոռիս ողջ անձնակազմը, մեզ բոլորիս:

Մեր խոր ցավակցությունն ենք ներկայացնում Ձեզ, վշտահար Տիկին Հատիտյան, և Ձեր բոլոր հարազատներին, հայցելով որ բարին Աստված Ձեզ մխիթարի Սուրբ Հոգով:

Հարգանք և լույս և օրհնություն հեգ Արթունի անմոռաց հիշատակին:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

2 փետրվար 1983 թ.»

Փետրվարի 6-ին, կիրակի օրը, Էջմիածնի Մայր տաճարում, Հայոց Հայրապետի նախագահությամբ, կատարվեց մասնավոր հոգեհանգիստ Արթուն Հատիտյանի հոգու խաղաղության համար՝ նրա հարազատների, սգակիր բարեկամների և ընկերների ներկայությամբ:

Մայր Աթոռի ողջ միաբանությունը և պաշտոնեությունը խոր երախտագիտությամբ կհիշեն վաստակավոր մտավորականի և Հայ Եկեղեցու անձնվեր ու հավատարիմ զավակի սլայծառ անունն ու գործը:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:



ՍՈՒՐԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Ամերիկահայ հայտնի գրող Սուրեն Միհրանի Մանվելյանը (1906) 1915 թ. եղեռնից հետո վարել է թափառական կյանք, ունեցել է իր ոդիսականը և ի վերջո ապաստան է գտել ԱՄՆ-ում, Նյու Յորքում:

Նա մամուլում հանդես է եկել հոդվածներով, պատմվածքներով, առանձին նշանավոր դեմքերի մասին իր գրած կենսագրականներով, հուշ-տպավորություններով, թատերգություններով, բավմաթիվ թարգմանություններով և հոդվածներով: Նա միաժամանակ պաշտոնավարել է Ամերիկայի հայոց առաջնորդարանում (Նյու Յորք) որպես դիվանապետ, մի ծանր ու պատասխանատու պարտականություն, որ ձեռնհասությամբ և բարեխղճությամբ վարել է 20 տարի շարունակ:

Ս. Մանվելյանը 30-ական թվականներին գրել է պատմվածքներ, որոնցից մի մասը տպագրվել է Նյու Յորքում հրատարակվող «Հայաստանի կոչնակում»: Այդ պատմվածքներից մեկը, որը վերնագրված է «Հավկիթ տի քսիմ ճակտիդ», մեծ ընդունելություն է գտել ընթերցողների մեջ:

Անվանի վիպասան Տիգրան Կամսարականը, կարդալով այդ նորավեպը, հեռավոր Ֆրանսիայից՝ Փարիզից, 1938 թ. նոյեմբերի 10-ին «Կոչնակի» խմբագիր Հովհաննես Ավագյանին ուղղած իր նամակում գրել է. «Ո՞վ է Սուրեն Մանվելյանը: «Հավկիթ տի քսիմը» ստորագրողը ապագա հայ տաղանդավոր վիպասան մը կը հայտնե ինքզինք: Կենթադրեմ, որ երիտասարդ մըն է: Ի՞նչ դիտելու բնական կարողություն, պատմելու շնորհ, հոգեբանություն. իր նորավեպը իրավունք ուներ իմ գրվածքես առաջ անցնելու Ձեր թիվին մեջ, այնքան հուզիչ ու մարդկայնորեն խորունկ է ան: Սրտագին շնորհավորություններս իրեն Ձեր միջոցավ»*:

Այսպես է կնքում անվանի գրողը երիտասարդ հեղինակին և ուղեգիր տալիս նրան դեպի հայ գրականություն:

Այսպես, Ս. Մանվելյանն սկսում է իր երթը Սփյուռքի հայ գրականության մեջ՝ որոշ ժամանակ բանավոր կերպով աշխատակցելով Բոստոնի «Պայքար» լրագրի «Խիսք և խոհ» ենթավերնագրով սյունակին՝ Վահան Զուրկենց ստորագրությամբ: Հետագայում «Պայքարի» մեջ լույս տեսած իր նորավեպերն ու պատմվածքներն ամփոփում է «Բարակ լարեր» խորագրով ժողովածուում: Ժողովածուն լույս է տեսնում 1946 թ. Սիրան-Միհրան ստորագրությամբ: Նույն թերթում երկու տարի շարունակ նա ղեկավարել է «Երիտասարդ Հայաստանի մեջ» մշտական բաժինը, տեղյակ պահելով ընթերցողին Հայաստանի անցուդարձին՝ դարձյալ Սիրան-Միհրան ծածկանունով:

Առաջին հավաքածուն լույս ընծայելուց հետո Ս. Մանվելյանը շարունակում է իր գրական գործունեությունը: Երեք տարի անց, 1949 թ. հրատարակվում է նրա «Արգավանդ ակոսներ» գիրքը դարձյալ Բոստոնում:

Հեղինակի երրորդ հատորը՝ «Գդալ մը շաքարը», տպագրվում է բավական ուշացումով, 1965 թ. Երուսաղեմում: Հետագայում, թեև նա շարունակում է ստեղծագործել և տպագրվել մամուլում, սակայն նյութապես հնարավորություն չի ունենում առանձին հատորով լույս ընծայելու իր գրվածքները, ուստի կազմում է առանձին հավաքածուներ, որոնցից մեկը խորագրում է «Իրիկվան ժամանց», իսկ մյուսը՝ մի այլ վերնագրով: Երկու ժողովածուներն էլ, մաքրագիր վիճակում, ներկայումս գտնվում են գրականության և արվեստի թանգարանում, հեղինակի հարուստ ու բովանդակալից ֆոնդում, որի վավերագրերի քանակը հասնում է շուրջ 2000-ի:

---

* «Արևմտահայ գրողների նամակների», 1972 թ., էջ 86:

Ս. Մանվելյանն կբաղվել է նաև թատրերգությամբ, գրել է ինքնուրույն պիեսներ, ինչպիսիք են՝ «Թող ուլածն ըլլա», «Սարդարապատ», «Ներսես Շնորհալի» և «Վարդանանք» գործերը, որոնցից առաջին երկուսը բեմադրվել են:

Ս. Մանվելյանը մեծ նշանակություն է տվել թատրոնին, նրա դաստիարակչական դերին:

Այդ իսկ պատճառով նրա ջանքերով սփյուռքահայ գաղթօջախներում բեմադրվել են նաև արևելահայ թատերագիրների որոշ գործերը: Նրան առանձնապես հրապուրել է մեծանուն դրամատուրգ Գաբրիել Սունդուկյանը: Սակայն նկատի ունենալով, որ նրա գրած պիեսների թիֆլիսահայ բարբառը անհասկանալի կլինի սփյուռքահայ ունկընդրին՝ նա արևմտահայերենի է վերածել հեղինակի «Պեպոն», «Խաթաբալան», «Քանդած օջախը», որոնք և բեմադրվել են Սփյուռքի հայկական բեմերում:

Ս. Մանվելյանը հանդես է եկել նաև որպես թարգմանիչ: Նա թարգմանել է Ալ. Պուշկինի, Լ. Տոլստոյի, Մ. Գորկու, Ս. Սիմոնովի, Մ. Կամարովի, Վ. Սարոյանի, Մ. Սատուլիանիի, Շ. Էնդրրսընի, Ա. Հալփերրի, Ու. Ֆոլկների և ուրիշ գրողների մի շարք ստեղծագործություններ:

Նշենք նաև, որ Ս. Մանվելյանի ստեղծագործություններից մի քանիսն էլ թարգմանվել են անգլերենի ու ռուսերենի: Հեղինակի գրական ժառանգության մի կարևոր մասն էլ կազմում են սփյուռքահայ և հայրենի գրողների ու մտավորականների մասին նրա գրած հուշ-տպավորությունները, կենսագրականներն ու հոդվածները: Դրանց թվում պետք է նշել Գարեգին Հովսեփյանի, Գրիգոր Զոհրապի, Մկրտիչ Խրիմյանի, Վազգեն Ա կաթողիկոսի, Լևոն Բաշալյանի, Սողոմոն Թեհլերյանի, Հրաչ Երվանդի, Շիրազի, Վահե Վահյանի, և այլ գրողների ու արվեստագետների անունները:

Ս. Մանվելյանի ֆոնդում հետաքրքրական նյութեր կան ամերիկահայ գրականության և պարբերական մամուլի սկզբնավորության պատմության, հրատարակչության պայմանների, հայրենակցական վանական միությունների, նրանց գործունեության, տեղի մշակութային կյանքի, հոբելյանական հանդեսների և տարբեր միջոցառումների մասին, որոնց ակտիվ կազմակերպիչներից մեկն էլ ինքն է ցայսօր: Վերոհիշյալ նյութերը կարող են արժեքավոր աղբյուր հանդիսանալ ամերիկահայ գաղութի պատմությունը գրող մասնագետների համար:

Ս. Մանվելյանը խմբագրել է «Ջահ» և «Կամք» պարբերականները և «Հայաստանյայց Եկեղեցի» ամսաթերթը: Նա նաև Նյու-Յորքում հրատարակվող «Նոր գիրի» խմբագրության գործոն անդամներից մեկն է եղել: «Նոր գիրը» լույս էր տեսնում անվանի գրող, Թլկատինցու սիրելի աշակերտ Բենիամին Նուրիկյանի խմբագրությամբ, 1936—1954 թթ.: Խմբագրության կազմում էին Ա. Անդրեասյանը, Ա. Գլըճյանը, Վ. Մալխասյանը և ուրիշներ:

Թե որքան բեղմնավոր է Ս. Մանվելյանի գրական ժառանգությունը, երևում է նրա կազմած մատենագիտական ցանկից, որը գտնվում է գրականության և արվեստի թանգարանում պահպանվող նրա արխիվային ֆոնդում:

Հարուստ է արձակագրի նամակագրությունը: Նրա գրած և ստացած նամակների թիվն անցնում է 1000-ից: Նա նամակներ է ստացել բազմաթիվ անվանի գրողներից, մտավորականներից, բարձրաստիճան հոգևորականներից և այլ անձերից: Դրանց թվումն են Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը, Ե. Ազատյանը, Մ. Աթմաճյանը, Ա. Անդրեասյանը, Հ. Ասատուրյանը, Զ. Գալեմքյարյանը, Շնորհք Պատրիարք Գալուստյանը, Ա. Գլըճյանը, Վ. Դավթյանը, Մ. Թումաճանը, Հ. Ժամկոչյանը, Ս. Կապուտիկյանը, Ա. Հայկազը, Մանուկյանները, Վ. Մավյանը, Բ. Նուրիկյանը, Հ. Շալյանը, Շահան Նաթալին, Լ. Չորմիսյանը, Ա. Սահինյանը, Օ. Սարգիսյանը, Սիրան Սեկան, Վահե Հայկը, Շ. Սահոնքյանը և բազմաթիվ այլ հեղինակներ ու ծանոթ դեմքեր:

Արխիվում գտնվում են մամուլում տպագրված բազմաթիվ նյութեր նրա ստեղծագործություններից, ինչպես նաև նրա մասին գրված վանական հոդվածներ, լուսանկարների մի հավաքածու և այլն:

Ս. Մանվելյանի արխիվի երկրորդ մասը վերջերս ԱՄՆ-ից բերեց Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը, որի համար թանգարանի տնօրինությունն իր շնորհակալությունն է հայտնել ինչպես հեղինակին, այնպես էլ Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին:

ԳՈՀԱՐ ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆ



ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԱՆՑՅԱԼԻ ՄԱՍԻՆ

«Հայաստան» հրատարակչությունը վերջերս լույս ընծայեց Հայրիկ Մանուկի Մուրադյանի «Էջեր հայ ժողովրդի հերոսական անցյալից» աշխատությունը: Գրքում, հայկական, ռուսական, օտար և թուրքական աղբյուրների հարուստ վավերագրերի հիման վրա, հանգամանորեն լուսաբանված է արևմտահայության գոյամարտերի պատմությունը Վանի, Շատախի, Տարոնի, Շապին-Գարահիսարի, Սուեդիայի, Յոզգաթի, Ուրֆայի և այլ քաղաքներում ու գավառներում՝ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:

Գիրքը բաղկացած է ներածականից, 14 բաժիններից և երեք ենթաբաժիններից ու վերջաբանից:

Գրքի ներածականում հեղինակը գրում է. «Պատերազմական իրադրությունը, հայ ազգային կուսակցությունների քաղաքական կարճատեսությունը (հատկապես բնակչությանը վինված ինքնապաշտպանության չնախապատրաստելու հարցում) երիտթուրքերի համար լայն հնարավորություններ ստեղծեցին իրագործելու վաղօրոք ծրագրված իրենց հրեշավոր եղեռնագործությունը, որին վոհ գնաց շուրջ երկու միլիոն հայ բնակչություն»:

Այնուհետև Հ. Մուրադյանը սույն աշխատության մեջ, գլուխ առ գլուխ, խոսում է հայ ժողովրդի այն տառապանքների, սովի, կոտորածների և, ինչպես չէ, նաև այն ինքնապաշտպանական հերոսամարտերի մասին՝ հայկական ցեղասպանության օրերին, որ տեղի ունեցան Արևմտյան Հայաստանում ու ողջ Թուրքիայի տարածքում:

Գրքի վերջաբանում տրված են որոշ տեղեկություններ և փաստական տվյալներ սուլթան Համիդի և երիտթուրքերի եռապետության կողմից վաղօրոք ծրագրված հայկական ցեղասպանության և օտարահպատակ քրիստոնյա ժողովուրդների իսպառ բնաջնջման մասին:

Աշխատության վերջում զետեղված է հեղինակի կողմից օգտագործված գրականության, մամուլի և արխիվային նյութերի ցանկը:

Գիրքը նախատեսված է ընթերցող լայն շրջանակների համար:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՆՈՐ ԱԼԲՈՄ

Երևանի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանը և «Սովետական գրող» հրատարակչությունը «Հայկական մանրանկարչություն» ուսումնասիրությամբ լույս ընծայեցին «Դիմանկար» մեծարժեք ալբոմը՝ հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով: Ալբոմը կազմել, առաջաբանը և ծանոթագրությունները գրել է Մատենադարանի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Աստղիկ Գևորգյանը: Սույն հրատարակությունը գիտական և գեղարվեստական մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Ներկա ժողովածուն կազմված է գլխավորապես Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի հարուստ հավաքածուի ԺԱ—ԺԳ դարերի ձեռագրերից: Հեղինակն օգտվել է նաև արտասահմանում պահվող հայկական ձեռագրերի մանրամասների մասին հրատարակված նյութերից:

Ընտրված և ներկա ալբոմում զետեղված է առավել արժեքավոր 129 նկար, որոնցում պատկերված է 139 անձնավորություն: Նշված նկարների մեջ ընդգրկված են հոգևոր ու աշխարհիկ բազմաթիվ պատմական անձնավորություններ, ինչպիսիք են Ս. Սահակ Պարթևը, Ս. Մեսրոպ Մաշտոցը, Մովսես Խորենացին, Դավիթ Անհաղթը, Եզնիկ Կողբացին, Գրիգոր Նարեկացին, Ներսես Շնոր-

հալին, Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին, Թովմա Մեծոփացին, Գրիգոր Խլաթեցին, Սարգիս Պիծակը, Թորոս Տարոնացին, Ծերուն Ծաղկողը և ուրիշներ:

Աստղիկ Գևորգյանի կազմած «Դիմանկար» ալբոմը ուշագրավ հրատարակություն է և հույժ հետաքրքիր՝ արվեստասեր լայն շրջանակների համար: Ալբոմն աչքի է ընկնում պոլիգրաֆիական աշխատանքի մաքրությամբ և գունավոր նկարների բնագրային հարազատությամբ:

ՀԱՅ ԵՐԳԱՐՎԵՍՏԻ ՆՈՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1982 թվականին «Սովետական գրող» հրատարակչությունը լույս ընծայեց արվեստագիտության դոկտոր Նիկողոս Թահմիզյանի կազմած և խմբագրած «Ոսկեփորիկ» երգերի ժողովածուն: Ժողովածուի խորագիրը («Ոսկեփորիկ») բնիկ հայկական է, որ նշանակում է՝ հավվագյուտ արժեքների շտեմարան: Երգերի սույն ժողովածուն կամ, ինչպես հեղինակն է կոչում՝ Գանձարանը, կազմված է 114 հայ հոգևոր և աշխարհիկ երգերի ընտրանիից՝ իրենց նոտագրություններով:

Ժողովածուի առաջաբանում, որը գրված է երեք լեզուներով (հայերեն, ռուսերեն և անգլերեն), Ն. Թահմիզյանը համառոտակի ներկայացնում է հայ երգի պատմության ժամանակաշրջանները (Դ—Ի դարասկիզբ) և տալիս համապատասխան ծանոթություններ:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ ժողովածուն սկսվում և վերջանում է մեր ժողովրդի երկու մեծ երախտավորների՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի («Անկանիմ առաջի Քո») և Կոմիտաս Վարդապետի («Ծիծեռնակ») երգերով: Առաջին երգը Տիրոջից մեղքերի թողության աղաչանքներ են, իսկ երկրորդը՝ հայրենիքից հեռու և իր հարազատների կարոտը սրտում երիտասարդի խնդրանքն է՝ ուղղված բնության զարթոնքի ավետաբեր և ազատածին ծիծեռնակին: Այս նույն հեղինակներից զետեղված են նաև այլ գործեր:

Ժողովածուն ընդգրկում է Սահակ Պարթևի, Ստեփանոս Սյունեցու, Մովսես Խորենացու, Կոմիտաս Աղցեցու, Անանիա Շիրակացու, Հովհան Օձնեցու, Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Մագիստրոսի, Ներսես Շնորհալու, Առաքել Սյունեցու, Նաղաշ Հովնաթանի, Սայաթ-Նովայի, Ջիվանու, Տիգրան Չուխաջյանի, Կարա-Մուրզայի, Մակար Եկմալյանի և այլոց ստեղծագործությունները:

«Հոգևոր քնարերգության նմուշները,— գրում է ժողովածուի առաջաբանում Ն. Թահմիզյանը,—վերցված են անցած հարյուրամյակում Էջմիածնում վավերացված ժողովածուներից (ինչպես և մեր սեփական հրապարակումներից) և, ընդհանուր գծերով, ստուգված են ըստ միջնադարյան խազավոր ձեռագրերի: Դրանց բոլորի փոխադրությունները՝ եվրոպական ձայնանիշների, կատարել է Գանձարանիս կազմողը»:

«Ոսկեփորիկը» լավ նվեր է հայ երգասեր հասարակությանը:





ՑՈՒՑԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կոնդակի սկզբում մեղադրվում են Պոլոժենիայի սահմանափակումները: 1917 թ. երկիրը թոթափում է ցարական բռնապետության լուծը: Դժբախտաբար քաղաքական իրադարձություններն այնպիսին էին, որ հնարավոր չի եղել բարեկարգել եկեղեցին: Բայց առկա պայմանների համաձայն, Սինոդի և Դիվանի փոխարեն, Մայր Աթոռում ժամանակավորապես կազմվում է Գերագույն Հոգևոր մի Խորհուրդ, բաղկացած Մայր Աթոռի միաբան երեք արքեպիսկոպոսներից (Տ. Մեսրոպը, Տ. Խորեն և Տ. Բագրատ) և երեք եպիսկոպոսներից (Տ. Գարեգին, Տ. Զավեն և Տ. Գյուտ), ընդ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի:

Բ-րդ կետով նշվում է, որ թեմերի առաջնորդներն էլ անդամ են դառնալու Գերագույն Հոգևոր Խորհրդին և հարկ եղած դեպքում մասնակցելու են ժողովի աշխատանքներին:

Գ-րդ կետով նշվում է, որ Մայր Աթոռից Կաթողիկոսի բացակայության ժամանակ, որպես նախագահ, նրան փոխարինելու է Կաթողիկոսական Տեղակալը:

Դ-րդ՝ Հայաստանի և արտասահմանի բոլոր թեմերի կրոնական, վարչական և տնտեսական հարցերը լուծում են ստանալու Գերագույն Հոգևոր Խորհրդի կողմից:

Ե-րդ՝ Գերագույն Հոգևոր Խորհուրդն առաջին հնարավորության ժամանակ պետք է կազմակերպի ազգային-եկեղեցական ժողով, Խորհրդային Հայաստանի կառավարության թույլտվությամբ:

Սույն կոնդակով այս կարգադրությունները հաղորդվում է համայն հոգևոր դասին և հայ ժողովրդին:

Կոնդակի սկզբում գրված է.

Թ. 1.ա—Գէորգ ծառայ Յիսուսի Քրիստոսի (տըպագիր) ....

Ամենապատիւ Պատրիարքի հայոց Երուսաղէմի Տ. Եղիշէ Արքեպիսկոպոսի Դուրեան, Գերաշնորհ Պատրիարքական Տեղապահին հայոց Կ. Պոլսոյ Տ. Գէորգ Արքեպիսկոպոսի Արսլանեան, Կենտրոնական Վարչութեան Ազգային ժողովոյ Հայոց Կ. Պոլսոյ, Գերաշնորհ Առաջնորդաց, Արքեպիսկոպոսաց և Եպիսկոպոսաց, Արժանապատիւ Հոգևոր հովւաց և քահանայից և ամենայն հոգևորականաց, Թեմական խորհրդոց, վարչութեանց, հոգաբարձութեանց և խորհրդոց եկեղեցեաց հայոց, հարազատ որդւոց Մայր Աթոռոյս, ողջոյն և օրհնութիւն Հայրապետական:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 2ա.—(Հայրապետի ստորագրությունը)
Վշտալի Գէորգ Ե
Ծայրագոյն պատրիարք և Կաթոլիկոս ամենայն Հայոց
Ի 1 յունվարի 1924 ամի
ընտ տօմարիս ՌՅՀԳ
ի Հայրապետութեան Մերոյ ԺԳ ամի
յԱրարատեան Մ. Աթոռ Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ
Թ. 1:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կոնդակի սկզբում պահպանված է երեք թուղթ.

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № № Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № № Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի № № Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից, 1977 թվականի № № Գ—Ժ-ից, 1978 թվականի № № Ա-ից, Դ-ից, 1979 թվականի № № Բ-ից, Դ-ից, Զ—Է-ից, ԺԲ-ից, 1980 թվականի № № Բ—Գ-ից, Ը-ից, Ժ—ԺԲ-ից, 1981 թվականի № № Ա—Դ-ից, Է-ից, Թ—ԺԲ-ից, 1982 թվականի № № Ա-ից, Գ-ից և Ժ—ԺԲ-ից:

անգլերեն մեքենագիր մի հեռագիր (19 մայիսի 1975 թ.) ստորագրված Երուսաղեմի Տ. Եղիշե Պատրիարքից և ուղղված Տ. Վազգեն Ա. Հայրապետին ի Սոֆիա, և երկու թուղթ հայերեն գրություն խաչակիր և ասպետ Տեր Կարապետ Ավագ քահանա Պոյաճյանի կողմից:

№ 556
ՄԱՇՏՈՑ

Թերթերը՝ 142:—*Պրակները՝* 35, յուրաքանչյուրը 4-ական թերթից:—*Մեծությունը՝* 23.2×15.5×2 սմ.:—*Նյութը՝* դեղնած և կեղտոտած բարակ թուղթ:—*Կազմը՝* բաց սրճագույն լաթակազմ ստվարաթուղթ:—*Պահպանակները՝* սկզբում և վերջում երկուական թերթ վարդագույն բարակ թուղթ, որոնցից մեկին կպցված է ծաղկավոր նախշուն թուղթ:—*Վիճակը՝* բավարար:—*Գրությունը՝* միասյուն:—*Դատարկ թղթերը՝* 1ա—1բ, 2բ—3բ, 29ա—29բ, 31բ—32ա:—*Տողերը* 21:—*Գծումները՝* թուղթն ինքնին գծավոր է:—*Գիրը՝* շլագիր և տեղ-տեղ էլ հայկական նոր խազագրության նոտաներ (թթ.. 16բ—21բ, 44ա—45ա, 47բ, 58բ, 59բ, 61ա, 63բ—64ա, 68բ—73ա, 75ա—76բ, 94ա—101ա, 105բ, 106բ—107ա, 111ա, 112բ—116ա, 117բ—118ա, 119ա, 126ա—128բ, 129բ, 133ա—141բ:—*Զարդազրություն՝* չունի, սակայն ձեռագրում կան հետևյալ լուսանկարները՝

1. (սկզբում) մի կտաւր, տղամարդ, կին, հրեշտակ, արծիվ, ավետարան:
2. (թ. 2ա—ի դիմաց) Ս. Իսահակ հայրապետ, Ս. Մեսրովպ վարդապետ, Ս. Ներսես Շնորհալի, Ս. Մովսես Խորենացի:
3. (թ. 4ա-ի դիմաց) Քրիստոսի խաչից իջեցումը:
4. (թ. 10ա-ի դիմաց) Հիսուս խաչափայտի վրա:
5. (թ. 16ա-ի դիմաց) Ս. Մատթեոս ավետարանիչ:
6. (թ. 26ա-ի դիմաց) Օծումն Խրիմյան Մկրտիչ Կաթողիկոսի ամենայն հայոց:
7. (թ. 28բ-ի դիմաց) Մայր Տաճարի հայրապետական Աթոռը:
3. (թ. 35բ-ի դիմաց) Սրբական վայրեր—Խոր-Վիրապ:
9. (թ. 36ա-ի դիմաց) Հիսուս օրհնում է մանուկներին:
10. (թ. 58ա-ի դիմաց) Ս. Ղուկաս ավետարանիչ:
11. (թ. 68ա-ի դիմաց) Ս. Հովհաննես ավետարանիչ:
12. (թ. 88ա-ի դիմաց) Եվ իբրև մտին ի տուն տեսին զՄանուկն հանդերձ Մարեմավ մարբն:
13. (թ. 105ա-ի դիմաց) Տնկյաց Աստված զդրախտն հեդեմ ընդ արևելս:
14. (թ. 112ա-ի դիմաց) Ս. Մարկոս ավետարանիչ:
15. (թ. 122ա-ի դիմաց) Տիրամայրը և Որդին:—*Գրիչը՝* Վահրամ եպիսկոպոս Մանկունի (1846—1920): —*Պատվիրատուն՝* անհայտ: —*Ժամանակը՝* 1890-ական թթ.:—*Վայրը՝* շատ հավանաբար Կ. Պոլիս: —*Ծանոթագրություն՝* ձեռագիր Մաշտոցն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.: Ժամանակին այն պատկանել է Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Նշանյանին, որ 1942 թ. նվիրել է Տ. Հայկազուն վարդապետ Աբրահամյանին, որին պատկանել է մինչև իր կյանքի վախճանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 2ա.— ՀԱՅՐ ՄԱՇՏՈՑ
Որ է ծիսարան Հայաստանեայց
Ուղղափառ Ս. Եկեղեցւոյ.
Յորում պարունակին զՀայրապետական
Օծումն, զՁեռնադրութիւն
Եպիսկոպոսի, և զՄիւռոնօրհնութիւնն:
(Սույն Մաշտոցն արտագրված է Վաղարշապատում տպված երեք գրքերից)
Թ. 4ա.—Կանոն ձեռնադրութեան և օծման Կաթողիկոսի և Հայրապետի ամենայն հայոց.
Ի Վաղարշապատ
ի տպարանի Սրբոյ Կաթուղիկէ
Էջմիածնի.
1876—ՌՅԻԵ:
Թ. 30ա.—Մաշտոց ձեռնադրութեան Եպիսկոպոսի ըստ ծիսից և արարողութեանց Առաքելական և Ուղղափառ Եկեղեցւոյ Հայաստանեայց.
Վաղարշապատ
ի տպարանի Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի.
1876—ՌՅԻԵ:
Թ. 88ա.—Կանոն օրհնութեան Սրբալոյս Մեռոնին
ի Վաղարշապատ
ի տպարանի Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի.
1876—ՌՅԻԵ:
Թ. 89ա.—Անուանք նիւթոց Սրբալոյս Մեռոնի:
Թ. 133ա.—Քարոզ Տեառն Ներսիսի:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

(Ձեռագրի սկզբում, գրքի շապիկի վրա գրված է)
Գիրք (տպագիր) որ կոչի Հայր Մաշտոց (ձեռագիր):
Թ. 86բ.—Յիշեսջիք զՎահրամ Եպիսկոպոս
Մանկունի զտպագրական ուղղագրիչ
Մաշտոցիս յարժանահայց յաղօթս:
Թ. 141 բ.— Վերջ
Յիշեսջիք զՎահրամ Եպիսկոպոս
Մանկունի զտպագրական ուղղագրող
սորին յարժանահայց յաղօթս:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Ձեռագրի սկզբում, պահպանակի վրա գրված է)
Նուէր Ամեն. Մեսրոպ Պատրիարքէն*
1942
Հայկազուն վրդ. Աբրահամեանին:

* Ծանոթ.—Այս գիրքը ամբողջութեամբ մեքենագրուած, ու երկրորդ պատճէն(ը) Մեսրոպ-Պատրիար-

քին տրուած (է), որուն փոխարէն այս ձեռագիրը մեպի նուիրած է Հ. վ. Ա.

(այսինքն Հայկազուն վրդ. Աբրահամյան)

Թ. 31ա.—*Թափորը կը կալնուի*

Երգեցիկ դպիրք.

Մեծ խաչ, խաչվառք, լապտերք.

Սաղմոսասացք՝ սպիտակ շապիկ, գօտի, ի ձեռին՝ Սաղմոս.

Դռնապանք՝ սպիտակ շապիկ, ի ձեռին՝ բանալի.

Ընթերցողք՝ ծիրանի շապիկ, ի ձեռին Մարգ. գիրք.

Երդմնեցուցիչք՝ շապիկ ծաղկեայ դիպկէ, ի ձեռին՝ Մաշտոց.

Ջահընկալք՝ կարմիր շապիկ, ի ձեռին՝ աշտանակ վառեալ մոմեղինօք, բաժակցու, շանիճ և կոնք դատարկ, և դաստարակ վուսովք.

Կիսասարկաւագունք՝ շապիկ դիպակ նեղթեվանի, բակուրար, ի գիրկս՝ գիրք առաքելականք, խորհրդատետր, ի ձեռին՝ սկիհ և մաղվման դատարկ.

Սարկաւագունք՝ շապիկ դեղնագոյն, ուրար ձախ ուս, աւետարան ի գիրկս և ի ձեռին՝ բուրվառ.

Քահանայք՝ վգեստաւորեալ, ի ձեռին մասնատուի սքողեալ.

Եպիսկոպոսք՝ վգեստաւորեալ, ի ձեռին խաչ և գաւազան:

Թ. 32բ.—2 վոյգ մոմակալներ.

2 վարդապետք՝ կարմիր շուրջառներով, մին Հայրապետական խաչն և միւսն գաւազանն ի ձեռին.

4 բուրվառակիր սարկաւագներ՝ սպիտակ մետաքսեայ շապիկներով, և երկար ուրարներով ուսընտանութիւն.

2 սարկավագներ Հայրապետական քողը տանող.

Հայրապետը՝ իր պաշտօնեաներով խարտաւիլակ, քըշոցակիրք,

Նուիրեալք՝ հարաւային դասին ետև պատրաստ կը գտնուին երկու իշխաններ և երկու աղքատներ՝ մոմեր ի ձեռին:

Թթ. 2ա, 4ա, 30ա, և 88ա.—(Տ. Մեսրոպ Պատրիարքի էլիպսաձև կնիքը, 2.2×1.8 սմ. չափերով, որի վրա գրված է հետևյալը.)

Մեսրոպ Եպսկպս. Նշանեան

1924:

№ 557

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Թերթերը՝ 32:—*Պրակները*՝ 1:—*Մեծությունը*՝ 21×16.7×0.4 սմ.:—*Նյութը*՝ միջակ հաստությամբ սպիտակ մաքուր թուղթ:—*Կազմը*՝ վարդագույն բարակ ստվարաթուղթ, որի վրա նկարված են երկու հրեշտակներ, որոնք պահած են Հովհաննու Կարապետի գլխատված գլուխը: Վերևում տպված է հետևյալը «Ժառանգաւորաց վարժարան և ընծայարան—Երուսաղէմ», իսկ ներքևում «Անուն. Դասարան, Առարկայ, Թուական, Թիւ, Տպարան Սրբոց Յակոբեանց»:—*Պահպանակներ*՝ չունի:—*Վիճակը*՝ լավ:—*Գրությունը*՝ միասյուն:—*Դատարկ թղթերը*՝ 29բ—32բ:—*Տողերը*՝ 20:—*Գծումները*՝ թուղթն ինքնին գծավոր է:—*Գիրը*՝ ջղագիր:—*Զարդագրություն* չունի:—*Գրիչը*՝ Արշակ սարկավագ (այժմ Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալըստյանը, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք):—*Ժամանակը*՝ 29 նոյեմբերի 1933 թ.:—*Վայրը*՝ Երուսաղեմ:—*Ծանոթագրություն*՝ ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թթ. 1ա—11բ.—Գլուխ ԺԱ—Գլուխ ԻԲ:

Թթ. 12ա.—Աւետարան ըստ Մատթէոսի: Ներածութիւն:

Թ. 22ա.—Աւետարան ըստ Մարկոսի:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(Ձեռագրի շապիկի վրա գրված է)

Արշակ Սարկաւագ

Ընծայարան Բ.

Ներածութիւն Ն(որ) Կտ[ա]կ[արան] ի

1933, Նոյ(եմբեր) 29

(թիւ) 2:

№ 558

ՔԱՐՈԶԽՕՍՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 64:—*Պրակները*՝ 1:—*Մեծությունը*՝ 21.1×16.7×0.7 սմ.:—*Նյութը*՝ միջակ հաստությամբ սպիտակ մաքուր թուղթ:—*Կազմը*՝ վարդագույն բարակ ստվարաթուղթ, որի վրա նկարված են երկու հրեշտակներ, որոնք պահած են Հովհաննու Կարապետի գլխատված գլուխը: Վերևում տպված է հետևյալը «Ժառանգաւորաց վարժարան և ընծայարան—Երուսաղէմ», իսկ ներքևում «Անուն. Դասարան, Առարկայ, Թուական, Թիւ, Տպարան Սրբոց Յակոբեանց»:—*Պահպանակներ*՝ չունի:—*Վիճակը*՝ լավ:—*Գրությունը*՝ միասյուն:—*Դատարկ թղթերը*՝ 1բ, 2բ, 3բ, 4բ, 5բ, 6բ, 62ա—64բ:—*Տողերը*՝ 20:—*Գծումները*՝ թուղթն ինքնին գծավոր է:—*Գիրը*՝ ջղագիր:—*Զարդագրություն*՝ չունի:—*Գրիչը*՝ Արշակ սարկավագ (այժմ Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալըստյան, Կ. Պոլսի հայոց պատրիարք):—*Ժամանակը*՝ 25 հոկտեմբերի 1934 թ.:—*Վայրը*՝ Երուսաղեմ:—*Ծանոթագրություն* ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.—Քարոզխօսութիւն: Գիւտ:

Թ. 9բ.—Գիւտ (օրինակներ):

Թ. 10բ.—II Մտածումներու խուզարկութիւնը:

Թ. 13բ.—Մտածումներուն ընտրանքը:

Թ. 17բ.—Բ—Յօրինումը:

Թ. 20ա.—Կայական կարգը (l'ordre statique).

Թ. 24ա.—III Ուժական կարգ (l'ordre dynamique):

Թ. 29ա.—IV Սիրոյ կարգը:

Թ. 33բ.—Բ. Մաս:

Ճառին կանական մասերը
I Յառաջաբան:
Թ. 37ա.—II Ճառին բաժանումը:
Թ. 42ա.—III Վերջաբանը:
Թ. 45ա.—Դ—Ատենաբանական ընդլայնում:
Թ. 49ա.—II Ընդլայնման օրէնքները:
Թ. 53բ.—Հասարակ տեղիքները:
Թ. 56ա.—Շրջում և Ատենաբանական ձևեր:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(Ձեռագրի շապիկի վրա գրված է)
Արջակ Սարկաւագ
Ընծայարան Գ.
Քարոզխօսութիւն
Հոկտ (եմբեր) 25, 1934
(թիւ) 1:

№. 559
ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 32:—*Պրակները՝* 1:—*Մեծությունը՝* 21.2×16.2×0.4 սմ.:—*Նյութը՝* միջակ հաստությամբ սպիտակ մաքուր թուղթ:—*Կազմը՝* վարդագույն բարակ ստվարաթուղթ, որի վրա նկարված են երկու հրեշտակներ, որոնք պահած են Հովհաննու Կարապետի գլխատված գլուխը: Վերևում տպված է հետևյալը. «Ժառանգաւորաց վարժարան և ընծայարան-Երուսաղէմ», իսկ ներքևում «Անուն, Դասարան, Առարկայ, Թուական, Թիւ, Տպարան Սրբոց Յակոբեանց»:—*Պահպանակներ՝* չունի:—*Վիճակը՝* լավ:—*Գրությունը՝* միասյուն:—*Դատարկ թղթեր՝* 24բ, 25բ—27բ, 31բ—32բ:— *Տողերը՝* շղագիր:— *Զարդագրություն՝* չունի: —*Գրիչը՝* Արջակ սարկավագ (այժմ Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալստյան, Կ. Պոլսի հայոց պատրիարք): —*Ժամանակը՝* 5 հունվարի 1934 թ.:—*Վայրը՝* Երուսաղեմ:—*Ծանոթագրությունն՝* ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ.. 1ա.— (Շար [ունակութիւն] Ս. Պատարագի Խորհուրդին) :
Թ. 2բ՝—Անարժանութիւն:
Թ. 6բ.—Ամուսնութեան խորհուրդ:
Թ. 8բ.—Ձեռնադրութիւն:
Թ. 9ա.—Օծումն հիւանդաց:
Թ. 10բ.—Ածպաշտութիւն և ծէսք:
Թ. 12ա.—Բարեպաշտական ծէսք Եկեղեցւոյ:
Թ. 12բ.— (Շար. Ձեռնադրութեան) :
Թ. 17ա.—Յարութիւն մեռելոց:
Թ. 22բ.—Դատաստան:
Թ. 25ա.—Առանձնական դատաստան:
Թ. 28ա.—Բարեխօսութ (իւն) Սրբոց:
Թ. 29ա.—Խորհրդական Ածաբանութիւն:
Թ. 30ա.—Հոգևոր կեանք, կատարելութիւն, Սրբութիւն:
Ներքին կեանք:
Աղբիւրները և մեթոտը:
Թ. 30բ.—Դպրոցներ հոգեկանութեան:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(Ձեռագրի շապիկի վրա գրված է)
Արջակ Սարկաւագ
Ընծ (այարան) Բ.
Աստուածաբանութիւն
Յունվար 5, 1934
(թիւ) 3:

№. 560
ՀՈՎՈՒԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 32:—*Պրակները՝* 1:—*Մեծությունը՝* 21.1×16.7×0.4 սմ.:—*Նյութը՝* միջակ հաստությամբ սպիտակ մաքուր թուղթ:—*Կազմը՝* վարդագույն բարակ ստվարաթուղթ, որի վրա նկարված են երկու հրեշտակներ, որոնք պահած են Հովհաննու Կարապետի գլխատված գլուխը: Վերևում տպված է հետևյալը. «Ժառանգաւորաց վարժարան և ընծայարան—Երուսաղէմ», իսկ ներքևում «Անուն, Դասարան, Առարկայ, Թուական, Թիւ, Տպարան Սրբոց Յակոբեանց»: —*Պահպանակներ՝* չունի:—*Վիճակը՝* լավ:—*Գրությունը՝* միասյուն:—*Դատարկ թղթեր՝* չկան:—*Տողերը՝* 20:—*Գծումները՝* թուղթն ինքնին գծավոր է:—*Գիրը՝* շղագիր:—*Զարդագրություն՝* չունի:—*Գրիչը՝* Արջակ սարկավագ (այժմ Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալստյան, Կ. Պոլսի հայոց պատրիարք) :—*Ժամանակը՝* 10 հոկտեմբերի 1934 թ.:—*Վայրը՝* Երուսաղեմ:—*Ծանոթագրություն՝* ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.—Հովուական Ածաբանութ (իւն) :
Թ. 4բ.—Գլուխ Բ—Հոգիներ կրթելու գործը:
Թ. 6բ.—Հաւատամք:
Սրբութեամբ:
Հոգիներու սերտումը:
Թ. 7ա.—Այցելութիւններ:
Թ. 8բ.—Ուսուցանել:
Թ. 9ա.—Մանր ուսմունք կամ Քրիստոնէական:
Թ. 13ա.—Քարոզը տան մէջ:
Թ. 15բ.—Գլուխ Է—Սրբացում:
Թ. 17բ.—Ամուսնութիւն:
Թ. 18բ.—Ապաշխարութիւն:
Թ. 23ա.—Այցելութիւն հիւանդաց:
Թ. 27ա.—Կարգը:
Թ. 29բ.—Վարչական գործ:
Թ. 31բ.—Մանկանց առաջնորդութիւն:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(Ձեռագրի շապիկի վրա գրված է)

Արշակ Սարկաւագ
Ընծայարան Գ.
Ածաբանութ (ին) հովուական
Հոկտ (եմբեր) 10, 1934
(թիւ) 1:

№. 561
ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԸ

Թերթերը՝ 56:—*Պրակները՝* 1:—*Մեծությունը՝* 20.6×16.2×0.4 սմ.:— *Նյութը՝* դեղնած բարակ թուղթ:—*Կազմը՝* վարդագույն բարակ ստվարաթուղթ, որի առաջին երեսի վրա տպված է «Bedes» Exercise Book, Name, Subject, Beyt-ul-Mandes Library, Jerusalem, Palestine:—*Պահպանակներ՝* չունի:—*Վիճակը՝* լավ:—*Գրությունը՝* միասյուն:—*Դատարկ թղթերը՝* 12բ—13ա, 24բ, 43ա—56բ:—*Տողերը՝* 19:—*Գծումները՝* թուղթն ինքնին գծավոր է:—*Գիրը՝* շղագիր:—*Զարդագրություն՝* չունի:—*Գրիչը՝* Արշակ սարկավագ (այժմ Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալստյան, Կ. Պոլսի հայոց պատրիարք):—*Ժամանակը՝* 1936:—*Վայրը՝* Երուսաղեմ:—*Ծանոթագրություն՝* ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.—Նոր Կտակարանի կանոնը:
Թ. 6ա.—Բնագիրը և բնագրային քննախօսութիւն Ն (որ) Կտակարանի:
Թ. 14բ.—Առաքելական Հայրերու Քրիստոսաբանութիւնը:
Թ. 25ա.—Փրկչախօսութիւն (Soteriology):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

(Ձեռագրի շապիկի վրա գրված է)
Արշակ Սարկաւագ
Ն (որ) Կտակարանի կանոնը և Ք (րիստոս) աբան-(ու) թ (իւն):
Թ. 24ա.—Ծովան:
Թ. 42բ.—9 հոկտ (եմբեր) 1936:
Ծովան:

№. 562
ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 30:—*Պրակները՝* 1:—*Մեծությունը՝* 20.7×16.3×0.2 սմ.:—*Նյութը՝* դեղնած բարակ թուղթ:—*Կազմը՝* վարդագույն բարակ ստվարաթուղթ, որի առաջին երեսի վրա տպված է հետևյալը «Դպրեվանք Կաթողիկոսութեան հայոց Կիլիկիոյ, Անթիլիաս—Լիբանան: Աշակերտին անունը, Դասարանը, Տետրակին նիւթը, Տարեշրջան, Տպարան Դպրեվանուց»:—*Պահպանակները՝* չունի:—*Վիճակը՝* լավ:—*Գրությունը՝* միասյուն:—*Դատարկ թղթերը՝* ձեռագրի բոլոր թղթերի կռնակը դատարկ է, բացի 7բ, 24բ և 25բ թղթերից:—*Տողերը՝* 20:—*Գծումները՝* թուղթն ինքնին գծավոր է:—*Գիրը՝* շղագիր:—*Զարդագրություն՝* չունի:—*Գրիչը՝* Շնորհք վարդապետ (այժմ Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալստյան, Կ. Պոլսի հայոց պատրիարք):—*Ժամանակը՝* 21 ապրիլի 1942 թ.:—*Վայրը՝* Անթիլիաս (Լիբանան):—*Ծանոթագրություն՝* ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.—Խորհուրդք Եկեղեցւոյ:
Թ. 8ա.—Դրոշմ:
Թ. 10ա.—Ապաշխարութիւն:
Թ. 19ա.—Հաղորդութիւն:
Թ. 23ա—Պասկ կամ ամուսնութիւն:
Թ. 24բ.—Օծումն հիւանդաց:
Թ. 25ա.—Ձեռնադրութիւն:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(Ձեռագրի շապիկի վրա գրված է)
Ածաբանութիւն
21—4—1942

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Նույն տեղում) Այժմ Շնորհք Եպի (ս) կ (ոպոս):

(Շարունակելի)



«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(ФЕВРАЛЬ—МАРТ 1983 г.)

1. Энциклика Католикоса Всех Армян Вазгена I о назначении архимандрита Гарегина Нерсисяна патриаршим заместителем епархии Араратской (стр. 3-4).

2. Энциклика Католикоса Всех Армян Вазгена I об утверждении избрания архимандрита Григориса Бунпатяна предстоятелем армянской епархии Аргентины (стр. 5-6).

3. Слово Католикоса Всех Армян Вазгена I на праздничном торжестве Вартанидов в резиденции Католикосата, 10 февраля 1983 года (стр. 7—9).

4. Обмен телеграммами между Эчмиадзинским Католикосатом и Киликийским престолом по случаю смерти католикоса Киликийского престола Хорена I (стр. 10—12).

5. **Диакон Вардкес Мкртчян**—Торжество св. св. Вартанидов и тезеименитство Католикоса Всех Армян Вазгена I в первопрестольном Эчмиадзине, 10 февраля 1983 г. (стр. 13—18).

6. Защита дипломных работ в Духовной Академии, 24 марта 1983 г. (стр. 19—22).

7. Церковная хроника первопрестольного Эчмиадзина за февраль-март месяцев (стр. 23—26).

8. Проповедь, произнесенная в кафедральном соборе в Вербное воскресенье, архиепископом Шагэ Аджемяном, 27 марта 1983 г. (стр. 27—29).

9. Проповедь, произнесенная в кафедральном соборе архимандритом Степаносом Чакаляном, 6 марта 1983 г. (стр. 30—32).

10. **Диакон Смбат Аристакесян**—Период Великого поста и его таинство (исследование) (стр. 33—36).

11. **Вачаган Оганесян**—Св. Григорию Просветителю (стихотворение) (стр. 37—38).

12. Представители армянской епархии Аргентины в первопрестольном Эчмиадзине с 20 по 28 марта 1983 г. (стр. 39).

13. Вербное воскресенье в церкви св. Саркиса в г. Ереване, 27 марта 1983 г. (стр. 40—41).

14. Визит епископа Георга Серайдаряна, предстоятеля армянской епархии Грузии, в Дамаск, с 28 января по 16 февраля 1983 г. (стр. 42—45).

15. Полное годовое собрание Комитета по культурным связям с зарубежными армянами, 10 марта 1983 г. (стр. 46—48).

16. **Епископ Нерсес Позапалян**—Визит делегации действующих церквей в Советском Союзе в Великобританию, 10—21 января 1983 г. (стр. 49—50).

17. **Архимандрит Анания Арабаджян**—Богословские взгляды Егишэ (исследование) (стр. 51—54).

18. Толкование молитвы «Отче наш» блаженного Егишэ православного архимандрита и непобедимого философа (оригинал) (стр. 55—58).

19. **Георг Багдишян**—Перевод сочинения «История Армении» Киракоса Гандзакеци с грабара на современный армянский язык (исследование) (стр. 56—62).

20. «История Армении» Киракоса Гандзакеци (отрывки из оригинала) (стр. 63—66).

21. **А. Х. Тораманян**—Из истории строительной деятельности армян Молдавии (исследование) (стр. 67—71).

22. **Альберт Аракелян**—По случаю 100-летия со дня рождения заслуженного культурного деятеля Вагана Тер-Аракеляна (стр. 72—76).

23. Кончина редактора журнала «Эчмиадзин» Артуна Атитяна (стр. 77—79).

24. **Гоар Азнавурян**—Литературное наследие армянского писателя в Америке Сурена Манвеляна (исследование) (стр. 80—81).

25. **Володя Абрамян**—Арменоведческие издания в Армении и за границей (стр. 82—83).

26. **Нубар Микаэлян**—Список новых рукописей, полученные в первопрестольном Эчмиадзине (№№ 556—562) (стр. 84—88).



„ETCHMIADZIN"
OFFICIAL JOURNAL OF HOLY ETCHMIADZIN
(FEBRUARY-MARCH 1983)

1. The encyclical of His Holiness Vasken I to Reverend Garegin Nersissian, on the occasion of his designation as vicar of the Araratian Patriarchal diocese (pages 3—4).

2. The encyclical of His Holiness to Reverend Grigoris Booniatian to confirm his election as primate of the diocese of Argentinian Armenian (pages 5—6).

3. The speech of His Holiness in the Patriarchal Residency, on the occ sion of the feast of Vardananiz, 10th February 1983 (pages 7—9).

4. Cables exchanged between the Catholicossate of All Armenians of Holy Etchmiadzin and the See of Cilicia, on the occasion of the death of Catholicos Khoren I, the heir of the See of Antelias (pages 10—12).

5. **Deacon Vardges Mkertchian**—Description of the feast of St. Vardananiz and of the anniversary of His Holiness' name in the Mother See, 10th February 1983 (pages 13—18).

6. Presentation of theses in the Spiritual Seminary, 24-th March 1983 (pages 19—22).

7. Divine liturgy services and sermons delivered in the Holy cathedral and description of church festivities in the Holy See during the months of February and March (pages 23—26).

8. The sermon of Archbishop shahe Ajamian delivered in the Holy Cathedral of St. Etchmiadzin on the day of the Palm- Sunday's feast, 27-th March 1983 (pages 27—29).

9. The sermon of Reverend Stepanos Tchakalian delivered in the Holy Cathedral of St. Etchmiadzin, 6-th March 1983 (pages 30—32).

10. **Deacon Sempat Aristagessian**—The period of Lent and its sacrament (study)—(pages 33—36).

11 **Vachagan Hovhannissian**—To the Patriarch of Saint Gregory the Illuminator (poetry)—(pages 37—38).

12. The representatives of the Armenian diocese of Argentina in thé Holy See, 20—28-th March 1983 (page 39).

13. The feast of Palm-Sunday in the church of St. Sarkis at Yerevan, 27-th March 1983 (pages 40—41).

14. The visit of Bishop Gevorg Seraydarian primate of the Armenians of Georgia, at Damascus, from 28-th January to 16-th February 1983 (pages 42—46).

15. The annual meeting of the Committee of cultural relation with the Armenians of abroad, 10-th March 1983 (pages 46—48).

16. **Bishop Nerses Bozabalian**—The visit to Great Britain of the delegation of Soviet Union's working churches, 10—21st January 1983 (pages 49—50).

17. **Reverend Ananya Arabadjian**—The theological glances of Eghishe (study)—(pages 51—54).

18. The interpretation of the Lord's prayer by Eghishe (in modern armenian language)—(pages 55—58).

19. Gevorg Baghdishian—The translation to the modern Armenian language of Kirakos of Gantzag's work „The History of the Armenians" (study)—(pages 59—62).

20. **Kirakos of Gantzag**—„The History of the Armenians" (paragraphs from the modern Armenian translation)—(pages 63—66).

21. **A. Kh. Thoramanian**—From the history of the constructional activity of Moldavia's Armenians (study)—(pages 67—71).

22. **Albert Arakelian**—„Vahan Ter-Arakelian: the eminent writer and singer" (on the occasion of the 100-th anniversary of his brithday)—(pages 72—76).

23. The death of Arthoon Hadidian, editor of the journal „Etchmadzin" (pages 77—79).

24. **Gohar Aznavoorian**—The literary heritage of Sooren Manvelian, an American-Armenian writer (study)—(pages 80—81).

25. **Volodya Abrahamian** — Armenological publications in Armenia and abroad (pages 82—83).

26. **Nubar Mikaelian**—The list of the newly received manuscripts of the Mother See of Holy Etchmiadzin under the numbers of 556—562 (pages 84—88).

„ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(FEVRIER-MARS 1983)

1. Dans l'Encyclique du 21 mars 1983 de Sa Sainteté Vasken Ier, le Révérend Père Garéguine Nersessian, membre de la congrégation du Saint-Siège d'Etchmiadzine, est nommé vicaire patriarcal du diocèse d'Ararat (pages 3—4).

2. Par Son Encyclique du 25 mars 1983, Sa Sainteté a ratifié l'élection du Père Grigoris Bouniatian comme prélat du diocèse des Arméniens d'Argentine (pages 5—6),

3. Allocution de Sa Sainteté prononcée le 10 février 1983 dans la grande salle de la résidence patriarcale à l'occasion des festivités consacrées à la commémoration de la Journée de saint Vardan (pages 7—9).

4. Echange de télégrammes entre le Saint-Siège d'Etchmiadzine et le Siège du Catholicossat de la Grande Maison de Cilicie à l'occasion du décès de Khorène Ier, Catholicos du Siège de Cilicie à Antélias (pages 10—12).

5. **Diacre Vartguès Mekertchian**—„La célébration de la Journée de saint Vardan au Saint-Siège d'Etchmiadzine (10 février 1983)—(pages 13—18).

6. Soutenance de thèses à l'Académie de Théologie du Saint-Siège d'Etchmiadzine le 24 février 1983 (pages 19--22).

7. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours des mois février—mars 1983 (pages 23—26).

8. Sermon de l'archevêque Chahé Ajamian prononcé le 27 mars 1983 dans la cathédrale de Saint-Etchmiadzine à l'occasion du Jour des Rameaux (pages 27—29).

9. Sermon du Père Stépanos Tchakalian prononcé la 6 mars 1983 dans la cathédrale de Saint-Etchmiadzine (pages 30—32).

10. **Diacre Sembat Aristakessian**—„Le saint temps de Carême et son mystère "(étude)—(pages 33—36).

11. **Vatchagan Hovhannissian**—„A saint Grégoire l'Illuminateur" (poème)—(pages 37—38)

12. Visite au Saint-Siège d'Etchmiadzine des représentants du diocèse des Arméniens d'Argentine du 20 au 28 mars 1983 (page 39).

13. 27 mars 1983, célébration du Jour des Rameaux dans l'église saint Sarkis à Erévan (pages 40—41).

14. Visite au diocèse des Arméniens de Damas de l'évêque Guévorg Séraïdarian, prélat des Arméniens de Géorgie, du 28 janvier au 16 février 1983 (pages 42—45).

15. Information sur la session annuelle du Comité des liens culturels avec les Arméniens de la Diaspora (pages 46—48).

16. **Evêque Nersès Bozabalian**—„Visite à la Grande-Bretagne de la délégation des Eglises en U.R.S.S." (du 10 au 21 janvier 1983)—(pages 49—50).

17. **Père Anania Arabadjian**—„Les vues théologiques de l'historien Yéghiché" (étude)—(pages 51—54).

18. L'interprétation de l'oraison dominicale par l'historien Yéghiché (traduction du texte original en arménien moderne)—(pages 55—58).

19. **Guévorg Baghdichian**—Compte rendu de la traduction en arménien moderne de l'ouvrage de Kirakos Gandzakétsi intitulé „Histoire des Arméniens" (pages 59—62).

20. Quelques extraits de l'Histoire de Kirakos Gandzakétsi traduits du texte original en arménien moderne (pages 63—66).

21. **A. Kh. Toramanian**—Etude sur l'histoire de l'activité architecturale des Arméniens de Moldavie (suite et fin)—(pages 67—71).

22. **Albert Arakélian**—„Vahan Ter-Arakélian: l'homme de lettres et le chanteur" (à l'occasion du centenaire de sa naissance)—(pages 72—76).

23. Décès de M. Artoun Hatitian, rédacteur en chef de la revue „Etchmiadzine" (pages 77—79).

24. **Gohar Aznavourian**—„L'héritage littéraire de Sourène Manuélian, écrivain arménien des Etats-Unis d'Amérique" (étude)—(pages 80—81).

25. **Volodia Abrahamian**—„Publication des études arménologiques en Arménie et dans la Diaspora" (pages 82—83).

26. **Noubar Mikaélian**—Index des manuscrits reçus au Saint-Siège d'Etchmiadzine et placés sous les numéros 556—562 (pages 84—88).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Տ. Գարեգին վարդապետ Ներսիսյանին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ նշանակելու մասին 3

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Տ. Գրիգորիս վարդապետ Բունիաթյանի ընտրությունը հաստատելու մասին իբրև արգենտինահայոց թեմի առաջնորդ 5

Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի խոսքը Վեհարանում Վարդանանց տոնի հանդիսությանը 7

Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսության և Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի միջև փոխանակված հեռագրեր՝ Անթիլիասի Աթոռի գահակալ Խորեն Ա-ի մահվան առթիվ 10

ՎԱՐԴԳԵՍ ՍՐԿ. ՄԿՐՏՉՅԱՆ—Սրբոց Վարդանանց տոնակատարությունը և Վեհափառ Հայրապետի անվանակոչության տարեդարձը Մայր Աթոռում 13

Ավարտուճառերի բանավոր պաշտպանություն հոգևոր ճեմարանում 19

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 23

Տ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանի քարոզը՝ արտասանված Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում Ծաղկազարդի տոնի օրը 27

Տ. Ստեփանոս վարդապետ Չաքալյանի քարոզը՝ արտասանված Ս. Էջմիածնի Մայր տաճարում 30

ՍՄԲԱՏ ՍԱՐԿԱՎԱԳ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ—Մեծի պահոց շրջանը և նրա խորհուրդը . 33

ՎԱՉԱԳԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ—Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հայրապետին . . . 37

Արգենտինայի հայոց թեմի ներկայացուցիչները Մայր Աթոռում 39

Ծաղկազարդի տոնը Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցում 40

Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանի այցը Դամասկոս 42

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի տարեկան լիագումար ժողովը 46

ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՉԱՊԱԼՅԱՆ—Սովետական Միությունում գործող եկեղեցիների պատվիրակության այցը Մեծ Բրիտանիա 49

ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԱԲԱՋՅԱՆ—Եղիշեի աստվածաբանական հայացքները . . 51

Եղիշեի Տերունական աղոթքի մեկնությունը (աշխարհաբար թարգմանություն) . . 55

ԳԵՎՈՐԳ ԲԱՂԴԻՇՅԱՆ—Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն հայոց» երկի աշխարհաբար թարգմանությունը 59

Կիրակոս Գանձակեցի, «Հայոց պատմություն» (հատվածներ աշխարհաբար թարգմանությունից) 63

Ա. Խ. ԹՈՐԱՄԱՆՅԱՆ—Մոլդավիայի հայերի շինարարական գործունեության պատմությունից 67

ԱԼԲԵՐՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ—Վահան Տեր-Առաքելյան 72

Մահ Արթուն Հատիտյանի 77

ԳՈՀԱՐ ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆ—Սուրեն Մանվելյանի գրական ժառանգությունը . . . 80

Հայագիտական հրատարակություններ 82

Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի 84

«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата . . . 89

„Etchmiadzin" official journal of Holy Etchmiadzin 90

„Etchmiadzine" organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine 91

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է տպագրության 15.04.1983 թ.: Ստորագրված է տպագրության 19.05.1983 թ.:
Տպագրական 5,75 մամուլ, թուղթ 60×84¹/₈, պատվեր 334:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1983 թ.

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԱԿԱԴԵՄԻԱ